7	26	Ք.	Կար. — Հց. Ե. Յիմու: — Հհց. Բ. օր Ծննդեան, և Զ. Յիմու. և Ստեփանոսի նախակային:	8	12
8	27	Գ.	Եւ. — Հց. և Հհց. Առաքելոցն Պետրոսի և Պողոսի: — Յաւ Գ. օր Ծննդեան և Սուեդիան և Յաւ:	9	13
			Պ Առ. Քու. Ժ. 18, ր. 28:		
			Ցուրտ և խոնաւ:		
9	28	Գ.	— Հհց. Դ. օր Ծննդեան և Որդւոցն Որոտման՝ Յակովայ առաքելոյն, և Յովհաննու Աւետարանչին, եւս Հց. որոց և Բարեկենդան պահոց Ծննդեան:	10	14

21<sup>0</sup> Տար. Գահ. Ու մպերք Ա.

Թագ. Խալիոյ.

10 29 ԵՇ. — Հց. Պահք: — Հհց. Ե. օր  
Ծննդեան:

11 30 ԵՇ. — Հց. Ս. օր պահոց. Ծննդ:  
— Հհց. Զ. օր Ծննդեան: Եւ  
Քարսղի Հայրապետին և եղբօր  
նորա Գրիգորի Նիւսացւոյն և  
Սեղբեստրսի Հռովմայ Հայ-  
րապետին և աբբայ Եփրեմի  
Խուրին Աւարւոյ:

12 31 ԱԽՐ — Հց. Բ. օր պահց. Ծննդ:  
— Հհց. Ե. օր Ծննդեան:



## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Բ.

ԵՐԵԽԵԼԻ ԱՆՁԻՑ ԻՆՉ ԱՇԽԱԲՀ

Կ Ա Ս Ե Ղ Ծ Մ Ա Յ Ե Լ	ա շ խ ա ր հ ի մ ի ն չ ե ւ ց ա յ ժ մ	7324
Կ Ե Ր Ե Լ Ե Ղ Ե	.	5062
Գ Բ Ի Տ Ո Յ Ա Պ Ա Կ Ե Ո Յ	.	3539
Ը Ե Բ Ո Ր Ե Ե Լ Բ Ի Վ Ա Ն Ե Ջ Ի Ն Բ Ո Ւ Մ Ֆ Ի	.	3143
Ը Ե Բ Ե Ն Ե Ե Լ Ք Ր Ի Ս Ո Ւ Մ Ի Բ	.	1899
Կ Ա Խ Ա Տ Ա Խ Ո Ր Ե Ե Լ Թ Ա Պ Է Ղ Ե Ո Ւ Ի	ա ռ ա մ է լ յ ի ն ե ւ Ս ա ն Ե խ ս ո յ կ ո ւ օ թ ի ն	1851
Կ Ե Բ Ե Ն Ե Ե Լ Ա Գ Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ա Ո Ր Հ ի	.	1642
Լ Ո Ւ Ա Ո Ր Ո Ր Ե Ե Լ Հ ա յ ո ց ի ձ ե ռ ն Գ ր ի գ ո ր ի Լ ո ւ ս ա ո ւ ո ր չ ի	.	1596
Ը Ե Բ Ո Ր Ե Ե Լ Ա Վ Ի Ճ յ ի մ ա ն ծ ն ի ո ւ հ ա ս ա ս է ա լ կ ա յ Հ ա յ ր ա պ է տ ո ւ թ ի ն ա մ ե ն ա յ ն Հ ա յ ո ց	.	1595
Ը Ե Բ Ե Գ Ե Ր ա կ ա ն Ճ ո ղ ո վ յ ն Ն ի կ ի ո յ	.	1574
Գ Բ Ի Տ Ո Յ Խ ա չ ի շ բ Ք ր ի ս ո ւ մ յ Ե ր ո ւ ս ա ղ է մ	.	1572
Ի Հ ե ղ ի ն ե ա յ Բ ա զ ո ւ ն ե ո յ	.	1570
Ը Ե Բ Ե Գ Ե Ր ա կ ա ն Ճ ո ղ ո վ յ ն Կ Պ ո լ ս ո յ	.	1518
Գ Բ Ի Տ Ո Յ Հ ա յ ե ր է ն ա յ բ ո ւ թ ե ն ի ց ի ձ ե ռ ն	.	1463
Մ ե ւ ր ո պ ա յ	.	1468
Ը Ե Բ Ե Գ Ե Ր ա կ ա ն Ճ ո ղ ո վ յ ն Ե փ ե ս ո ւ մ	.	1468
Բ ա ր գ մ ա ն ո ւ թ ե ն է Ա ս ո ւ ա ծ ա ւ ո ւ ն շ գ ր ո ց	.	1466
Ի Հ ա յ	.	1466
Ը Ե Բ Ո Ր Ե Ե Լ է տ ո ւ ա ր ի ն Հ ա յ ո ց	.	1348
Ի յ ա յ ս ն ե լ ը Ո Խ ա չ ի ն ի Վ ա ր ա զ ա յ	.	1246
Ա կ զ բ ն ո ւ ո ր ո ւ թ ե ն է հ օ ր ը ա զ ա ո ւ ո ր ո ւ թ ե ա ն ն Տ ա ն կ ա ց յ օ ս մ ա ն ա յ Ա ռ ա ջ ն ո յ	599	

ՅԱՇԱՏԱԿԱՐԱՆ

ի զիւտոյ կրդմնագուցին	597
ի զիւտոյ վասողին	570
ի զիւտոյ թնդանօքին	519
ի զիւտոյ տպագր. ի Գերմանիա	459
ի տիրելոյ Օսմանեանց Կ. Պոլսոյ ի Սուլ-	
թան Մէհմէմէս Բ.է	446
ի զիւտոյ Ամերիկայի	407
ի զիւտոյ անուանոր ժամացուցի	398
ի սկզբնաւորութենէ տպագրութեան ի	
Հայս	332
ի զիւտոյ ըոգեւարձ մեթենայից	209
ի զիւտոյ օդապարիկ զնույն	117
ի զիւտոյ Եւանացի հեռագրին	107
ի զիւտոյ ըոգենաւ ին ի Ֆրանսս	104
ի զիւտոյ պատուասի մարմնոյ	99
ի զիւտոյ վիմագրութեան	97
ի հաստատութենէ Ս. Փրկչի Ազգային Հի-	
ւոնդանոցին Հայոց որ ի յեկեղ-Գուլէ	
Գլեզնեան Յարութիւն Ամիրայէ	69
ի մահուանէ Գլեզնեան Յարութիւն Ա-	
միրայի	65
ի հաստատութենէ Քարանթինայի	61
ի զիւտոյ լուսանկարի	60
ի հաստատութենէ Օսմանեան օրէնսդրու-	
թեան ի կրտսանէ	60
ի զիւտոյ Ելեբետական հեռագրութեան	50
ի բացմանէ պարանոցին Սիւէքի	30
ի բացմանէ Արեւելեան Ուբանոցին ի	
Պրուսա	24
ի բացմանէ պարանոցին Կորնթոսի	6

Ա.Ա.ՐԱՐԱՆ

Ա.Ա.ՐԱՐԱՆ

ՅԱՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑԻ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ

1899



# ՕՍՄԱՆԵԱՆ

## ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼ.Թ.Ա.Վ.Ք

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

ԹԱ-Ա-Ի-Ն-Ի-Ն-Լ  
Հ-Ի-Ֆ-Ե-Ր-Ի-Ֆ-Ի-Դ-

1.	Օսման Ա. Ղազի	699	1291
2.	Օրխան Ա. Ղազի	726	1327
3.	Մուրաս Ա. Ղազի	761	1360
4.	Պայտագիտ Ա. Երլըրըմ	794	1389
5.	Մէհէմմէտ Ա. Զելէպի	816	1413
6.	Մուրաս Բ. Ղազի	824	1421
7.	Մէհէմմէտ Բ. Ֆարին	855	1454
8.	Պայտագիտ Բ. Ղազի	886	1481
9.	Մէլիմ Ա. Եալուզ	918	1512
10.	Սիւլէյման Ա. Գանունի	926	1520
11.	Մէլիմ Բ. Ղազի	974	1566
12.	Մուրաս Գ. Ղազի	983	1574

13.	Մէհէմմէս Գ. Ղազի	1003	1595
14.	Ահմէս Ա. Ղազի	1012	1603
15.	Մուսքածան Ա.	1026	1617
16.	Օսման Բ. Կէնճ	1028	1618
17.	Մուրատ Դ. Ղազի	1032	1622
18.	Խպրահիմ Ա.	1049	1640
19.	Մէհէմմէս Դ. Ղազի	1058	1648
20.	Ջիլէյման Բ.	1099	1687
21.	Ահմէս Բ.	1102	1691
22.	Մուսքածան Բ.	1106	1695
23.	Ահմէս Գ. Ղազի	1115	1702
24.	Մահմուտ Ա. Ղազի	1143	1730
25.	Օսման Գ.	1168	1754
26.	Մուսքածան Գ. Ղազի	1171	1757
27.	Ապշիլ Համիտ Ա. Ղազի	1187	1773
28.	Սէլիմ Գ. Ղազի	1203	1789
29.	Մուսքածան Գ.	1222	1807
30.	Մահմուտ Բ. Ատիլ	1223	1808
31.	Ապշիլ Մէհիտ Ա. Ղազի	1255	1839


  
**Ա Պ Ի Լ Թ Ա Ն**  
**ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ Բ.**  
**Խան Ղազի**  
**ԲԱՐԵԽՆԱՄ ԽՆՔՆԱԿԱԼ**

34<sup>րդ</sup> Կայսր Օսմաննեան հարսութեան եւ 28<sup>րդ</sup> Կայսր յառ մանէ Կոստանդնուպոլսոյ, որդի Առլիքան Ապշիլ Մէհիտ Խանի, ծնեալ ի 16 տապան 1258 (10/22 սեպտեմբեր 1842), գահակալէ ի 11 տապան 1293 (19/31 օցոս. 1876) :

## ԱԽԳԱՆԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

ՄԵծ հրամանատար (Մագեյն Հիւմայուն միւշիրի) —  
ԳԱԶԻ ՕՍՄՈՒ ՓԱՇԱ:

ՄԵծ ներքինապետ (Տար-իւս-սասատէթ իւշ-շէրիֆէ  
աղասը) — ԳԱԶԻ ԱՊԱ:

Մատակարար Կայսերական ընտանեաց (Հարէմի  
Հիւմայուն մէսարիֆան նազըրը եւն.) — ՀԱԶԻ  
Ա.ԹԻՖ Է.ՖԻՆԵՑԻ:

Առաջին Սենեկապետ (Սէր գուրէնայը Հազրէթի  
Շէրիֆիարի) — ՀԱԶԻ ԱԼԻ ՊԼ.Ց:

Երկրորդ Սենեկապետ — ՆՈՒՐԻ ՓԱՇԱ:

Առաջին Քարտուղար (Մագեյնը Հիւմայուն պաշ  
բետիսիպի) — ՀԱ.ՍԱՆ. Թ.Ա.ԾՈՒՆ. ՊԼ.Ց:

Նախարար Կայսերական գտնձուն (Խազինէի Խաս-  
սափի Շահաննէ նազըրը) — ՍԱ.Գ.Ը. ՅՈՎ.ՀԱՆՆ.Է  
Է.ՖԻ.Ն.ՑԻ:

Առաջին Թիկնապան (Տամաս վէ Սէր եավէրը Հազ-  
րէթը Շէրիֆիարի) — Մ.Հ.ԾՄ.Ց. ՓԱՇԱ:

Առաջին Աղօթառաց (Խմամբէ Էվգէլ Հազրէթը Շէրի-  
ֆիարի) — ԲԱ.Ը.Տ. Է.ՖԻ.Ն.ՑԻ:

ՄԵծ Արարողապետ եւ Կայս. Թարգման (Թէշի-  
ֆամը ումումից նազըրը վէ Տիվանը Հիւմայուն  
Թէրճէմանը) — ՍԻՒՆԻՐ ՓԱՇԱ:

ԲԺՂԻԱՊԵՏ Կայսեր (Սէր Թափիպը Հազրէթի Շէրի-  
ֆիարի) — ՄԱ.Վ.ԾՈՒՆ.ՆԻ ՓԱՇԱ:

Անձնական գրազիր (Քեամիսի խուսուսի Հազրէթի  
Շէրիֆիարի) — ՀԻՒՍԼ.ՑԻՆ ԳԵԱԶԻՄ ՊԼ.Ց:

Հրամանատար պալատականաց եւ նուազածուաց  
պալատան (Խատէմէի խասա վէ Միւզիպայի  
Հիւմայուն ֆէրիզի) — ՍԻՒԼ.ՑՄԱՆ ՓԱՇԱ:

Բ. Թիկնապան (Մայէթի Շահաննէ էրքեանը հար-  
պիյէ միւշիրի) — ՇԱ.ԳԻՐ ՓԱՇԱ:

Ախոռապետ Արքունի (Սօ ապլլ ամիրէ միւտիրի) —  
ՓԱ.Ի.Գ. ՓԱ.ՇԱ:

## ՆԱԽԱՐԱՐՔ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ

ՄԵծ Եպարքու (Սարտազամ) — ԽԱ.Վ.Ի. ԾԻ.Ց.Ա.Թ  
ՓԱ.ՇԱ:

Կրօնապետ (Շէլլ-իւլ-իսլամ) — Ճ.Մ.Ս.Լ.Կ.Տ.Տ.Ի  
ՖԼ.Ց.ՑԻ:

Նախարար Արդարութեան եւ Կրօնից (Ատլյէ վէ  
Մէզմանիպ նազըրը) — Ա.Գ.Տ.Վ. Թ.Ա.Ծ.Մ.Ա. ՓԱ.ՇԱ:

Ապարագետ (Սէրասէր) — Բ.Հ.Ա. ՓԱ.ՇԱ:

Նախարար Ծովային գործոց (Պահիյէ նազըրը) —  
ՀԱ.ՍԱ.Ն. ՀԻՒՍԼ. ՓԱ.ՇԱ:

Նախագահ Պետական Խորհրդոց (Շուրայը Տէվէթ  
թէրիոի) — ՍԱ.Յ.Ի. ՓԱ.ՇԱ:

Նախարար Արտաքին գործոց (Խարիճիյէ նազըրը) —

ԹԷՎ.ՖԻԳ. ՓԱՇԱ:

Նախարար Ներքին գործոց (Տախիլիէ նազըրը) —  
ՄԻՍՏՈՒՀ ՓԱՇԱ:

Վերատեսուչ Թանդանօթարանի (Թօփհանէ միշլիի) —  
ԶԷՎԻ ՓԱՇԱ:

Նախարար Կրօնավատկան կալուածոց (Էվզաֆը  
Հիւմայուն նազըրը) — ԱՎ.Ի.Պ ՓԱՇԱ:

Նախարար Հանրային կրթութեան (Մէարիֆ նազըրը) —  
ԶԻՒՀՏԻ ՓԱՇԱ:

Նախարար Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց  
(Թիճարէթ վէ նաֆա'ն նազըրը) — ՄԱՀՄՈՒ  
ՑԻԱԼԵՑՑԻՆ. ՓԱՇԱ:

Նախարար Ելեւմտական գործոց (Մալիյէ նազըրը) —  
ՐԷՇԱՏ ՊԷՅ:

Խորհրդական Եպարքութեան (Միւսթէշարը Սատ-  
րը Ըլի) — ԹԷՎ.ՖԻԳ. ՓԱՇԱ:

### ՄԵԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՒ

Քաղաքապետ Մայրաքաղաքիս (Շէնիր էմինի) —  
ՐԸՑԱՆ ՓԱՇԱ:

Նախարար Ռոտիկանութեան (Զապթիյէ նազըրը) —  
Շ.ՖԻԳ. ՊԷՅ:

Վերատեսուչ Նաւահանգստին (Լիման րէխի) —  
ՀԱՄՏԻ ՓԱՇԱ:

Վերատեսուչ Մաքսատանց (Բուռումաթ էմինի) —  
ՆԱԶԻՅ ՓԱՇԱ:

Վերատեսուչ Կալուածական տոմարաց (Տէֆէրի  
Խաղանի նազըրը) — ԱՎ. Ի.Պ ՓԱՇԱ:

Վերատեսուչ Թղթատարութեան եւ Հեռազրութեան  
(Թօման վէ Թէլէկրաֆ նազըրը) — ՀԻՒՆԵԹԻ  
ՀԱՄԵՊ ՊԷՅ:

Վերատեսուչ Անտոնաց, Հանրաց եւ Երկրագործ.  
(Օբանն վէ Մուսէն վէ Ջրաաթ նազըրը) — Ա-  
ԼԻՄ ՄԻՒՀԱՄԻ ՓԱՇԱ:

Ռոտիկանութեան Պէշիքթաշի (Պէշիքթաշ մուհաֆըզը  
վէ Փօլիս միւտիրի) — ՀԱՃ. ՀԱՍԱՆ ՓԱՇԱ:

Ռոտիկանութեան Կ. Պոլսոց (Սթամպօլ Փայխ միւ-  
տիրի) — Լ-ՏՀԱԿ.Մ ՓԱՇԱ:

Կառավարիչ Բերայի (Պէյօղու Միւթէսարըֆը) —  
Լ-ՆՎ.ԷՐ ՊԷՅ:

Կառավարիչ Խւակիւտարու (Խւակիւտար միւթէսա-  
րըֆը) — ՍԱ.ՊՐ. ՊԷՅ:

Հրամանատար Ջրհանկրաց (Իթքայիէ ալայը լզո-  
մանտանը) — ԶԻՉԻՆԻ ՓԱՇԱ:

—————

ԹՂԹԱՏՄՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԾԳԻՔ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Օսմանեան Պետութեան բղբատարներով ցամաքէն եւ ծովէն փոխադրութած եւ մինչեւ 15 կրամ ծանրութիւն ունեցող իւրաքանչիւր նամակի համար մեկ դահ. կ'առնուի, 15է մինչեւ 30 կրամ ծանրութիւն ունեցող իւրաքանչիւր նամակի համար՝ եւկու դահ, և այսպէս իւրաքանչիւր 15 կրամ կամ պակաս ծանրութեան յաւելման համար մեկ դահ, եւ ո կ'առնուի ի. Դարձեալ իւրաքանչիւր արձանագրեալ (Ք-ՀՀՀ-ՌՀՀ-), նամակէ սովորական նամակի զինէն զատ մեկ դահ, կ'առնուի արձանագրութեան համար եւ 10 փարա եւս՝ կրնեոյ համար.

**Ծառօթ.** — Բացառութիւն են ծովեզեւեայ տեղերը, ուր դրկուած նամակներու ծանրութեան իւրաքանչիւր 15 կրամին եւ ասոր կոռուփիներուն համար 20 փարա կը վճարուի, ողբեկանով ։ Խակ եթէ արձանագրեալ ըլլայ նամակը, սովորական զինէն զատ 20 փարա կը վճարուի արձանագրութեան համար, 10 փարա ալ կնեոյ համար։

Ծովային բղբատարով փոխադրութած եւ մինչեւ 75 կրամ ծանրութիւն ունեցող լրացրի, զրբի եւ տեսրակի, նաև աշխարհացոյցի, կարուածագրի (ՀԻ-ՀՀՀ-Բ), պատկերի, կայսերական հրովարտակի եւ վաճառականական տոմարներու համար 10 փարա կ'առնուի, եւ իւրաքանչիւր 75 կրամ ծանրութեան յաւելման համար 10 փարա եւս կ'առնուի. Սակայն ցամակային բղբատարով փոխադրութած եւ մինչեւ 50 կրամ ծանրութիւն ունեցող այս տեսրակ իւրերու համար 10 փարա կ'առնուի, 50էն մինչեւ 100 կրամ ծանրութիւն ունեցաներու համար՝ 20 փարա. Եւ անկէ վեր իւրաքանչիւր 50 կրամ կամ պակաս ծանրութեան յաւելման համար 10 փարա եւս կ'առնուի. Սյո տեսակ իւր մը ծանրութիւնը 2,000 կրամէ աւելի ըլլալու չէ.

**Ծառօթ.** — Ծովային բէ ցամակային բղբատարով դրկուած մինչեւ 30 կրամ ծանրութեամբ լրացրի, նմոյշի (ՀԻ-ՀՀՀ-Ն), եւ լն. համար 5 փարա կ'առնուի բացառաբար։

Ծովային բղբատարով փոխադրութած եւ մինչեւ 250 կրամ ծանրութիւն ունեցող անարժեք նմոյշերու իւրաքանչիւր 75 կրամին համար 10 փարա կ'առնուի. Խակ եթէ այդ նմոյշեներու ծանրութիւնը 250 կրամէ աւելի ըլլայ, իւրաքանչիւր 50 կրամի համար կ'առնուի 20 փարա. Սակայն

ցամաբային թղթատարով փոխադրուած եւ մինչեւ 250 կրամ ծանրութիւն ունեցող այդ տեսակ նմոյեցներու իւրաքանչիւր 50 կրամին համար կ'առնուի 10 փարա, եւ երէ անոնց ծանրութիւնը 250 կրամէ առելիք ըլլայ, իւրաքանչիւր 50 կրամի համար կ'առնուի 20 փարա. Թօքթատարին յանձնուած նմայցներու ծանրութիւնը 2,000 կրամէ առելիք ըլլալու չէ.

Նամակի մը վրայ երէ Օսմ. թղթադրում զբանուի, Օսմ. Պետութեան ո եւ է մէկ կողմէն կրնայ դրկուիլ Եզիպտոս, Եւրոպա եւ Ասերիկա. Մինչեւ 15 կրամ ծանրութեամբ նամակի մը համար պարտի վճարուիլ մէկ դան., եւ մինչեւ 50 կրամ ծանրութեամբ լրագրի համար՝ 10 փարա.

### ՀԵՌ.ԳՐԱԿԱՆ ԿԱ.ՆՈԽԾ.ԳԻՐ

Մի եւ նոյն կուսակալութեան, կոմ երկու տարբեր կուսակալութիւններու հեռագրական երկու կայաններու միջեւ բառուած հեռագրի մը իւրաքանչիւր բառի զինն է 40 փարա.

### ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

S. S. ՄԿՐՏԻՉ Ա.

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

ԾՍ.ՅՐԱ.ԴՈՅՆ ՊԱՏԻՒԱՐՔ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

S. S. ՅԱՐՈՒԹԻՒՆՔ

ՄՐԲԱՋԱՆ

ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ

## ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

## S. ՄԱՂԱՔԻԱ

#### Ա. ԱՐՔԵՊԻԱԿՈԹՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԿԱ

66

ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱԶԴԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գրիգորիս Արքեպ., Յովհաննէսեան Ա. Ատենապէս  
Մելիսսեղեկ » Մուշտէանց  
Վահրամ Եպիսկ. Մանկունի Բ. Ատենապէս  
Գաբրիէլ Ծ. Վ. բդ. Ճեղանիշնեան  
Գէորգ հիքինեան  
Եղիշէ Դուռեան Ա. Ատենապէսիր  
Յովսէփ Այլազեան Բ. Ատենապէսիր  
Գաբրիէլ Ա. Քհն. Խանճեան

Խաչառուր Ա. Քինյ.	Տէր-Գ.աբրիկէլեան
Կարապէս	Սերեան
Կարապէս	Սոնտալեան
Յովհաննէս	Հանկարգեան

47847200-00215000

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յարութիւն	Փառա	Տատեան Ա.	Ատենապէս
Ստեփան	»	Արալսնեան Բ.	Ատենապէս
Գարբիէլ	Էմենի	Նորատոնկեան	
Գրիգոր	»	Խըրքեան	
Հյիան	»	Զայեան Ա.	Ատենապիր
Տիգրան	»	Եռևուն Ժեան	
Զարեհ	»	Տիլայէր	
Գրիգոր	»	Դարակէօղեան	
Սենեկերիմ	»	Մանուկեան	
Միհրան	»	Սերեան Բ.	Ատենապիր
Կարապէս	»	Գափամանեան	
Մկրտիչ	»	Ասասեան	
Սեպուհ	»	Տէմիրնիպատեան	
Տիգրան	»	Տէր-Հերենեան	

ՀՐՈՎՄՔԱԿԱՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԵՏՐՈՍ Ժ. ԱԶԱՐԵԱՆ**

ԿԱՅՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐք

**ՏՄ.Ն. ԿՐԻ.ԽԵ.Խ.Խ.Խ.**

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ,

Կարողիկոս-Պատրիարք, Գաներէց

**ԱՆԴԱՄՔ**

Սահակ ԾՎ.ր. Ճիզիկնեան

Պօղոս Գեր. Գագրիկեան

Հ. Գրիգորի ԾՎ.ր. Մերնաննեան

Հ. Մեսրոպ Ծաղիկեան

Ցովուէփ Ռոբոսեան

Ցովուէփ Աբիկեան

Օսեփան » »

Արուէն » Խուռուժեան

Հ. Եղիա Վ.րդ. Քիլնեան

Բաննարաս » Սամաննեան

Կոմիտաս » Խոկէնտէրեան, Ասեղպիր.

Վ.ԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կարողիկոս-Պատրիարք, Գաներէց

**ԱՆԴԱՄՔ**

Հ. Եղիա Վ.ր. Քիլնեան

Նիկողայոս » Պագչեան

Եավէր Բաւս Թընկըր

Կարապետ Էֆ. Պարագաւ

Կոմիտաս » Բէմէզեան

Գրիգոր » Քիլքէլեան

Վիշէն » Գաստայեան

Մկրտիչ » Էնեսէրնեան

Ստիակ » Զիլթօսեան

Գրիգոր » Սինապէան

Թովմաս » Թէրզեան

Սիմոն » Թընկըր

Կոմիտաս Վ.րդ. Խոկէնտէրեան, Ասեղպիր.

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԹՈՒՐՔԻՈՅ

**Վ.ՍԵՄ. Ա. ՅԱԿՈԲ Էֆ. ՊՈՅԱՃԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՊԵՏ ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ ԹՈՒՐՔԻՈՅ**

Կարապետ էֆ. Սենեքերիմեան  
*Քարտուղար բղակցուրեանց*

Գարբիկ էֆ. Մինասեան  
*Քարտուղար արձանագրութեանց*

Առաքել էֆ. Կոօգիւալէօլիքեան  
*Գործակատար*

**Ա.Օ.Ժ.Ա.ՄԱՆԱԿԵԱՅ Վ.Ա.ՐՀԱԿԱՆ ԺՈՂՈՎ.**

Պատ. Աւետիս Ասատուրեան  
Բրօժ. Յակոբոս էֆ. Ճէնիզեան  
Պատ. Ատէփան Չորիկեան  
Արշակ էֆ. Շնաւոնեան  
Յավիաննես էֆ. Մինասեան  
Պետրոս էֆ. Տօնեան  
Կարապետ էֆ. Սենեքերիմեան

ԵԿԵՂ.ԵՑԱԿԱՆ ՀՈԳԵԼՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ


ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԲԻՒԹԱՆԻՈՅ  
Վեր. Ա. Կ. Ասատուրեան, Նախագահ  
» Ա. Պետիկեան, Քարտուղար

ԿԵՂ.ՐՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
Վեր. Փ. Եաղուպեան, Նախագահ  
» Ա. Պապասինեան, Քարտուղար

ԽԱՐԲԵՐԴԻ ՄԻՈՒԹԻՒՆ  
Վեր. Ա. Անդրեասեան, Նախագահ  
» Ա. Թօփալեան, Քարտուղար

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆ  
Վեր. Ա. Թէրզիեան, Նախագահ  
Պետ. Հ. Անդրեան, Քարտուղար





ՊՈՅԱՍ Կ ՊՈՅԱՏ ԱՐԵՎԱՆԻ ՈՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ



## ԱՆՑԱՆ ԳԱՑԻՆ

Ամէն օր բաներ կ'երթան յաւիտեան  
մեր տեսութենէն եւ կը հեռանան մեր  
հասողութեան սահմանէն : Քանի՛ քանի  
բաներու համար կը ստիպուինք ըսկել ,  
«Անցան գայիին» : Այս կեանքը կսկսինք  
ամէն վայելքի յուսով : Քիչ ատենէն շատ  
բան որ երբեմն մեր հասողութեան սահ-  
մանին մէջ էր՝ կ'անցնի կ'երթայ : Ժա-  
մանակը կ'անցնի անդարձ կերպով : Երի-  
տասարդութիւնը կ'անցնի եւ շատ ան-  
դամ ի զուր : Ազգեցութիւնը կ'անցնի՝

Երբեմն մեր յիմարութիւններուն չեւ չար  
գնացքին բերմամբ : Դրամը կ'երթայ ,  
կը վասնուի անօդուտ եւ յիմարական  
կերպով : Հետզհետէ կեանքն ալ պիտի  
անցնի , ժամանակն ալ պիտի անցնի .  
եւ մենք պիտի ելլենք այն Դատաւո-  
րին առջեւ որ մեզի համար իր կեանքը  
տուաւ , եւ մեզի մեր կեանքը տուաւ  
որ իր ծառայութեան եւ իր փառքին  
նուիրենք :

Վայրկեանները կը սահին , տարիները  
կ'անցնին , կեանքը կարճ է , եւ ապա կու-  
գայ ժամանակն հաշուի , ահաւոր հաշուի ,  
զոր պիտի տանք « կենդանիներուն ու  
մեռեալներուն Դատաւորին » առջեւ :  
Ուրեմն օգուտ քաղենք ներկայ ժամէն ,  
ամուր բանենք համոզ ամէն պատեհու-  
թիւն , ծախու առնենք ժամանակը ,  
վասն զի չար են օրերը , եւ պատրաստ  
ըլլանք զիմաւորել մեր Տէրը խաղա-  
ղութեամբ եւ մտնել իր ներկայութեան  
մէջ ցնծութեամբ :



## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### ՈՍԿԻ ԽՐԱՏԵԲԻ

Անող մի ըլլաք ձեր տան կոյանոցին ,  
ոչ ալ ձեր տան շրջակայ Կոյուղինե-  
րուն վիճակին նկատմամբ : Ընտանիկան  
առողջութեան առաջին պայմանն է չոր  
եւ անոյշ միջնորդու : Չոր պատերով ,  
չոր մառանով եւ այնպիսի ականներով ,  
որոնց յահճնուած ապականութիւնը լաւ  
կը քշուի կը տարուի առանց գարշահոտ  
կազեր արձակելու . առողջական լաւ  
վիճակի համար մղուած պատերազմը կի-  
սով չափ կը շահուի :

Մի թողուք որ ձեր հորերը կամ աղ-  
րիւրները վարակուին ականներու պա-  
րունակութենէն կամ ուրիշ կերպով Խը-  
մելու մաքուր ջուրը , տան մէջ թէ այ-  
լուր , առողջութեան էական պայման է:

Մի արգելէք արեւը ձեր աշխատու-  
թեան սկսեակիները եւ ննջարանները իր

լոյսով ողողելէ : Սրեւուն լոյսը բացարածակապէս անհրաժեշտ է որպէս զի օղը զոր կը չնչենք՝ իր յարմար վիճակին մէջ գտնուի եւ մենք մարմնապէս հանդիսարլանք :

Մի քնանաք բուրդէ նոյն շապիկներով (ֆանէլա) զորս կը հագնիք ցորեկը :

Մի հազնիք բարակ զուլպայ եւ բարակ ներբանով կօշիկ, երբ օղը ցուրտ է կամ խոնաւ :

Պաղ մի առնէք : Պաղառութեան ասածեւն առևնել աւելի դիրին է քան զոր կը կարծուի առ հասարակ : Ֆիզիքական լաւ վիճակի մէջ գտնուող անձ մը պաղի ենթակայ չէ եւ պաղի զոհ չըլլար եթէ սասարիկ անհոգ չգտնուի : Տաք ու չոր պահեցէք ձեր սաքերը, պաղ՝ ձեր զըլուխը, եւ լաւ պաշտպանեցէք ձեր աղիքները եւ կուրծքը : Զգուշացէք փոթորկի եւ սաստիկ ցուրտի ատեն դուրս ելլելէ դափարկ ստամոքսով : Երբ տաքցած էք, զգուշացէք շատ շուտով զովանալէ : Օղի հոսանքներու մէջ մի կայնիք կամ նստիք, բուրդ շապիկ հագէք, եւ այլեւալ ծանր պարագաներու

որ մեծ կշիռ ունին որոշելու մէջ վըտանդաւոր միջալայրի մը դէմ մղուած պայքարին տրդիւնքը : Կազմին ունի մէկ տեսակ կազմութիւն եւ եղեւինը կամ մայրը կամ թեզօշը՝ ուրիշ տեսակ : Այսպիսի զանազանութեանց պատշաճ ճանաչումն է որ կ'օգնէ բժիշկներուն՝ ախտ ճանչնաչու մէջ, եւ կը փոխէ երեւութապէս անյօյս դէպքերու պատահմանց համեմատութիւնը : Գիտութեանց Ակադեմիային մօտերս ունեցած մէկ նստին մէջ Մր. Փ. Ու. Ուորնը կենսաչափութեան խնդրին վրայ խօսած ժամանակը քանի մը շատ ուշագրաւ իրողութիւններ յիշեց որոնք ըստ մեծի մասին ճշմարիտ են : Ըստ :

Ամէն մարդ իր հետ կը կրէ իր երկայնակեցութեան ֆիզիքական նշանները : Երկայնակեաց մարդը կրնայ որոշուիլ կարճակեացէն՝ վրան նայուելով միայն : Շատ պարագաներու մէջ բժիշկը հիւանդինը ձեռքին վրայ նայելով կրնայ ըսել թէ բայ պիտի ապրի թէ պիտի մեռնի : Ինչ էս կինդանեաց՝ նոյնպէս բուսականթերուն մէջ իւրաքանչիւր կեանք իր ա-

ուսնձնայատկաւթիւնը կ'ընդունի այն  
կեանքէն որմէ ծագում կ'ասնէ , Այս  
ժառանգութեած առանձնայատկութեանց  
մէջ կը զանենք կեանքի մը սաշափ ժա-  
մանակ շարունակելու կարողաթիւնը :  
Ապրելու այս ընդունակութիւնը կը կո-  
չենք ժառանգական կամ հաւանական եր-  
կայնակեցութիւն : Աննպաստ պայման-  
ներու մէջ այս երկայնակեցութիւնը կը բ-  
նայ մեծապէս կարճնալ , բայց նպաս-  
տաւոր միջավայրի մէջ անձի մը , ընտա-  
նիքի մը կամ ցեղի մը երկայնակեցու-  
թիւնը կրնայ աւելնալ :

Հոռ անա կը ներկայանան երկու գըլ-  
խաւոր մատած ութիւններ , որ միշտ ներ-  
կայ եւ միշտ կախման վիճակի մէջ կը  
գտնուին — երկայնակեցութեան ժառան-  
գութեած յարմարութիւնը եւ միջավայրին  
հակագիեցական ներգործութիւնները : Նա  
կը շարունակէ .

Երկայնակեցութեան նախնական պայ-  
մանն է ինչպէս ուղեղին՝ նոյնպէս սըր-  
տին , թոքերուն եւ մարսողական գոր-  
ծարաններուն խոչորութիւնը : Եթէ այս  
գործարանները խոչոր ըլլան , իրանը եր-

կայն եւ թեւերը ու օրունքները բաղ-  
դասապէս կարճ կ'ըլլան , Մարզը նստած  
ժամանակը երկայն եւ կայնած ժամանա-  
կը կարճ կ'ըլլայ : Զեռքը երկայն եւ քիչ  
մը կարճ ծանր ափ եւ կարճ մատներ  
կ'ունենայ : Ուղեղը խորը կը գտնուի .  
որուննշանն է ականջի ծակին ցած ըլլալը:  
Կապոյտի կամ թուխի զարնող կադինի  
գոյն աչքը օր կը ցուցնէ խառնուածի  
չափաւորութիւն , նպաստաւոր նշանն է :  
Առջոր , բաց եւ ազատ ոնդունքը (քթի  
ծակ) խոչոր թոք ունենալու նշանն է :  
Նեղ եւ կէս մը գոցուած ոնդունքը նը-  
շանն է մանր եւ տկար թոքերու :

Ս.սոնք են երկայնակեցները կար-  
ճակեցներէն զանազանող պայման-  
ներուն ընդհանուր կէտերը . բայց հար-  
կաւ բացառութիւններ կ'ըլլան անհանե-  
րու մէջ . եւ սակայն աղէկ գիացուած է թէ  
վերոյեղեալ առանձնայատկութիւնները  
արտայայտութիւններ են ժառանգեալ  
երկայնակեցութեան , եւ ապացուցուած  
են վիճակագրական հարուստ ապացոյց-  
ներով : Դարձեալ կ'ըսէ իրաւամբ .

Գալով այն անձանց որոնք մէկ կող-

մէն կարծակեաց եւ միւս կողմէն երկայն-  
ակեաց ծնողքներ ունին , խնդիրը առելի  
կը կնճռոտի . Պատուաստման եւ զուգա-  
խառման մէջ տեսնուած է որ Բնութիւնը  
գերազոյն ծիգ կ'ընէ անցընել կարծագոյն  
երկայնակեցութեան սահմանը եւ կեան-  
քը երկարել դէպ աւելի երկայնակեցու-  
թիւն . Ով որ կը հասկընայ կեանքին այս  
տկար եւ վտանգաւոր շրջանները , առաջ-  
ու ընէ ազդարարութիւն ընդունած եւ  
սպառազինուած կ'ըլլայ : Դիտուած է որ  
երկայնակեաց ծնողքներու զաւակները  
շատ ուշ կը ժամանեն չափահասութեան ,  
եւ սովորաբար յառաջադէմ չեն ըլլար  
ուսմանց մէջ :

Այսպիսի դիտողութիւններ բարձրա-  
գոյն կարեւորութիւն ունին .

Թուերուն առողջական վիճակ կ'ըս-  
տուգուի այսպէս . կրցացիդ չափ շունչ  
քաշէ եւ ապա առանց նորէն շնչելու ,  
ծանր ծանր համրէ , թոքախտաւորն 10էն  
աւելի չկրնար համրել առանց նորէն օդի

կարօտութիւն զգալու , երբեմն 6 երկ-  
վայկեան իսկ չէ կարող համրել առանց  
շնչելու :

Թոքաաապ ունեցողն 4 - 9 երկվայր-  
կեան կրնայ համրել իսկ առողջ թոք ու-  
նեցողն 20 - 35 երկվայրկեան կրնայ համ-  
րել առանց նոր օդ շնչելու :

—

Եթ եռենդ վախչի հետեւեալներն փոր-  
ձէ փոխանակ դեղ առնելու : Ելիր ան-  
կողինէն եւ մարմինդ ու անզամներդ  
անձեռցով մը շիէ , արեան շրջանը զար-  
գացունելու , եւ աւելորդ արիւնը ուղե-  
ղէն դէպ ի մարմին մզելու համար . իս-  
կոյն ի խոր քուն իննաս , անկողին մըտ-  
նելէ առաջ լոգանք մը , կամ բացօթեայ  
տեղ մը ժուռ դալ կամ սանդուխէն վեր  
ելլել կամ վազել . տսոնք օգտակար են  
բնութեան քաղցր կազզութիչն անխախտ  
պահելու . համար :

ԿԱՊՈՒՏ ՀԱՅԻՆ ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆԸ

Տր. Ուէլ երեք տարի առաջ կարծիք յայանեց թէ կապուտ հազը սյն ատեն միայն տարափոխիկ է երբ դեռ հարբուխի վիճակի մէջ կը գտնուի . եւ անկէ հետէ իր կարծիքը հաստատելու համար խիստ փորձեր կատարած է : Այլեւայլ առիթներով իբր 100 մանուկներու , որ առաջուց կապուտ հազ եղած չէին , թոյլ տուաւ քսան կամ տւելի օրեր ընկերանալ միեւնոյն շէնքին մէջ ուր յիշեալ ախտէն տարապող մանուկներ կը զըտնուէին այնպիսի ժամանակ մը երբ կապուտ հազը սաստկացած վիճակի մէջ էր . Միայն մէկ մանուկ բռնուեցաւ , եւ այս դէպքին մէջ հիւանդը , որմէ վարակուեցաւ մանուկը , կապուտ հազին կանսագոյն տարիճանին մէջ կը գտնուէր : Երեք մանր համաճարակներուն մէջ Ուէլ կարող եղաւ գոհունակութեամբ տեսնել որ վարակումը այն մանուկներէն եղաւ որոնք տակաւին կապուտ հազ եղած չէին , այսինքն դեռ լոկ հարբուխ եղած

էին : Ուսափի կ'եզրակացնէ թէ վարակումը կը զարդի երբ ախտին յատկանիշն եղող սասափիկ հազը կը սկսի , եւ թէ ընապանիքի մը մէջ ոչ թէ արդէն կապուտ հազ ունեցողը պէտք է մեկուսացնել , այլ անոր եզրայրները եւ քոյրերը՝ որոնք առաջուց ունեցած չէին կապուտ հազ :

Կենդանիները ջուր խմած ատեն արզրուկ (սէլ-է-է) կուլ կուտան , պէտք է անմիջապէս մէկ քանի ափ աղ տալ կենդանիին : Եթէ կոկորդին է փակած արզրուկը , եղէզով մը աղ փշելու է վրան :

Այրած կամ խաշած մասերու բուժման լաւ զեղն է 25 տրամ պաղեղի փոշի 100 տրամ պաղ ջրոյ մէջ լուծել եւ լաթ մը այս հեղուկին մէջ թաթխելով վրան զընել , շարունակ փոխելով :

Այրածի լաւ զեղ մէջ լաթ թաթխել էսէրնիք մէջ , դնել այրած տեղին վրայ եւ վրան բամբակ դնելով կապել , լաթը վրայէն մի շարժէր , այլ վրայէն թրջէ էսէրնիքով երբ չորնայ :

Այրուացքի ընտիր զեղ կ'ըլլայ կիրի  
ջուր ձեթով խառնուելով :

Դլուխը բարձր պառկելն մեասակար  
է . քանզի սիրտը բուռն գործողութեան  
կենդարկուի արիւնը զէպի գլուխ մղելու :

Փողի ցաւի համար 100 տրամ ե-  
ռացեալ ջուր լից 24 տրամ տառ շայ  
տերեւի վրաւ . թող կէս ժամ մնայ , քիչ  
մը քացախ աւելցուր վրան եւ մեղր ըստ  
ճաշակի՝ օրը քանի մը անգամ հ'ըհ'ը  
ըրէ ասովլ :

Սըր Ասրիի Քուբը կ'ըսէ . իմ առող-  
ջութիւնս 30 տարի պահած եմ ժուժկա-  
լութեամբ , կանուխ ելլելով ու մարմինս  
ամէն առառւ պաղ ջրով սրբելով :

Լողացողներու անդամներն երեմն  
յանկարծ կը քաշուին , պէտք է խսկոյն  
բուռն շարժում ընել անոնցմով :

ԶԱՓԱԶԱՆՑ ՈՒՏԵԼՈՒՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Որկրամոլութիւնն իր զոհերն ունեցած  
է , որոնք ուրիշ մոլութիւններու ըրած  
զոհերէն պակաս չեն : Զափազանց ու-  
տելը չափազանց բեռնաւորել է մարսո-  
ղական գործարանները , այնպէս որ ան-  
կարելի ըլլայ անոնց՝ պատշաճ կերպով  
կատարել իրենց պարտականութիւնները,  
եւ ուստի վանդաւոր արտադրութիւն-  
ներ յառաջ կու գան եւ վերջապէս ա-  
ռողջութիւնը կը խանգարի . Ոչ ոք կըր-  
նայ չափազանց ուսել եւ ապրիլ իր ակն-  
կալածին չափ : Ապահովագրուիլ առա-  
ջարկող մարդուն այս կարգի ունակու-  
թիւններուն քննութիւնն ա'յնքան կա-  
րեւոր է որքան խմելու ունակութիւն-  
ներուն քննութիւնը : Մարդիկ իրենք-  
զիրենք կը սպաննեն այս կերպով , երե-  
ւելի դատաւոր մը սովոր էր ըսել թէ  
այսպիսի մարդիկ իրենց գերեզմանները  
իրենց ակռաններովը կը փորեն , եւ իրօք  
այսպէս է բանը : Ընդհակառակն կան  
այնպիսիներ ալ որ չափազանց քիչ կ'ու-

տեսն : Բոլոր ծայրայեղութիւնք չարիք-ներ են որոնցմէ զգուշանալ սօրվեցնելու էր փորձառութիւնը :

### ՀԱՐՔՈՒԽԻ ԱՏԵՆ ՏԱՔ ԶՈՒՐ

Հարբուխի ժամանակ առաք ջուր խը-մելով արեան լրջանը կ'արագանայ : Հարբուխը բաղադրեալ բան մըն է . բայց այժմու նպատակին համար բաւական է ըսել թէ արիւնը հարբուխին պատճառաւ (վասն զի մորթին մակերեսի հերածեները, որ շատ նուրբ խողովակներ են, կ'ամ-փոփէ) կը մլուի օդի անցքերուն մէջ եւ անոնց վրայ ընդհանրապէս, թերեւս այն պատճառաւ որ անոնք շատ դիւրաւ ցուրտ կ'առնեն եւ հանգիստ չունին իրենց կենսական եւ շարունական անհրաժեշտ գործերուն համար : Որովայնի պնդու-թիւն կ'ըլլայ հետեւանքը, եւ արեան շրջանը կ'արգելուի :

Արդ եթէ նախնական աստիճան-ներուն մէջ բորբոքման հիւթերուն ելլել

սկսելէն առաջ առատ տաք ջուր խմուի, Ժամը անգամ մը կամ աւելի յաճախ, ոչ միայն մորթին պաղած արտաքին կողմը կը տաքնայ, այլ ներսի կողմն ալ : Վեր-նամաշկի հերածեները կ'ընդարձակին, քրախնքը կը վազէ, մէզը կ'առատանայ, որովայնի պնդութիւնը կ'անցնի (եթէ եր-կար ժամանակէ հետէ շարունակած չէ, եւ հիւսուածները կրակ կտրած չեն բոր-բոքման հետեւանօք, եւ մինչեւ անգամ այն ատեն տաք ջուրը անօգուտ չէ), սա պատճառով որ կազմութեան միւս մա-սերէն քաշուելու բաւական արիւն չկայ որ որովայնի պնդութիւնը պահուի :

Տաք ջուրը վտանգաւոր գարման չէ : Բնչպէս կ'ըսեն ոմանք, եթէ մարդ անոր մէջ չմիրճուիր, ոչ ալ կիսախարշ կ'ընէ օղի խողովակը կամ ճարպ եւ գիրութիւն յառաջ կը բերէ, ինչպէս ըսած են ուրիշ-ներ :

### ԶՈՒՐ ԽՄԵԼ

Թէղէտ ջուրը կերակուր չէ այն ի-

մաստով որ ուղղակի օժանդակէ զօրութիւն կամ ջերմութիւն արտազրելու, սակայն կերակուր է սա իմաստով թէ առանց մարմնին մէջ անոր ներկայութեան՝ կինսական ամրող գործողութիւնը կը դադրի, վասն զի ջուրին բացակայ գըտնուած ատենը փոփոխութիւն անկարելի է : Մեր մարմնին հիւսկէնները բաւական ջուր կը պարունակեն : Շարունակ մեծ քանակութեամբ ջուր կը կորսնցնենք չնշառութեամբ, արտաշնչութեամա, այսինքն քրտինքի միջոցաւ, եւ տեսակ տեսակ ուրիշ պատճառներով եւ, ինչպէս հիմա ըսուեցաւ, անոր ներկայութիւնը անհրաժեշտ է որպէս զի տեղի ունենան այն այլեւայլ քիմիական փոփոխութիւնները որոնցմով կ'ապրինք, կը շարժինք ու կանք : Այս այսպէս ըլլալավ, կրնայ ընդունուած համարուիլ անոր արժէքն իրեւ կերակրոյ նիւթի, եւ կրնանք աւելի մասնաւոր կերպով մտածել անոր ներգործութեան եւ օգուաներուն վրայ երբ կ'առնուի ոչ թէ իրբեւ կերակուր, հապա իրբեւ միջոց մը առողջութիւնը պահելու կամ հիւանդութիւնը վտարելու:

Զուր խմելուն արզիւնքները կը զանազանին խմելու եղանակին համեմատ և թէ օրինակի համար, բաժակ մը ջուր մէկ ու մագուլ խմուի, կամ երկու մասերու բաժնուելով խմուի մէջ տեղը կարճ միջոց մը դադար առնելով, քանի մը ուրոշ արդիւնքներ յառաջ կու գան, արդիւնքներ՝ որոնք կը տարբերին անոնցմէ որոնք յառաջ կու գան դարձեալ նոյն քանակութենէն՝ բայց քչիկ քչիկ, ումագ ումագ առնուելով :

Ումագ ումագ առնելուն արդիւնքը

Ումագ ումագ խմելը գրգիռ կու տայ արեան շրջան ընելուն, բան մը՝ որ խըմելու հաստրակ կերպէն սպասուելու չէ : Ումագ ումագ խմելու ատեն՝ կ'անհետանայ գործողութիւնը այն չղին որ սրտին բարախումները կը կամացցնէ, եւ հետեւապէս այդ գործարանը շատ մը աւելի արագ կը կծկի, բազկերակը աւելի շուտ կը զարնէ եւ արեան շրջանը կ'աշագանայ մարմնին այլեւայլ մասերուն մէջ : Ասոր հատ մէկտեղ նաեւ կը տես-

նենք որ ձնշումը , որով մաղձը այսինքն՝ լեզին կը հաւաքուի լեարդին մէջ , կ'աւ և լինայ՝ հեղանիւթիւներուն ումազ ումազ առնուած ժամանակ . Երովութիւն՝ որուն կարեւորութիւնը ուղղակի պիտի տեսնենք :

Սովորական կերպով կուլ տալը ումազ ումազ առնելուն գրգահչ ազգեցութիւնը չունի , բայց ունի մէկ երկու ազգեցութիւններ զոր ումազ ումազ խմելը չունի , որուն օգտակարութիւնը պիտի լիշենք քիչ մը ետքը :

### Մէկ ումազով խմելուն արդիւնքները

Պազ ջուր խմելուն արդիւնքներն են ասոնք . Եթէ օրինակի համար բաժակ մը պազ ջուր մէկ ումազով կուլ տրուի , մարմնին ջերմութեան աստիճանը թեթեւ կերպով կը բարձրանայ — իր մէկ աստիճան մարէննայթ , Զարկ բազկին քիչ մը կը կամացնայ (այնքան չարագնարինչպէս կ'արագնայ ումազ ումազ խմելու ատեն) , Եւ չնչառութիւնը թեթեւ մը կ'արագնայ , Ստամոքսը պատող թաղանթին ար-

եան երակները առաջին անգամ կը կծկին , ասկայն չուտ մը նորէն կ'ընդպարձակին արագ արագ , անոնց մէջէն արեան հսոււմը կ'արագնայ , եւ մարտզական հեղուկին մզումը կ'աւ ելնայ :

### Տաք ջուր խմելուն արդիւնքները

Միւս կողմանէ՝ կան շատեր որ կը գտնին թէ այս արդիւնքները աւելի ազէկ ձեռք կը բերուին փոխանակ պազ ջուրի տաք ջուր խմելով , թէպէտ առաջին հայեացքով քիչ մը զարմանալի կրնայ թուիլ որ նման արդիւնքներ ձեռք կը բերուին թէ՝ տաք թէ՝ պազ ջուրով : Բացարութիւնը պարզ է . Տաք ջուրը ճիշդ պաղին պէս կը ներգործէ , միայն թէ առանց նախ կծկում յառաջ բերելու իսկոյն կ'ընդպարձակէ երակները , ստամոքսը գացածին պէս :

### Կերակուրի ատէն շատ ջուր խմել

Գէշ է : Բայց քիչը կրնայ վասս չատը թէպէտ իմաստութիւն է կերակուրէն

կա՛մ առաջ կա՛մ ետքը խմնել , եթէ յենք  
կրնար ըմպելիքն չափը պզաբիկցնել : Ե՞րբ  
որ կերակուր մը չափէն աւելի իւղոտ է ,  
աղէկ է ջուրը կերակուրէն բաւական ետ-  
քը խմել , վասն զի այդ կերպով աղիք-  
ներուն մէջի իւղին մարսողութիւնը կը  
զիւրանայ :

Զուրին լուծողական ներգործութիւնը

Շատերուն ծանօթ է թէ ջուրը լու-  
ծողական դեղի դեր կը կատարէ : Այս  
մասնաւոր ազդեցութեան պատճառն է  
սա որ մաղձին մզում տալու զօրութիւն  
ունի , նաեւ աղիքներուն սողնական շար-  
ժումը կ'աւելցնէ : Վասն զի մաղձը բը-  
նական լուծիչ մըն է , եւ սողնական  
շարժման արագութիւնը թշնամի է որո-  
վայնի պնդութեան եւ աղիքներուն դան-  
դաղ գործողութեան : Եթէ պարզ ջուր  
խմուի , անոր լուծողական ներգործու-  
թիւնը ամենէն աղէկ տեղի կ'ունենայ իր  
պաղ ըլլալուն համար Եթէ բնական հան-  
քային ջուրեր խմուին , պէտք է անոնց  
մէջ քչիկ մը տաք ջուր խառնել , այնպէս

որ՝ սաամոքսին տաքութեան հաւասար  
ըլլայ տաքութիւնը : Տաք ջուրը աւելի  
դիւրաւ կը ծծուի քան պաղը . եւ քա-  
նակութեամբ չափաւորը՝ քանակութեամբ  
մեծէն աւելի : Ծծումը կը կամացնայ ե-  
թէ մեծ քանակութեամբ թէ՛ տաք թէ՛  
պաղ ջուր խմուի մէկ ումկով : Զուրին  
լուծողական ներգործութիւնը ընդունե-  
լու ամենէն աղէկ ատենն է առատուանց  
անկողինէ ելլելու ատենը : Անկողինէ  
ելլելու ժամանակ ասնուած բաժակ մը  
պաղ ջուրը շատ անգամ բաւական կ'ըլ-  
լայ աղիքներուն շարժումը դիւրացնելու :  
Այս արդիւնքը աւելի սատուգութեամբ  
ձեռք կը բերուի ջուրը ումպ ումպ առ-  
նելով՝ հազուելու մրջացին : Բայց պէտք  
չէ աճապարանօք ըլլայ այս , այլ՝ կամաց  
կամաց եւ կարճ միջոցներ տալով :

Առատ խմելուն արդիւնքները

Առատ ջուր խմելէն երիկամանց եւ  
մարմնին հւսկէններսւն վրայ ընդհան-  
րապէս վերը յիշուածներէն ոչ նուազ  
կարեւոր արդիւնքներ յառաջ կու դան :

Ամէն պատճառ կայ հաւատալու գիտութիւններէ , որոնց բնութեան մասին հարկ չէ խօսիլ , թէ մէզին մզման աւելանալը որ կը հետեւի առատ ջուր խմելէն , ոչ միայն կը մաքրէ մարմինը շատ մը թունաւոր եւ նեխեալ գոյացութիւններէ , այլ ինքնին նշան մըն է մարմիններսը տեղի ունեցած փոփոխութիւններուն , որոնց արդիւնքն է մարդու առողջութեան զարգացումը եւ երջանկութիւնը :

Շատ վասակար նիւթերը որ յաճախ ոյժը կը պակստցնեն եւ յառաջ կը բերեն զանազան ցաւեր , անտարտիոյս կը լըուացուին կը վտարին հիւսկէններուն մէջէն , եւ գուրս կը մզուին երիկամանց միջոցաւ իրեւ արդիւնք առատ ջուր խմելու :

### Ումպ ումպ խմուած պաղ ջուրը

Յաճախ կը մեղմացնէ ալքոլի փափաքը այնպիսեաց մէջ , որոնք սովոր են չափազանց քանակութեամբ գործածել անկէ , եւ կը ջանան հրաժարիլ խմելէ :

Պատճառը հաւանորէն ջուրը ումպ ումպ խմելուն արդիւնք եղող գրգորիչ զործողութիւնն է :

### ՀԱՆՁԱՐԵԼ ԲՈՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Տր. Արնոթ մարդկային մարմինը չուզեզործին հետ բաղդատած է . որոց երկուքին մէջ շատ զարմանալի նմանութիւն մը կ'երեւի : Ահա այդ բաղդատածութեան մէկ օրինակը :

Շոգեգործին զործելու առեն կ'ընդունի

1. Վառելանիւթ , այսինքն՝ հանքածուխ եւ փայտ , երկուքն ալ հինցած կամ չորցած բուսական , եւ երկուքն ալ վառող :

2. Ջուր :

3. Օդ :

եւ կ'արտադրէ

4. Անընդհատ եռացող տաքութիւն

հարիւր աստիճան , արագ վառելով :

5. Ծուխ ծինելոյդէն կամ ածխային թթուով եւ չսպիով ծանրաբեռեալ օղէն :

6. Մոխիր , վառելանիւթին մասը , որ չվարիր :

7. Շարժիչ զօրսութիւն , որ միտոցին մէջ հրելու եւ քաշելու պաշտօնն ունի , եւ որ ներգործելով լծակներու , յօդուածներու , փոկերու , եւն . միջոցով կը գործէ ամրաւ զանազանութեամբ :

8. Եթէ պակսի վառելանիւթը , ջուրը կամ օդը , նախ կը խանգարուի , յետոյ կը դադրի շարժումը :

9. Մեքենայի մը չարաչար գործածուելէ յառաջ եկած տեղային վնասը զայն շինողին ձեռքով կը շտկուի :

Կենդանական մարմինը կեանքին մէջ կ'ընդունի

1. Ուտեստ , այսինքն՝ նոր կամ թարմ բուսականներ եւ միս , երկուքն ալ նման բաղադրութիւն եւ վառող :

2. Հմակելի (էապէս ջուր) :

3. Շունչ (հաստրակ օդ) :

Եւ կ'արտադրէ

4. Անընդհատ կենդանական տաքութիւն երեսունեւեօթը աստիճան , յամբ վառելով :

5. Ապականեալ շունչ խաչափողէն կամ ածխային թթուով եւ շոգիով ծանրաբեռնեալ օղէն :

6. Կենդանական աւելորդ , կամ ուտեսաի մաս որ չվարիր :

7. Շարժիչ զօրութիւն , որ մկաններուն կծկում եւ ընդարձակում կուտայ , եւ որ զօրծելով անդամոց լծակներուն , յօդուածներուն , լարերուն , եւ նու միջոցով կը գործէ ամրաւ զանազանութեամբ :

8. Եթէ պակսի ուտեսաը , ըմպելին կամ շունչը , նախ կը խանգարուի , յետոյ կը դադրի շարժումը եւ կեանքը :

9. Ապրոզ մարմինի մը տեղային վընասը կամ հիւանդութիւնը ներքին կենսական ոյժին ներգործութեամբ կը շիտկուի կամ կը բուժուի :

ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԱՏԵՆ

ԿոՏՐՈՒԱԾ ԱՆԵՐ

Գրեթէ ամէն պարագայի մէջ մարմնին կոտրուած մէկ կողմը ամենէն աղէկ կը դարմանուի հիւանդանոցի մէջ, վասն զի հոն կը դանուին դարմանման յատուկ պայմանները եւ պէտքերը : Բայց ամէն պարագայի մէջ հարկ է բժիշկ կանչել որչափ կարելի է շուտով եւ անյապաղ : Բաւական կը վասուի եւ կը չարչարուի հիւանդը մինչեւ որ բժիշկ գայ : Ահա հետագայ թելադրութիւնները հիւանդը չարչարուելէ զերծ պահելու համար են, վասն զի զանդաղութիւնը եւ կատարուելու գործին ագիտութիւնը շատ անգամ այնքան չարիքներու ծնունդ կուտան, որ յետոյ ուշ աղէկնալուն պատճառ կ'ըլլան, չըսենք հիւանդին կրած անհարկի չարչարանքը :

Երբ մարմնին մէկ անդամին ոսկրը կը կոտրի, այդ անդամը կը կախուի, զոր եթէ վերցնես խշտառք մը կը լսուի

վասն զի կոտրած ոսկորին ծայրերը իրարու կը քսուին : Պէտք է զգուշութիւն ընել որ մէկ անդամէն աւելի չպատահի այս բանը, եւ հիւանդը պէտք է զնել ըստ կարի աղէկ դիրքի մէջ մինչեւ որ բժիշկը գայ :

ԿոՏՐՈՒԱԾ բազուկ

Երբ բազուկ մը կոտրի տան մօտը, հիւանդը թող պառկի անկողնի վրայ վնասուած անդամին ներքեւը բարձ մը դրէք, այնպէս որ մարմնին հաւասար բարձրութիւն ունենայ . դրէք նաեւ ծանր գիրք մը կամ աւազով լեցուն տոպրակ մը բազուկին երկու կողմը զանիկա հանդարտ եւ անշարժ պահելու համար, Եթէ ոեւէ կերպով հարկ ըլլայ բազուկը մերկացնել բժշկին համնելէն առաջ, հանդերձին թեւը սուր մկրատով մը կարել պէտք է մինչեւ ուսը, բայց եթէ կարելի է, սպասելու է որ բժիշկը գայ հանդերձը հանելէ առաջ : Եթէ արկածը տնէն հեռու աեղ մը պատահի, լայն լաթով մը, որ արմուկէն մինչեւ

դաստակը (պէլէ՛) համինի , պէտք է կախել թեւը պարանոցէն : Այս լավթը կը ըստ նայ թաշկինակ մը ըլլալ կամ երեք քառորդ եարաաա կողմնը ունեցող քառակուսի կակուղ ոեւէ կտաւ մը : Լաթը պէտք եղած լայնք թողլով ծալելու է հակառակ անկիւններէն , եւ միւս ան կիւններն իրար կապելու է պարանոցին վրայ :

Եթէ կոտրուածը արմօւկէն վերն է , փայտի կտրներ դրէք կոտրուածին երկու կողմերը , եւ թաշկինակով մը կապեցէք այնչափ մը ամսուր՝ որ կոտրուածին մասերը իրենց տեղերը մնան ապահովապէս : Պէտք է միտք պահել որ բոլոր առժամանակեայ դարմաններուն նպատակն է արգիլել բազկին ոեւէ շարժումը , պահել զայն հանգիստ եւ հաստատուն դիրքի մէջ , որպէս զի շատ չազդուի մարմնին ուրիշ շաստաւմներէն :

### Կոտրուած սրունի

Սրունքը կրնայ կոտրիլ ծունկէն վերը կամ վարը : Ծունկին եւ կոճին մէջտեղը

երկու ոսկորներ կան որ կը կոչուին ու լոք եւ ճարմանդ կամ սրունից բարակ ոսկը . եւ ասոնց մին կամ երկուքն ալ կրնան կոտրիլ եթէ ծունկէն վար ըլլայ վտանգուած մասը : Առժամանակեայ բուլոր դարմանը որ կրնայ ըլլալ , կոտրուածը աւելի չմասուելու վիճակի մէջ դնեն է բժշկին գալէն կամ հիւանդին հիւանգանոց փոխադրուելէն առաջ : Եթէ կարելի է , հիւանդը պառկեցուցէք կատարելապէս փոռուած դիրքով եւ կոտրուած սրունքը բնական դիրքի մէջ պահեցէք , եւ երկու կողմն ալ խոշոր դիրք մը կամ աւազով լեցուն առպրակ մը դրէք որպէս զի անչարժ մնայ : Բայց եթէ արկածը անէն հեռու տեղ պատահի , եւ առձեռն պատրաստ օգնութիւն չգտնուի , երկար դաւազան կամ ձող մը առէք , որ համինի անութքէն (Քօլութ) մինչեւ վնասուած օրունքին կոճը : Յետոյ միւս կողմին համար առէք նեցուկ մը կամ հովանոց մը , եւ սրունքը ամուր մը կապեցէք քանի մը տեղերէ , կոտրուած մասին թէ վերէն թէ վարէն : Մյուռն հետեւ երկու սրունքներն ա'լ իրար կա-

պեցէք ծունկէն եւ կոճէն :

Հիւանդը զրէք պատգարակի կամ նման բանի մը վրայ եւ հիւանդանոց տարէք, եթէ կարելի է, կամ տուն՝ եթէ կ'ուղէք : Եթէ գաւազան կամ ձող չգտնուի, վնասուած սրունքը միւս սրունքին կապեցէք լաւ մը, թաշկինակներով կամ փողկապներով, եւ յետոյ պատգարակի նման բան մը գտնելով հիւանդը անոր վրայ պառկեցուցէք եւ տարէք : Կոտրուած սրունք ունեցողը առ հասարակ իբր վեց շաբաթ կատարեալ հանդարտութեամբ անկողին պառկելու կը կարօափի . եւ այս նպատակին համար պէտք են զանազան պատրաստութիւններ զորոնք հիւանդանոց մը միայն կրնայ հայթայթել :

Կոտրուած անրակ

Սնրակները այն զոյգ մը ոսկորներն են որ կուրծքին վերի կողմը ճիշդ պարանոցին վարէն կ'երթան ուսերը . ընդհանրապէս կը վնասուին յանկարծական ցնցումէ մը, ինչպէս՝ երբ մարդ իր ար-

մուկին վրայ կ'իյնայ : Այս արկածէն գրեթէ անմիջապէս ետքը ուռոյց մը կը գոյանայ կուրծքին վերի կողմը . եւ երբ վրայէն ձնշուի, բաւական ցաւ կը զգացուի, եւ կրնայ խշրուաք մը լսուիլ կոտրուած ոսկորներուն իրար քսուելուն պատճառաւ : Եթէ մօտերը բժիշկ կը դանուի, բազուկը վերոյիշեալ կերպով լաթի մէջ դրած կախեցէք ուսէն, եւ անյապաղ բժիշկին տարէք հիւանդը : Եթէ չկայ ո՛չ բժիշկ ո՛չ հիւանդանոց, դարմանեցէք հիւանդը ինչպէս պիտի դարմանէիք կոտրուած բազուկ ունեցող մը : Հիւանդը թող անկողին պառկի . եւ բարձ մը դրէք ճիշդ անութին տակը՝ բազուկը բարձր պահելու համար : Թող կոնակի վրայ պառկի, որպէս զի վնասուած ոսկորը իր բնական դիրքը ունենայ մինչեւ որ բժիշկը գայ :

ՍՏՈՒԳԵԼ ԹԷ ՍԵՆԵԱԿ ՄԸ ԽՈՆԱՅԻ Է

Ստուգելու համար թէ սենեակ մը խոնա՞ւ է թէ չէ, պէտք է անոր մէջ

դնել մէկ հազարակրամ չմասուած կիր ,  
գուռները եւ պատուհանները լաւ մը  
գոցելէ ետեւ : Քանըզորս ժամէն պէտք  
է կշուն կիրը , եւ եթէ կիրը տասը  
կրամէն աւելի (այսինքն հարիւրին տաս-  
նէն աւելի) ջուր ծծած ըլլայ , սենեակը  
պէք է որ խոնաւ համարուի եւ վատա-  
ռողջ : Բնակարաններու խոնաւութեան  
խնդիրը յաճախ վէճի պատճառ եղած է  
տանուտիրոջ եւ վարձակալներու մէջ-  
տեղ : Առաջինը բնապէս կ'ուրանայ իր  
տան խոնաւութիւնը : Այս խնդիրը կրր-  
նայ ապագային լուծուիլ կրին այսպէս  
ջուր ծծելու փորձը կատարելով , որ սն-  
հերքելի ապացոյց պիտի հայթայթէ այս-  
պիսի խնդիրներու մէջ :

### ԼՈԳԱՆՔ ԵՒ ԻՐ ՑԱՐՍԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՉԱՓՈՂԻ ԱԽՏԵՐՈՒԽ ՀԵՏ

Քթին , կոկորդին , չնչափողին կամ  
թոքերուն հինցած հարիսխային հիւան-  
դութիւնը , կարճատեւ բորբոքման ար-

պիշնք , եթէ երբեք բուժութի՝ քիչ ան-  
գամ ըստ պատշաճի կը բուժուի : Ոչ .  
այս մասին լսած ենք բորբոքման կրկին  
եւ կրկին պատահելուն եւ զարմանման  
մասին անփոյթ եւ զանցառու գտնուե-  
լու վրայ : Մէն մի բորբոքում իր նա-  
խորդէն քիչ մը աւելի սաստիկ եղած է ,  
եւ անոնցմէ ոչ մին բոլորովին բուժուած  
է իր յաջորդին երեւնալէն առաջ : Այս-  
պէս քիչ կ'ընդարձակի . հիւանդու-  
թիւնը , փոփօսութիւններու կ'ենթար-  
կուի , թոքերը կը վնասուին , մինչեւ որ  
հիւանդութիւնը կը հինայ , եւ պէտք  
կ'ըլլայ երկարատեւ գարմանում , վիրա-  
բուժական գործոլութիւններ եւ օդա-  
փոխութիւն լորձնաթաղանթը ըստ կարի  
նախկին բնական վիճակին վերածե-  
նիր համար : Համոզուած եմ թէ այս  
պարագաներուն շատին մէջ հարբուխ-  
ներուն կրկին եւ կրկին յարձակումը եւ  
սաստկութիւնը , որ պատճառ են հար-  
բխային ախտերուն յաճախ պատահելուն  
եւ դժուար գարմանուելուն , վերագրուե-  
լու են ոչ այնքան կիմմայի փոփօսու-  
թիւններու , այլ մարդոց անխոհեմուն

թիւններուն : Ծնչառութեան ախտերու երեք մեծագոյն պատճառներն են անյարմար զգեստներ , չափազանց տաքցուած բնակարաններ եւ տաք լոգանք մասնակի կամ ամբողջ մարմնով : Այս վերջինին վրայ , որ մեր նիւթն է , կը շեշտեմ , վասնզի կը տեսնեմ թէ այնպիսիներ , որ գալու ձմեռուան վրայ սոսկումով կը նային իբրեւ թշուառութեան եղանակի վրայ — երբ աշունէն մինչեւ զարուն իրարու կը յաջորդեն հարբուխ , փողացաւ կամ հաղ — եթէ ջնջեն տաք լոգանքը եւ անոր աեղը ընեն պաղ լոգանք , այլ եւս նուաղ ենթակայ կ'ըլլան յիշեալ տկարութիւններուն . եւ իրենց հարբուխը թենթեւ կ'ըլլայ կամ բոլորովին կը զադրի , եւ ուեւէ հինգած այգօրինակ տկարութիւններու այս կերպ դարմանման ատեն նշանաւոր կերպով կը տեսնուի շատ մեծ տարբերութիւն տաք եւ պաղ ջրով լոգանքին ներգործութեան մասին :

Պաղ լոգանքի խօսք ըրած ատենս հարկաւ ըսնէլ չեմ ուզեր ամբողջական պաղ լոգանք , վասն զի մարդ շատ զօ-

րաւոր կազմ ունենալու է ձմեռ ատենս անոր հակաղդեցութեան տոկալու եւ անկէ օգուտ քաղելու համար , թէպէտ քաջառողջ անձինք եւ այնպիսիներ ալ որ այնքան քաջառողջ չեն՝ կը թուի թէ օգուտ կը քաղեն , Այսու ամենայնիւ չեմ կարծեր որ տու հասարակ յանձնարարելի է այդ կերպը :

Ես մասնաւորապէս կը յանձնարարեմ պաղ ջրով լոււալ երեսը , պարանոցը եւ կուրծքը իրիկուն առառու : Պէտք չէ զանց ընել ափ մը աղ նետել թաս մը ջուրին մէջ . Պէտք է թրքական խոհուով շփել լուացուող տեղերը , Սպունգը չըւլար , վասն զի շփում չտար : Զուրը բաւական պաղ ըլլալու է : Երեսները եւ պարանոցը պէտք է ամուր շփել լաւ մը թրցելով , եւ յետոյ պէտք է չորցնել արագ արագ շփելով թրքական խոհուով : Եւ լոգացողը պէտք է անմիջապէս հագուի կամ անկողին երթայ , պարագային եւ յարմարութեան համեմատ :

Այս բանը ինքնին առողջարար մարմնամարդ մըն է . սակայն անտարակոյս պէտք չէ որ գործադրուի եթէ հարկը

Հստիպեր : Արեան շրջանը կը գրգռուի .  
Եւ արտաշնչութիւն կը սկսի . բաղիքն ,  
կռնակին եւ կուրծքին մկանները կը  
զօրանան . մորթը քաջառողջ հանգա-  
մանք մը կ'առնէ , բայց չցուցներ տաք  
լոգանքին տաքուկ , կակուղ , քրտնցող  
եւ կարմիր գոյն տուող յատկութիւնը :

Մարդս սովորութեան արարած է ,  
այսինքն՝ ինքդինք պարագաներու յար-  
մարցնելու կարողութիւնն ունի . Հնոց-  
պանը կրնայ կայնիլ շոգեշարժ մեքենա-  
յին բաժնին մէջ հնոցին արձակած սոս-  
կալի տաքութեան դիմացը , վասն զի  
սովորած է : Ոստիկանութեան պաշտօն-  
եան երթալով քաջառողջ կ'ըլլայ վեր  
վար քալելով ցուրտ փոլսցներուն մէջ ,  
վասն զի շարունակ դուրսը գանուելու  
սովորած է : Սյսպէս է բանը նաեւ պտղ  
ջրով լուացուելու մասին : Երեսը , պա-  
րանոցը եւ կուրծքը ցուրտի եւ խոնա-  
ւութեան կը սովորի ապահով մէթոտով  
մը , այն է՝ հանապազօրեայ պաղ եւ ա-  
ղով խառն ջրով լոգանք : Մորթը այդ  
կերպով կը գրգռուի եւ կը կարծրանայ ,  
այսպէս ըսենք , ամէն որ ցուրտի եւ

իսոնաւութեան ենթարկուելով , այնպէս  
որ երբ յանկարծ ենթարկուի ցուրտի .  
հովի կամ փոթորկի , չսարսոար , ուստի  
չմսիր կամ պաղ առներ եւ հարբուխէ եւ  
նման տկարութիւններէ զերծ կը մնայ :

Մորթին մակերեսը չուտով կ'ընտե-  
լանայ ցուրտի , եւ պաղ առնելու են-  
թակայ անձը , որ միշտ կը փոնդարը  
փողոցի կառքէն դուրս ելլելու ատենը ,  
որ անոր անդրաժեշտ արգելիչ դարման  
կը համարէր օդին , որ ձմեռը փողոցնե-  
րէն անցած միջոցին գուխը վերարկուին  
մէջ կը թաղէր , այնպէս որ իր լաւագրյն  
բարեկամներն անդամ չէին ճանչնար զնա  
տնէն դուրսը , հիմա մէկ կողմ կը նետէ  
իր պարանոցը փաթթած բրդեղէնը , վար  
կը կոտրէ վերարկուին օծիքը , բարձր եւ  
ուղիղ կը բանէ զլուխը եւ երեսը եւ պա-  
րանոցը կու աայ ցուրտ եւ սաստկաշունչ  
հովին . հաճոյք կը զգայ պաղ օդէն փո-  
խանակ անկէ փախչելու առաջուան պէս ,  
երբեք հոգ չըներ խայթիչ հովը եւ բուքը  
որոնք իր կոկորդին եւ քթին կը փչեն ,  
կը զաղրի այլեւս սցդ պատճառաւ ամէն  
տարի թժիշկներու դիմելէ :

ԱԿՈ-ԱՆԵՐՈՒԽ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր ակուաները մեր Արարիչը առւած է մեր տարիքին եւ վիճակին յարմար մեծութեամբ եւ թուով։ Յայսնի է թէ անոնց տրուելուն նպատակն է ծառայել մեղի կատարեալ ծամազութեամբ, ինչպէս կը հասկցուի անոնց կազմութենէն։ Եւ իրաւամբ կրնանք մակաբերել թէ, պատշաճ խնամով եւ անունդով կրնան անոնք այնքան տեւել որքան կը աւեւեն մեր եղունգներն ու ոսկորները։ Սյու ամենայնիւ հազուագէպ չէ տեսնել թէ յոյժ գնուաաի անձինք կեղծ ակուայ դրած են։

Ակուաներուն ժամանակէ առաջ փակուն պատճառը հետագայ պարագաներէն մէկը կամ աւելին է։ Ակուայի մնագեան պակասութիւնը, աաք եւ պաղ ըմպելիներու գործածութիւնը, լինկոյզ, կաղին եւն. կոտրելը, ակուաներուն անմաքուր պահուիլը, արագ ուտել, զանոնք քիչ գործածել, ծխախոտի եւ ուրիշ թոյներու կիրառութիւնը։ 1. Հիմակուան

ժամանակները ակուաները կ'աւրուին եթէ շատ գործածուի նորաձեւութեան կարգն անցած այն ճերմակ ալիւրը։ վասն զի այսպիսի շատ ճերմակ ալիւր անմտաբար գործածուելով՝ մածանիւթը, մանրաճճիները եւ ընդհանուր ոսկրային նիւթերը, մասնաւորապէս լուսածնատը, կ'արտաքսուին։ 2. Շատ տաք կերակուր կամ ըմպելի գործածելով եւ անկէ ետեւ պաղ գործածելով, ակուային կիտուածը կը ճաթի — այս կիտուածը ակուան բոլոր թթուներէ պաշտպանելու համար է — վասն զի բուն ոսկորը չկրնար տոկալ թթուներուն ներգործութեանը։ 3. Բնկոյզ, եւն. կոտրելով ակուաներուն կիտուածը կը ճաթի, ներքին մասը թթուներուն նշաւակ կ'ըլլան։ 4. Կ'աւրուին եթէ յաճախ չմաքրուին վրձինով զոր պէտք է օճառաջրի կամ ալքոլի մէջ թաթիսել։ Ասոնք կը չէզոքացնեն թթուները որոնք այնպէս շատ կը դանուին բերնին մէջ։ վասն զի կ'արտազրուին ուտեստի, եւն. մասնիկներու փառութենէն։ 5. Արագ ուտելով եւ ուտեստը բաւական չծամելով։ Այս աննպաստ է երկու

նկատումով : ուսեսառը պատշաճ կերպով չպատրաստուիր որպէս զի կարող ըլլայ մարսուիլ , եւ ակունքրուն ու ծնօտներուն բաւական գործ չարուիր որ զարդանան 6. Ծխախոտին գործածութիւնը մանաւանդ ծամելով . կորուսիչ է ակունքրու :

Հնգհանուր զարափար մը կայ թէ շաքարի գործածութիւնը աննպանա է ակունքրուն աեւողութեանը Բոլորսվին սխալ : Ահա Արեւմտեան Հնգկաստանի մէջ շաքար շատ կ'ուտուի շաքարաշինութեան ժամանակ եւ երբեք ակունքրու աննպաստ բան չպատահիր : Ճշմարիտ է նաեւ թէ Ամերիկեան հարաւային նահանգներու սեւերուն ակունքրէն աւելի ընափիր ակունքր կարելի չէ գտնել , մինչ անոնք ահադին քանակութեամբ շաքար կ'ուտեն շաքարաշինութեան յատուկ եղանակին : Այսու ամենայնիւ , քանի որ սնուշելէները տաքութիւն արտազրող են , ճերմակներուն համար աղէկ չէ զանոնք շատ գործածել տաք եղանակին , այլ՝ զով եղանակին պարտին պահել զանոնք : Իմ կարծեօքս ,

ոա իրողութիւնը թէ այս անուշեղէնները ամենուն համար ախորժելի են , աղէկ եւ բաւական ապացոյց է թէ արուած են ազատ եւ առատորդէն զործածուելու համար , մանաւանդ որ իւղային ուսեսանները , որոնք եւս տաքցնող են , աւելի գժուարամարս են :

Աղէկ է հոս աւելցնել թէ թունաւոր շատ շաքարեղէններ կան , որոնցմէ պէտք է խնամով զգուշանալ , քանի որ պարզ շաքարը ոեւէ անուշեղէնի չափ ախորժանամ է : Եւ սակայն թէպէտ շաքարը ընափէս աննպաստ չէ առողջութեան , պէտք է միաք բերել թէ՝ եթէ չափազանց առատութեամբ գործածուի շաքարը եւ ակունքրուն վրայ այնչափ մնայ որ խմորացում յառաջ դայ , կրնայ ակուայի փառութիւն յառաջ բերել :

րուն մէջ կը բնակիս : Հաստատ միտքդ  
դիր զանիկա չաւրել : Մի ուտեր զանի-  
կա վնասող բան մը : Մի հագնիր զանի-  
կա ծամածող կամ ցաւցնող բան մը :  
Մի բեռնաւորեր զանիկա ուտեստներով,  
ըմպելիներով կամ գործերով : Կանոնա-  
ւոր եւ շատկէկ քնացիր : Մարմինդ  
հոգուեցուր տաքուկ հանդերձներով :  
Յուրա մի առներ . ցուրտին դէմ մեծ  
զգուշութիւն ըրէ : Եթէ ցրտառութեան  
առաջին նշանները զգաս , դիւցազնաբար  
ըրէ ամէն դարման : Ինքինքդ լաւ մը  
տաքցուր մարմնամարդով : Այս է միայն  
այն մարմինը զոր ունիս այս աշխարհին  
մէջ : Խորտափէս եւ ժրաջանութեամբ ու-  
սումնասիրէ զայն կառավարող օրէնք-  
ները :

ՏՂԱՅՈՑ ԱԿՈՒԱՆԵՐՈՒԽ ԽՆՄԱՔ

Որովհետեւ կաթի ակրաները բնա-  
կան ընթացքով քանի մը տարիէն պիտի  
իյնան աել տալու համար մնայուն ակ-  
ռաներուն , ծնողք միտեալ են այնպէս

ենթազրելու թէ անօգուտ է մասնաւոր  
ուշագրութիւն ընծայել անոնց : Կը կար-  
ծեն թէ մինչեւ որ ազուն մնայուն ակ-  
ռաները դան , բաւական ժամանակ կայ  
ակռաներու հոդ տանիլ սորվեցնելու ա-  
նոր : Սխալ է այս :

Նախ՝ բնաւ կարելի չէ որ տղան բարի  
ունակութիւններու վարժեցնելը չափէն  
աւելի կանուխ ըլլայ : Երկրորդ՝ անոր  
մնայուն ակռաներուն աւելի աղէկ հոդ  
կը տարուի , եթէ վարժուած է իր կաթի  
ակռաները վրձինով մաքրել այն ժամա-  
նակէն սկսեալ երբ կարող եղաւ ակռայի  
վրձին գործածել :

Նաեւ կաթի ակռաները՝ որչափ կա-  
րելի է՝ երկար ժամանակ պահպանուելու  
են , եթէ կ'ուզուի որ աղան իր մանկու-  
թեան եւ չափահասութեան մէջ զեղե-  
ցիկ երեւի , հանգիստ եւ առողջութիւն  
վայելէ :

Անոնց ամենէն կարեւոր պաշտօննե-  
րէն մին է ծնօտներուն մէջ երկրորդ  
կարգի ակռաներուն համար տեղ մը բըռ-  
նել , եւ եթէ շատ շուա ելլեն , երկ-  
րորդ ակռաներն ալ շատ շուա կու զան

եւ իրենց կանոնաւոր աեղէն զուրս կը բուսնին : Սյն ատեն ետքի ակռաները բաւական տեղ չեն դաներ եւ կողմանակի կ'աճին կամ միւսներուն առջեւը կամ ետեւը կը խճալուին :

Առաջին ակռաները , երկրորդներուն պէս , պէտք են նաեւ կերակուրը լաւ ծամելու համար , գործողութիւն մը՝ աւելի անհրաժեշտ հետզհետէ աճող աղուն , որ աւելի սնունդի կարօտ է քան իրմէ երկու անգամ մեծ եղող անձ մը :

Վերջապէս իր ակռաներուն շարքին մէջ երեք չորս պարագ տեղ ունեցող տղու մը երեւոյթն ամենեւին գրաւիչ չէ : Եւ ծնողք ամէնալու են տեսնելով հետեւանքն իրենց անհոգութեան , որով իրենց զաւակներուն կաթի ակռաներուն պահպանման չհսկեցին պահանջուած զգուշութեամբ :

Երբ ակռաները կը բուսնին , անմիջապէս պէտք է մաքրել զանոնք կակռող լաթով : Իսկ երբ տղան բաւական կը մեծնայ , պղտիկ վրձին մը տալու է անոր եւ սովորեցնելու է գործածութիւնը : Այսուհետեւ մայրը կամ մանկապահը նա-

յելու է որ վրձինը կանոնաւորապէս գործածուի :

Ամէն տղու բերան տարին երկու երեք անգամ քննուելու է ատամնաբոյմէն եւ ուեւէ փոքրիկ ծակեր խցուելու են առմամեայ գրութեամբ մը . Արդարեւ առաջին ակռաներուն նոյնչափ հոգ տանելու է որչափ կը տարուի երկրորդներուն համար , վասն զի կարծատեւ ըլլալով հանդերձ տեւականներուն չափ անհրաժեշտ պայման են առողջութեան , գեղեցկութեան եւ հանդստութեան :

ԳԼԽՈՒՅՑԱՆ

Դլխու ցաւ կը պատահի կազմութեան բոլոր անկարգ վիճակներուն մէջ կրնայ պատահիլ գրեթէ բոլոր սաստիկ ու կարծատեւ եւ հինցած ու երկարատեւ հիւանդութիւններու միջոցին : Երբեմն կը պատահի անոնց ընթացքին մէջ , եւ երբեմն կրնայ անոնցմէ առաջ պատահիլ ։ Ցաւը կրնայ գուրսէն կամ ներսէն ըլլալ :

եւ պատճառն են տեսակ տեսակ ազգեցութիւններ որ կը ներգործեն կամ զըլխին մորթին եւ կամ գանկին պարունակութեան վրայ : Յաւին ենթարկուող մասնաւոր հիւսկէնները որոշելը կարի դժուարին է, մասնաւորապէս այն պատճառաւ որ տառապողը անկարող է որոշակի ըսել թէ ցաւը իր ո՛ր կօղմն է .

Դլխու ցաւը դուն ուրեք կը նկատուի որոշ հիւսնդութիւն : Կը նկատուի մանաւանդ կազմութեան մէջ ուրիշ հիւսնդութեան մը ախտանիշը կամ ընկերը Արեան շրջանի այլայլութիւններ, եւ անոր հետեւանքն եղող եղանակաւորութիւնները արեան ճնշման, արեան մէջ թունաւոր նիւթերու գոյութիւնը, ուղեղին փոխանցուած գրգռութիւններ մարմինն աւելի կամ նուազ հեռաւոր մասերէն, կամ մարսողական գործարաններուն խանգարեալ կամ ախտացեալ վիճակները, ասոնք ամէնքը պատճառ կը ընան ըլլալ տկարութեան այս ամենէն հասարակ ձեւին, գլխու ցաւին : Սյս պատճառները, երբ կը ներգործեն առանձինն կամ միասնաբար, ընկերանա-

լով ուղեղին ջիղերուն եւ այդ ջիղերը բովանդակող թաղանդներուն կարի զգայուն վիճակին հետ, ցաւ յառաջ կը բերեն :

Դլխու ցաւի ամենէն հասարակ ձեւը մարսողական գործարաններուն անկարգ վիճակէն յառաջ եկածն է : Սյսպիսի գլխու ցաւերը անմարտութեան եւ որովայնի պնդութեան հետեւանք են, ինչպէս նաեւ չափազանց ուտելու եւ խմելու : Խանգարուած սահմոքսը կամ աղիքներու յամի գործողութիւնը կամ անգործութիւնը հանդերձ չափազանց աշխատութիւնով եւ բաց օդին մէջ քիչ մարմնամարզով գլխու ցաւի յաճախաղէպ պատճառներ են այնպիսի անձանց համար՝ որոնք նսաղական գործով եւ տան մէջ փակուած ժամանակակ կ'անցնեն :

Սյս տեսակ գլխու ցաւի գարմանն է կանոնաւոր մարմնամարզ եւ ուտելու խմելու մէջ չափաւորութիւն, հրաժարելով այնպիսի ուտեստներէ որոնք աննդարար եւ դիւրամարս չեն, եւ ուշադրութիւն աղիքներու վիճակին :

Դլխու ցաւի ուրիշ տեսակ մ'ալ, որուն պատճառը երբեմն ուշադրութենէ

կը վրիպի , աչքին նեղութենէն յառաջ կու գայ : Յարմար ակնոցներ զործածուելով եւ աչքի մսաններուն վիճակը բարւոքեյու նպաստաւոր դարմաններ տհօրինուելով շատ անդամ շուտով ապաքինում ձեռք բերուած է :

ԱԿԱՆՉՆԵՐԸ ԾԱԿԵԼ ՕԴ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Զեմ կարծեր որ կանայք ծակելու են իրենց ականջները , բայց եթէ պիտի ծակեն , ականջները պէտք է որ պատշաճ կերպով դարմաննեն .» Սյսպէս պատասխանեց վիրաբոյժ մը նիւ Եօր՝ Հերբերի լրաբերներէն մէկուն որ պատմած էր թէ փոքրիկ իտալացի աղջիկ մը ուրուն ականջը ծակած էր մայրը , մեռած էր արեան թունաւորմանը : Կ'երեւայ թէ ծակերուն մէջէն կանաչ դերձան մը անդուած էր որպէս զի բաց մնային մինչեւ որ վերքերը աղէկնային :

Վիրաբոյժը երբեք հանդիպած չէր այդպիսի հետեւանքի , բայց աեսած էր

մեծապէս տառապողներ : «Ես երբեք տեսած չեմ ականջ ծակելու գործողութիւնը պատշաճապէս կատարուած ո՛չ մայրերու եւ ո՛չ գոհարավաճառներու ձեռքով , » ըստ : Սյս առտնին գործողութիւնը երբեք ըստ պատշաճի չկատարուիր : Ամենէն մաքուր անձը , երբ վիրաբուժական գործողութեան կ'ենթարկուի , երբեք մաքուր չէ զիտական տեսակէտով , անմաքուր է բժշկականապէս : Կ'արթէ որ զիանաք թէ ի՞նչ ծայրագոյն աստիճանն զգուշութիւն ի գործ կը զրուի բոլոր լաւ կառավարուող հիւանդանոցներուն մէջ : Գործողութիւնն կատարող վիրաբոյժը երբեք չթողուր որ մէկը մինչեւ իսկ անձեռոց մը ատայ իրեն , եթէ նա իրեւ իրեն օգնական իրեն ձեռքերը հականեխելով մաքրած պատրաստած չէ : Գործածուելու բոլոր գործիքները մաքրուած են :

«Բայց , ընդհակառակն կին մը ասենք կ'առնէ , որեւիցէ ասեղ մը , եւ անոր կ'անցնէ որեւիցէ գերձան մը : Սյս դերձանը թերեւս անոր կարի սակառին մէջ ամիսներէ հետէ կը կինար ամէն տեսակ

գոյներ ունեցող ուրիշ զերձաններու կից։  
Չխորհիր լուալ իր ձեռքերը, կամ ա-  
կանջը որ պիտի ծակուի։ Սունկ մը  
կ'առնուի չիշի մը բերնէ, առանց խոր-  
հելու թէ ի՞նչ կը պարունակէ շիշը, կամ  
ո՞րչափ ատենէ ի վեր սունկը կը կենայ  
փոշիին մէջ։ Այս սունկը կը զրուի ա-  
կանջին բլթակին ետեւը ասեղին դէմ  
իրեւ յենարան։ բնական հետեւանքը  
կ'ըլլայ բորբոքում եւ թարախում։

«Ես միշտ պնդած եմ թէ գործողու-  
թիւնը պարափ կատարուիլ վիրաբոյժի  
ձեռքով, եւ այնպիսի վիրաբոյժի՝ որ  
գործողութիւնը պատշաճօրէն կատարե-  
լու նեղութիւնը յանձն կ'առնէ։ Բլթակը  
լուացէք հականնեխականով մը։ Լաւ մը  
մաքրեցէք զայն վիրաբոյժի մը զգուշա-  
ւորութեամբ։ Գործածեցէք ծակու ասեղ  
մը։ Անցուցէք զայն բլթակին կեզրոնէն  
եւ անոր հետ ուղիղ անկիւնով։ Գոր-  
ծածեցէք յատուկ պատրաստուած մե-  
տաքսաթել, այնպէս որ զերծ ըլլայ հի-  
ւանդութեան սերմերէ, եւ դիւրին դառ-  
նայ ծակին մէջ, որպէս զի բորբոքում  
յառաջ չգայ։»

## ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՇիՇերՈՒԻ ապակիէ խցիկը ( Ապէս )  
երբեմն անհնար կ'ըլլայ հանել։ կաթիլ  
մը ձէթ քսէ չուրջը եւ կրակին մօտ  
բռնէ որ տաքնայ։ անշուշտ թող պիտի  
տայ։ կրկնէ գործողութիւնը եթէ առա-  
ջին անդամ չ'յաջողի։

ՄՈՐԹԻ ձեռնոցներ մաքրելը դիւրին  
է։ Թարմ կաթ զիր պնակով ձախ կողմէ,  
ուրիշ պնակի մը մէջ օճառ մը զիր, եւ  
քանի մը անդամ ծալլուած մաքուր լա-  
թի մը վրայ տարածէ ձեռնոցը, յետոյ  
ֆանէլայի կտոր մը թաթիսէ կաթին մէջ  
եւ լաւ մը օճառին քսելով ձեռնոցին  
վրայ քսէ միշտ դէպի մատները։ Շա-  
րունակէ եւ թող որ չորնայ։

ՑԵՑԼ հանդերձանոցէն հեռու պահե-  
լու համար բերանը բացուած չի մը թէ-  
րէմէնթինի ողի պահէ հոն։

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԴԵԹԷ կուզես պահել , նաեւ առոյգութիւնդ , կանուխ ելիր . կուզես պահել արժանիքդ , համեստ եղիր . կուզես երջանիկ ըլլալ , ջանա այլոց երջանկութեան պատճառ ըլլալ :

ԴՈՒՌՆԵՐԸ բաց պահելու համար քարի մը վրայ ծաղիեայ կերպասի մը կտոր անցուր եւ դրան առջեւը զիր :

ՃԱՆՃԵՐՆ փճացնելու համար առ դպալ մը սեւ պղպեղի փոշի , դգալ մը շաքար եւ դգալ մը սկր (եփած կաթին երեսէն) , խառնէ եւ ողնակով զիր սեն-հակը :

ՍՊԻԾԱԿ ԶԵՐՔԵՐ Քրաւաթ մը Քօ-  
Լօնիոյ ջուր եւ նոյնչափ լիմոնի հութ շալուէ օճառի փոշիով մինչեւ թանձր խմոր ըլլայ , եւ ուզած ձևելով վերածե-  
լով չորցուր եւ ասով լուա :

ՄԵՏԱՔՍ , սաթէն եւ բրթեզէն նիւ-  
թեր այսպէս կը մաքրուին . 32 կրամ

օճառ , նոյնչափ մեղր , հաւկիթի մը ձեր-  
մկոցը , եւ գաւաթ մը ուօմ լաւ խառնէ  
եւ նիւթը այս հեղուկով չփէ վրձինով ,  
յետոյ պաղ ջուրէ անցուր , կախէ որ  
ցամքի եւ արդուկէ քանի որ զեռ խո-  
նաւ է :

ԿԱՆԴԵՂԻՆ պասրոյզը , որպէս զի չը  
միսայ , զօրաւոր քայալի մէջ թաթինէ  
եւ չորցնելէ յետոյ գործածէ :

ԿՕՇԻԿՆԵՐՆ ջրոյ անթափանձ ընելու  
համար քիչ մը մեղրամո՞ր եւ ոչխարի  
ճարան հալեցուր եւ կօշիկին եղերքնե-  
րուն քսէ :

ԱՊԱԿԵՂԵՆՔ պէտք է միշտ պաղ  
ջրով լուանալ , որով միշտ փալլուն եւ  
պայծառ կերեւին :

ԱՆԿՈՂՆՈՅ մէջ կարդալն վեստ-  
կար է աչաց եւ կը կուրացնէ զանոնք :

## ՄԵՐ ԽՈՀԱՆՈՅԸ

Լաւ ջարդուած եղան ճարալ մէկ մեծ  
գաւաթ , կաթ՝ փոքր գաւաթ , հացի  
փշրանք՝ 50 տրամ , չամիչ (+էնէլ) 50  
տրամ լաւ մաքրուած , 25 տրամ նուշ  
ծեծուած , 10 տրամ չամիչ , 3 հաւկիթ  
լաւ զարնուած , երկու հաւկիթի սպի-  
տակ , շաքար , հնդկացնկոյդ , կինամոն  
ծեծուած եւ գաւաթ մը ոոմ : Բոլորը  
խառնէ խմոր մը շինէ եւ կաղապարի մը  
մէջ դնելով երեք ժամ եռացուր :

Կէս քաշ ալիւր , 75 տրամ շաքար ,  
8 տրամ վնաճէֆէլ լաւ ծեծուած : Ա-  
սոնք ալիւրին հետ լաւ մը խառնէ . 75  
տրամ կարագ հալեցուր , 4 հաւկիթ  
զարկ եւ կարագն ու հաւկիթներն իրար  
խառնէ որ խմոր մը կ'ըլլայ : Փոքրիկ կար-  
կանդակներ ձեւացուր եւ չափաւոր տա-  
քութեամբ փոան մէջ եփէ :

Հինգ հաւկիթ եւ 50 տրամ շաքար  
ծեծուած եւ մաղուած : Հաւկիթները

շաքարին վրայ կոարէ , կէս ժամ զարկ ,  
լեմոնի մը կեղեւը վրան տաշէ եւ եր-  
կուքուկէս հաւկիթի կեղեւի պարունա-  
կածին չափ ալիւր վրան աւելցնելով լու-  
մը խառնէ եւ կարագով օծուած թթի  
վրայ լեցունելով դիր գաղջ փոան մէջ :

Շաքար լաւ ծեծուած եւ մաղուած ,  
ասիտ թարթարիք , քարպօնաթ սոտա  
25 ական տրամ , լեմոնի ողի (Էսանս) 40  
կաթիլ : Այս շաքարին հետ խառնէ եւ  
միւս փոշիները վրան աւելցուր եւ եր-  
կու անդամ մաղէ եւ պահէ խցեալ շիշի  
մը մէջ չոր տեղ մը : Առողջարար եւ  
կազդուրիչ ընպելիք կունենաս երբ դգալ  
մը դնես գաւաթ մը ջրոյ մէջ :

Շաքար 2½ քաշ , լեմոնի հիւթ 25  
տրամ , մեղր 25 տրամ , վնաճէֆէլ ծեծ-  
ուած 50 տրամ , ջուր 12 քաշ : Զուրին  
երեք քառորդին մէջ վնաճէֆէլը կէս ժամ  
եփէ : Վրան շաքարը լեցուր նաեւ լեմո-  
նին հիւթն եւ մեղրը եւ միացեալ ջուրը  
եւ քամէ : Երբ պազի , հաւկիթի մը  
սպիտակին մէկ քառորդը վրան աւել-

ցուր եւ թէյի դգալ մը լեմոնի ողի: Թող  
կ օր կենայ, յետոյ շիշերու մէջ զիր  
գոցէ եւ պահէ. ամիսներով կրնայ պահ-  
ուիլ այս ընտիր ըմպելիքը:

Մէկ չափ խնձոր, երկու չափ ալիւր  
խնձորն եվէ եւ մածունի նման ըլլա-  
լուն, ալիւրն եւ քիչ մը խմոր (ճայա)՝  
վրան աւելցնելով՝ քիչ ջրով հացի նման  
չաղուէ եւ թող որ խմորի (ճայալանճակ).  
8-12 ժամ յետոյ երկայն հացերու բաժ-  
նելով փուռը խրկէ:

Նորածին մանկանց մէկ անդամուան  
ուտելիքն է դգալ մը թարմ կոսի կաթ.  
սա երկու դգալ տաք ջրոյ հետ խառ-  
նելով քիչ մը շաքար զիր: Ամէն 2-3  
ժամը նոյնը պէտք է տրուի, մինչեւ  
մայրը կարող ըլլայ անձամբ մնուցանել:

Վեցամսեայ երախայից համար 100  
տրամ կաթ (միշտ թարմ եւ նորթ ունե-  
ցող կովէ) եւ 100 տրամ ջուր եռացուր.  
կէս գաւաթ պաղ ջրոյ մէջ մեծ դգալ մը  
ալիւր խառնէ եւ կաթին վրայ լից կամաց

կամաց եւ միշտ խանելով, թող 20  
րովէ եռայ: Աւելի մեծ մանկանց հաշ-  
մար միայն ջրոյ մէկ երրորդը զնել պէտք  
է: Սա է ամենահաճոյ եւ էն առողջա-  
րար կերակուրը մանկանց համար:

Հարիւր արամ կաթի մէջ երկու զզալ  
բրինձ զիր — հարկաւ լաւ մաքրուած եւ  
լուացուած, երկու խնձոր և կտոր ըրէ,  
կեղեւէ եւ մէջը զիր: քանի մը չամիչ  
ալ կրնայ աւելցուիլ: Կամաց կամաց ե-  
փէ մինչեւ որ բրինձը հալելու մօտ ըլ-  
լայ: Կաթի եւ շաքարի խառնուրդի մէջ  
հաւկիթ մը զարնելով վրան աւելցուր եւ  
թող որ պաղի:


Գետնախնձոր 10-20 հատ խաշէ,  
ստիէ եւ փայտէ զգալով ձգմէ, 4 հաւա-  
կիթ 100 արամ կաթի մէջ զարկ եւ  
գետնախնձորին խմորին հետ խառնէ:  
շաքար եւ համեմ աւելցուր ըստ ճաշա-  
կի: Անօթ մը իւղոաէ, մէջը զիր եւ կէս  
ժամ փուռը թող կենայ:

Եւ սա ապուրին ինչ պիտի ըսեն մեր

տիկնայք, բայց թող փորձեն եւ տեսնեն : Սոխը շատ բարակ կը ջարդին . կարագ հալեցնելով եւ գալ մը այիւր եւ հացի մանրութ հետը խառնելէ ետեւ , բոլորը կրակի վրայ կը խռոռվեն . երբ դեղնագոյն կ'ըլլայ սոխը, մէջը լից ջուր կամ միսի ջուր այնքան որքան կուզես որ ապուրն ըլլայ , քիչ մ'ալ հնդկացն կոյդ եւ աղը դնելէ ետեւ թող որ եռայ :

Կաթով ալ ապուր կ'ըլլայ , Եռացած կաթին վրայ կարագի մէջ խորոված հացի մանրութ աւելցուր եւ պէտք եղած աղն ու պղպեղը մէջը դնելով քիչ մը եփելէ ետեւ պատրաստ է ուտառելու :

Խաշած գետնախնձորը մաքրելէ ետեւ մանրէ (ռէնտէ) եւ հալած կարագի մէջ խառնէ , յետոյ միսի ջուր լից վրան (կամ պարզ ջուր) եւ պէտք եղած աղն ու համեմը մէջը դնելով թող որ եփի : Հաւ ապուր մ'է այս :



## ՀԱՐՑԵՐՈՒ ՊԱՏՍՈՒԱՆԵԲ

Կայծակի եւ որոտման տաեն ի՞նչ զգուշութիւն ընել հարկ է :

— Կայծակէն մի վախնար , սակայն զգուշութիւն ըրէ , մետաղներու քով մի կանգնիր , բարձր ծառերէ եւ ծիննելոյդներէ հեռու կեցիր , սենեակին գուման ու պատուհանները մէկտեղ մի գոցեր , թող որ օդ մանէ հոն մէկ կոզմէ : Ոչխարին շատ անգամ կը զարնուին քանզի միմեանց քով խռնեալ կանգնելով շողին վեր կելլէ ու կայծակը կը հրաւիրէ , նոյն պատճառաւ մարդիկ նաեւ խմբովին նստելու չեն կայծակի ատեն : Կայծակի ատեն վազելն ալ վտանգաւորէ , քանզի օդի հոսանք կը պատճառէ այսպէս ընելով :

Հիւանգութիւններէ զերծ մնալու համար ի՞նչ ընելու է :

— Մատոր պատասխանը Օբացոյցին Ա-

ոռղջաբանական մասերն ուշագրութեաք  
կարդալով եւ — ըսուածներն ի գործ դնե-  
լով — կ'ըլլայ , Եթէ կուզես սակայն Զի-  
նու կայսեր օրինակին հետեւէ : Նա ,  
Քիչն Լօնկ , ունէր չորս բժիշկ , որոց  
յանձնած էր իւր առողջութիւն . ամէն  
շաբաթ անոնք վարձքերնին կ'ստանալին  
ցորչափ կայսրը առողջ էր , հիւանդա-  
ցած օրէն սակայն կը դադրէր վճարմունքու  
«Վստահ եղիք , կ'ըսէր կայսրը , որ հիւ-  
սունդութիւնքս խիստ կարճատեւ կ'ըլ-  
լան» :

Խնդրեմ ըսէք , ի՞նչ ընեմ որ մազերս  
չթափին :

— Առ 4 ափ դոսախի (չէ չէր) տերեւ,  
մէկ ու կէս քաշ ջրոյ մէջ 15 վայրկեան  
եռացուր գործուած հողէ ամանի , ը մէջ ,  
քամէ , վրան աւելցուր 3 մեծ զգալ Գո-  
լօնիոյ ջուր (օ առ Քօլն) . այս հեղուկով  
գլուխդ ամէն առաւօտ լաւ մը շփէ :

Եթէ մէկը շունէ խածնուի ի՞նչ ընե-  
լու է :

— Բաւ է որ շունը կատղած չէ , ան

ատեն խածած մասը պաղ ջրով լուա ,  
վէրքը ծծէ ու աղ ջրով լուա . ապահով  
է գժոխաքարով վէրքը յետոյ տաղել :

Կատուին ճանկած մասին դեղ պէօտք  
է :

— Ո՛չ , լաւ մը լուա եւ մաքրէ , եւ  
եթէ վէրքը խոր է , տաք ջրոյ մէջ լաթ  
մը թաթիսէ վրան զիր :

Մեղուին խայթին ի՞նչ դեղ լաւ է :

— Ամօնիա եւ ոչ ուրիշ բան , խցիչը  
(Յանեար) ամօնիայէն թրչել տուր եւ խայ-  
թին վրայ քսէ : Եթէ այս նիւթէն չու-  
նիս , աղջուր գործածէ եւ ձէթով չփէ :  
Սակայն միշտ խայթոցը վէրքէն հանել  
կարեւոր է : Մժեղին եւ այլ խայթերու  
համար ալ այս դեղ գործածէ :

Զուկ կերած ատեն երբ տղայոց կո-  
կորդը փուշ մնայ , ի՞նչ ընելու է :

— Կէս ծարած հացի պատառ մը կուլ  
տալ , եթէ օգուտ չընէ եւ փուշը կե-  
րեւի , մատով դուրս քաշէ :

Քիթին մէջ օտար նիւթ մը մտած ա-  
տեն ի՞նչ պէտք է ընել :

— Քիչ մը քթախոս քաշել առւր որ  
փոնդտայ , սակայն քթախոսը շատ մեղ-  
միւ քաշելու է , քանզի օտար նիւթն  
աւելի վեր կը մզուի եթէ ուժով քաշեն .  
Շունչը բերնէն պէտք է առնել մինչեւ  
նիւթն հեռանայ քիթէն : Եթէ չելնէ ,  
պէտք է նիւթին եղած տեղէն վեր սեղ-  
մել քիթը եւ բուխ շիշով մը դուրս  
քաշել :

Ականջս օտար նիւթ մտած ատեն  
ի՞նչ ընեմ :

— Շիրինկայով մը ջուր մզէ ական-  
ջը որ ներսի նիւթը լողալով դուրս քըշ-  
ուի : Եթէ ճանձ ըլլայ ականջին մէջ  
մտածը , նախ ձէթ կաթեցուր ականջին  
մէջ որ միջատը մեռնի եւ ապա ջուր  
մզէ հոն :

Երբեմն մտանին մտէն չելլեր ինչ  
որ ընենք , միջոց մը կայ :

— Այո՛ , մատը իւղոտէ , աճառէ եւ  
ջանա մատնին սահեցունել . եթէ չէ

հնար , թող կենայ մէկ երկու ժամ ,  
յետոյ մատը պաղ ջուրի մէջ դիր մէկ  
քանի րոպէ , չորցունելէ ետեւ , առ  
երկայն եւ բարակ դերձան մը եւ մա-  
տին ծայրէն սկսելով շարունակ կարգ  
կարգ փաթթէ մինչեւ հասնիս մատա-  
նիին սկերքը . դերձանին ծայրը անցուր  
մատանիին տակէն եւ բռնելով կամաց  
կամաց քակէ մինչեւ մատին ծայրը .  
քակուած դերձանը մատանին հետը կը  
տանի : Այս ալ չեղաւ . է՞հ , խարտոքը  
դորձածել տուր ուրիշի մը :

Ծաղիկներս ի՞նչպէս թարմ պահեմ :

— Փունջը սրակէ ջրով եւ ամանին  
մէջ օճառի ջուր լից եւ հոն դիր , ամէն  
առաւօտ հանէ փունջը ամանէն , պաղ  
ջոյ մէջ դիր եւ ապա նորէն ծաղիկին  
ամանին մէջ : Օճառին ջուրը Յ-4 օրն  
անգամ մը նորոգէ : Ամիս մը ծաղիկները  
թարմ կը մնան :

Մուկերէն աղատելու ճար մը գիտէ՞ք :

— Մուկերուն եղած տեղը արջասպի  
(ժարա պէջա) խառնուրդով պատրան ընել

տուր, մուկերուն եղած անդերը արշասպ դիր եւ բոլորը կ'անհետանան : Պատրանացին մէջ արջասպ խառնելուն օգուան է նաեւ որ նէֆօ, չերմ, դէսնիէրի եւ այլ հիւանդութիւն տունէն կ'արտաքսուին :

Պարզ անդիխական խորեղէն մը հաճեցէք յանձնարարել :

Առ 100 տրամ կարագ եւ լաւ մը զարկ, 100 տրամ հաւկիթ կշռէ զարկ 20 բոպէ որ փրփրայ, հարիւր տրամ անկուտ չամիջ եւ 100 տրամ շաքար . բոլորն ալ լաւ մը խառնէ՝ քիչ մը կաթ աւելցունելով, յետոյ փուռը տար :

Յօդացաւ (բայանելով) ի՞նչպէս կրնայ բժշկուիլ :

Կէս քաշ սօտա (լուացքի սօտա) առ եւ տաք ջրոյ մէջ հալեցունելով լոգարանին մէջ լից պէտք եղած ջուրով եւ հիւանդը մէջը թող նստի, կամ յօդացաւ ունեցած մասը միայն մէջը դրուի : Յ օրն անդամ մը կրկնէ զայս : Ջուրը չպաղելու համար լոգանքի ատեն

տաք ջուր աւելցունելու է :

Վախէն մարդ կը մնոնի :

— Այս', պատմութիւն մ'ընեմ : Արապները կըսեն թէ օր մը ժանտախտին հրեշտակին պատահեցաւ ճանապարհորդ մը որ Գահիրէ կ'երթար : Ո՞ւր բարով հարցուց ճանապարհորդը մահուան հրեշտակին :

— Դէպի Գահիրէ, պատմխանեց սա:

— Ի՞նչ գործով :

— Երեք հազար հոգի սպաննելու պաշտօնով :

Ժամանակ անցաւ եւ ճանապարհորդը նորէն պատահեցաւ այն հրեշտակին : « Ստեցիր », ըսաւ ճանապարհորդը, « Է՞՞ որ 3000 պիտի սպաննէիր, ինչո՞ւ 30,000 ջարգեցիր :

« Զէ » . ըսաւ հրեշտակը . « յիրաւի ես միայն 3000 սպաննեցի, մնացեալք վախներնուն մեռան » :

Քիթէն հոսած արիւնը ի՞նչպէս դադրեցունելու է :

— Գեր եւ արիւնոտ անձանց այս

արեան հոսում բնական եւ անվեաս է ,  
այլոց համար պէտք է իսկոյն դադրեցունելու ջանք ըլլայ . գլուխը ետին հակած եւ թեւերը վեր բռնած ճակտին եւ երեսին պաղ ջուր սրսկելու է , եւ եթէ չդադրիր , աղջուր կամ պաղլեղի (շաղ) ջուր քաշելու է քիթին մէջ :

Երբ մէկ տեղս կտրեմ , ի՞նչ ընելու եմ :

— Պարզ գեղն է սեւ պղպեղը , լուա կտրուացքը եւ չորցունելէ ետեւ ծեծուած սեւ պղպեղը վրան ցանէ եւ կտրպէ . թող այսպէս մնայ մինչեւ անցնի :

Այրուացքի կամ խաշուացքի ի՞նչ պարզ գարման կայ :

— Լաթի մը կտոր թաթիսէ բեւեկնիի իւղի (Աէրէմէնէ եաղի) մէջ եւ վրան դիր թեթեւ այրուացքի համար օճառն ալ լաւ գեղ է . կամ հաւասար չափ կիրի ջուր եւ ձէթ , քիչ մ'ալ բեւեկնիի իւղ իրարու խառնելով լաւ գեղ կ'ըլլայ : Եթէ կիրի ջուր չկայ , հաւեկիթին ճերմակն եւ ձէթ միմանց խառնելով նոյն

դործը կը աեսնայ :

Տղու մը հանդերձ եթէ բռնկի , ինչ ընել հարկ է :

— Պաղարիւնութեամբ եւ առանց շփոթելու գորգ (իսալը) մը տարածել բռնկած տղուն վրայ եւ զլտորել . չափահասի մը հանդերձն եթէ բռնկի , փոխանակ փախչելու թող գեաինը պառկի եւ գլորի :

Հարուած մը երբեմն աչքին կամ զըլխուն վրայ սեւ նշան կը ձգէ , կա՞յ միջոց ասոր դէ՞ :

— Այս . քացախ ջրոյ մէջ լաթ մը թաթիսելով փոփոխակի վրան դնել եւ ոչ ուրիշ բան :

Գետնախնձորէ կարկանդակ կ'ըլլայ :

— Ահաւասիկ . 100 տրամ խաշած ճղմուած գետնախնձոր , 25 տրամ անկուտ չամիչ , նոյնքան չաքար եւ կարագ եւ 4 հաւեկիթ խառնէ եւ փուռը տուր :

Հաղի համար գեղ մը կրնա՞ք յանձ-

Նարարիկ :

— Ֆանէլայի մը կաոր թաթիսէ տաք ջրոյ մէջ զրուած մանամեխի ջրոյ մէջ եւ դիր քամելէ ետեւ կուրծքին վրայ . կրինէ եւ շատ օղուտ պիտի տեսնես : Նաեւ կրնաս բեւեկնիի խւղի մէջ թաթիսել ֆանէլան եւ կուրծքիդ վրայ գնել . երկուքն ալ կը տաքցունեն եւ կը կարմրցունեն կուրծքը :

Վէրքի պարզ դարման ո՞րն է :

— Կաւը փոշի ըրէ , վէրքին վրայ ցանէ , չուտով կը բուժի վէրքը :

Սենեակին օդին ապականեալ ըլլալուն ստոյգ նշանն ի՞նչ է :

— Երբ սենեակին ճրագները պայծառ չեն վասիր , օդն ապականեալ է , պէտք է պատուհան բանալ :

Պարզ մարմնամարզն ո՞րն է :

— Արանց համար վայա կոտրել եւ սղոցել . կանանց համար դաշնակ զարնել եւ մեքենայով կար կարել , որոնց մով բոլոր մարմին շարժման մէջ կը

զրուի : Քալելը նաեւ պարզ մարմնամարզ մ'է , ամբողջ մարմնոյն վրայ կ'ազդէ եւ չնչառութեան ու արեան շրջանը կը զօրացունէ : Նախանհծով մի՛ նայիք շքեղ կառքով շրջողներուն վրայ , անոնք մարմինը տկարացնող գործիքներ են եւ կը փութացնեն մահ . մեր սրունք քալելու համար են շինուած , կառքը կը պաղեցունէ մարմինը եւ կ'արգիլէ ամէն տեսակ բնական շարժում :

Ծովուն եղերքի քայլախազներն ի՞նչպէս յղկեալ են , այսպէս են շինուած արդեօք :

— Ոչ , անոնք ամէնը ծուռ ու մուռ ժայռի կառրներ էին սուր եւ հատու (կտրող) ծայրերով : Ալիքներէն հոս ու հոս նետուելով եւ այսպէս մէկզմէկու քսուելով՝ իւրաքանչիւրը կորսնցուցեր է իր սրութիւն եւ եղեր է կլոր , ծուածեւ եւ յղկեալ քայլախազ : Լաւ դաս մը կայ հոս : Մենք մարդիկս բնութեամբ տձեւ , տգեղ ու ծուռ ու մուռ եւ սուր եւ հատու էակներ ենք : Ամէն կերպ փորձանք , այսինքն մեզի համոյ չեղած ո

եւ է բան, նման ալիքի, մեզ հղուու  
հրն կը քչէ կենաց ովկիանոսին մէջ,   
մէկզմէկու կը քսուինք, ընդհարումներ  
կունենանք, եւ իւրաքանչիւր կը կոր-  
սնցունէ իր տգեղ եւ վնասակար բնու-  
թիւն, կը յղկուի եւ հաճելի էակ մը  
կ'ըլլայ, Ասոր համար Թակորոս երանելի  
կը կոչէ զայն որ փորձանաց կը համբերէ:

Երբ մոմի բիծեր ըլլան հանգերծի  
վրայ, ի՞նչպէս հեռացնելու է:

— Լաթի մը կտոր 2—3 անգամ ծալ-  
լէ եւ քիչ մը թրջէ, մէջը վառած ա-  
ծուխ դիր, վաթթէ եւ բիծին վրայ  
ճնշէ, Մոմը կը հալի եւ ածուխը կը ծծէ  
վերջին կաթիլը առանց հետք մը ծղելու,

Վարդի իւղ ի՞նչպէս կը շինուի,  
— Մայիս ամսոյ մէջ վարդերը ժող-  
ուելով եւ ամէն օր հաւաքուած վարդը  
ջրոյ մէջ նետելով կ'եռացունեն եւ կը  
թուրեն (էտպէկէ կ'անցնեն): Քանի որ  
ջուրը կը շողիանայ, երեսի իւղը կ'առ-  
նեն եւ շիշի մէջ կը դնեն, Երկու քաչ  
վարդէն հազիւ մէկ տրամ իւղ կելէ:

Թէ՛լի՞նչպէս պատրաստելու եւ խմե-  
լու է: — Թէյի գործածութիւնը մասնաւու-  
րապէս ցուրաւ եղանակներուն՝ սովորու-  
թեանց կարգը մանելու վրայ է այս  
երկրին մէջ, ի՞նչպէս է երկար ժամա-  
նակէ հետէ Ռուսիոյ եւ Պարսկաստանու-  
եւ ուրիշ երկիրներու մէջ, Թէյն ալ ու-  
րիշ ըմպելիներու նման, բացի անոյշ,  
յատակ ջուրէն, կրնայ այնպէս գործած-  
ուիլ որ մարդուս թէ օգտակար եւ թէ  
վնասակար ըլլայ, Բայց եթէ լաւ պատ-  
րաստուի եւ չափաւոր գործածուի, շա-  
տերու թէ ախորժելի թէ օգտակար ըմ-  
պելի մը կ'ըլլայ, Երբ թէյը մէկու մը կը  
վնասէ, ճարտար բժշկի մը խորհուրդ  
հարցնելու է, Մարդկային մարմինը բա-  
ւական ջուրի պէտք ունի, ի՞նչպէս ու-  
տեսատի պէտք ունի, Զափազանց պաղ  
ջուրը, մանաւանդ ձմեռուան մէջ, ա-  
ղէկ չէ, եւ մարդ չուզեր միշտ տաք  
ջուր խմել:

Ընդհանրապէս բաւական կ'ըլլայ շա-  
տերու օրը մէկ անգամ թէյ խմել, եւ  
մէկ անգամուն երկու գաւաթթը կը բաւէ:

Քիչ կը պատահի , որ մարդ օրը երկու անգամէն աւելի առնէ : Թէյին մէջ պէտք է քիչ մը շաքար դնել , շատ քիչ քանակութեամբ դնելու է կաթ , կարագ կամ սեր :

Թէյը յաճախ գէշ կը պատրաստաւի , ուստի այն տաեն կ'ըլլայ անախորդ եւ վնասակար ըմպելի մը : Փոքրիկ թէյի դգալ մը մարդու մը բաւական է մէկ անգամուան համար : Թէյամանին ներսի կողմը պէտք է որ տաքցուի քիչ մը տաք ջուր լեցնելով , յետոյ այս ջուրը պէտք է թափել , եւ մէջը թէյը դնել եւ վրան եռացած ջուր լեցնել : Սյնուհետեւ թէյը պէտք չէ որ եռայ , այլ՝ մնայ տաք տեղ մը հինգէն մինչեւ ատօր վայրկեան , եւ ահա խմուելու պատրաստ կ'ըլլայ : Գործածուած թէյը պէտք է նետել եւ թէյամանը լաւ մը մտքրել եւ չոր պահել մինչեւ որ նորէն թէյ պատրաստել պէտք ըլլայ : Բոլոր այս կանոնները կարեւոր են , վասն զի հինգած թէյը մնասակար տարրեր կ'արտադրէ :

Ժամացոյցներն ի՞նչպէս կործածելու է :

— Ժամացոյցը բազագրեալ մեքենայ մըն է : Ամենէն պարզ ժամացոյցը հարիւր յիսուն ուրոյն մասեր ունի , ոմանք մինչեւ իսկ հազարէն աւելի . եւ մէն մի մաս դեղեցկապէս յարմարցուած է իր փափուկ պաշտօնին : Շարժումները երբեք չեն դադարիր , եթէ ժամացոյցին տէրը զանց չընէ զանիկա լարել նախազգուշամեամբ որ անհրաժեշտ է անոր բանելուն , կամ եթէ ընդհակառակն այնքան հոգածու ըրլայ որ ինք իր ձեռքովը շիտկել փորձէ անոր թերութիւնները զմելինով , գնդասեղով , մատիտով կամ ուրիշ ատօնց նման անյարմար գործիքով :

Ժամացոյցդ կանոնաւոր միջոցներ տալով լարէ : Ժամացոյց գործածողներու համար առաջին մեծ կանոնը այս է : Հաւանորէն առաւօտն է ժամացոյց լարելու լաւագոյն ժամանակը , որպէս զի ժամացոյցին զսպանակը իր մեծագոյն ձկանան մէջ գանուի ցերեկին , երբ ժամացոյցին գործիքները աւելի ցնցուելու ենթակայ են : Ժամացոյցդ կանոնաւոր միջոցներ տալով մաքրել եւ իւղոտել

տուր : Փափուկ հաւասարակշռիչ անիւրը տարուան մէջ 150,000,000 ճօճում կ'ընէ : Ամենէն ընտիր իւղն անդամ սուընձային , փակչուն հանդամանք մը կ'առնէ այսպէս շարունակ շփման մէջ :

Ժամացոյցի գրպանդ մաքուր պահէ : Մի՛ թողուր որ անոր անկիւններուն մէջ կտաւի թելեր կամ նուրբ փոշի հաւաքուին : Օգուտ չըներ ժամացոյցին կաշ փարիչներուն խնամով գոցուիլը , նուրբ փոշին դիւրաւ կը մտնէ ներս եւ կը կատարէ իր աւերկութեան գործը :

Ամենէն աւելի , սանձէ հետաքրքրութիւնդ : Մի՛ բանար կափարիչները եւ զններ մեքենաները : Ժամացոյցին մեքենաները տակաւին իրենց տեղերը կը կենան թէպէտ երէկուընէ հետէ չետ տեսած զանոնք : Եթէ ժամացոյցդ գործելէ դազրի պատճառով մը , մի՛ ջանար դուն ինքնդ հասկնալ թէ ի՞նչ է պատճառը : Ժամագործը քեզի չնեղանար եթէ լոկ նայիս եւ յաւերլուածական վասն մը չընես ժամացոյցին : Եւ մի՛ փորձեր ժամացոյցիդ ետ միալը կամ առաջ երթալը շիտկել : Թերեւս այդ բանը կա-

րող ըլլաս ընել յաջողակութեամբ . բայց պարագաներուն անտեղեակ ես . Թերեւս երբեք պէտք չկայ ժամացոյցը խառնելու : Բոլոր ժամացոյցները բայց ի լաւագոյններէն , ձմեռն առաջ կ'երթան եւ ամառը ետ կը մնան : Բայց կան մարդիկ որ իրենց ժամացոյցը կը չլատկեն իրենց տեսած ամէն ժամացոյցի վրայ , եւ կը շարժեն անոր կանոնաւորիչն ալ :

Ապակիէ եւ թղթէ ղգեսա ի՞նչպէս կը չինուի :

— Սովորաբար կը համրուի թէ տիկնոջ մը գլխարկը գտնուած իրերուն մէջ ամենէն շուտ հինդող եւ անպիտան եղողներէն մէկն է : Բայց եթէ գլխարկներն ապակիէ ըլլան , այն ատեն բանը շատ տարբեր կըլլայ : Տիկինը կամ օրիորդը իր գլխուն վրայ ապակեայ ծածկոց մը կրելով հանգիստ կրնայ ըլլալ մինչեւ իսկ ամառուան տեղատարսուիներու ժամանակ :

Վենետիկցի ապակեգործ մը հազարաւոր ապակեայ կանացի գլխարկներ կը չինէ հիմա : Ապակեայ կտաւը որմէ

զլխարկները կը շինուին , մետաքսեղէնի  
մը գոյնին փաղփիւնը եւ պայծառու-  
թիւնն ունի : Այս կատաւէն ջաւր չկընար  
անցնիլ :

Զգեսափի համար մասնաւոր առկու-  
նութիւն ունեցող նիւթ մըն է ձափոնց-  
ւոց իրրեւ շապիկի , անդրավարտիքի եւ  
ուրիշ ներքին հանդերձներու կտաւ գոր-  
ծածած թուղթը , նուրբ եւ խորչոմեալ :

Զգեսաը կը կարուի ուրիշ կտաւներէ  
շինուած հանդերձներու պէս : Անկէ շին-  
ուած հանդերձները առկուն եւ ճապուկ  
կ'ըլլան :

Գրազգիական թերթ մը այս նիւթին  
վրայ աեղեկութիւն տուած ատեն կ'ըսէ  
թէ մասնաւոր թեթեւութիւն եւ առա-  
ձգականութիւն ունի : Երբ մարդ կը  
փորձէ ձեռքօվ պատռել զայն , դրեթէ  
նոյնքան ընդգիմութեան կը հանդիպի որ-  
քան ձեւնոցի համար գործածուող բա-  
րակ մորթ մը պատռել փորձած ժամա-  
նակը : Թուղթը մինչեւ անդամ թաց ե-  
ղած ժամանակը գտուար կը պատռուի :

Հովանոցն ի՞նչպէս պահելու է :

— Անզիացի մը հետագայ զգուշու-  
թիւնները կը թելադրէ հովանոցներու  
համար :

Պարզուած վիճակի մէջ մի թողուր  
չորնալու համար . վասն զի մետաքսը  
կը պրկուի եւ ծակեր կը բացուին կա-  
րերուն քովը :

Կոթը վեր դիրքով մի դներ չորցնե-  
լու համար : Վասն զի ջուրը կը հաւաք-  
ուի կեղրոնը , ուր կողքերը իրար կու  
զան , եւ մետաքսը կը փափի :

Երբեք պահանոցը մի դներ առանց  
պարզելու զայն , եթէ ոչ երկարատեւ  
չոր եղանակէ մը ետեւ պիտի տեսնաս  
որ շալունակ ճնշման ներքեւ մետաքսը  
կուրտուած է կողքերուն մէջտեղերը :

Եթէ գոհ ես առ այժմ քու հովանո-  
ցէդ , եւ սահիպուած չես նոր մը գնելու ,  
նայէ որ ջուրի կաթիլները կոթէն վար  
կաթին , եթէ կոթը թանկագին չէ ու  
խոնաւութենէն դիւրաւ կը վնասուի :  
Այսպիսի հովանոց մը պահպանելու հաս-  
տատուն կանոններ չկան :

Մելանի բաղադրութիւն մը կրնա՞ք

յանձնաբարել :

— ՅՅ Քաշ ջուրի մէջ խառնէ Յ քաշ  
ծեծած գիստոր (մաղի) եւ երեք ժամ  
եռացունելէ ետեւ վար առ եւ համոդար-  
տելէ ետեւ քամէ . 1<sup>1</sup>/<sub>4</sub> քաշ Արա-  
րիոյ խէժ , 1<sup>1</sup>/<sub>4</sub> երկաթի օքսիտ (զա-  
նացածը) ջրոյ մէջ լուծէ , քամէ եւ միւ-  
սին հետ խառնէ , ասով կ'ունենաս 30  
քաշ մելան : Ասի սեւ մելան կ'ըլլայ :  
Ահա ինչպէս կը շինեն կարմիր մելան ·  
ծեծուած Պրազիլիոյ փայտ 35 կրամ ,  
ջրախառն քացախի թթու , (ասիդ ասէնիչ +)  
100 կրամ , պաղլեղ 5 կրամ , ասոնք  
յղկեալ (ուշուը) ամանի մը մէջ ժամ մը  
եռացուր , քամէ եւ վրան աւելցուր 10  
կրամ Արարիոյ խէժ :

Կոշիկի ներկի լաւագոյն բաղադրու-  
թիւնը ս'ըն է :

— Փղոսկրի սեւ փոշի 50 տրամ , 50  
տրամ բէ+մէլ , 4 տրամ պաղլեղի փոշի ,  
1 տրամ թիրէմէնթին , 5 տրամ ծծմբոյ  
թթու եւ 15 տրամ հում ուղիք եւղը :  
Առաջի երկուքը իրար խառնէ , յետոյ  
միւսները վրան աւելցուր :

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԿԱՌԱԽՈՒՄԲԻՆ ՏԱԿ

Երկաթուղիին կայարանը բազմու-  
թիւնը կսպասէր կառախումբին գալըստ-  
եան , եւ խումբ խումբ բաժնուած ճա-  
նապարհորդք՝ ժամանակը խօսակցու-  
թեամբ կանցունէին . Մէկ խումբին խո-  
սակցութեան նիւթն էր թէ հնա՞ր է  
արդեօք որ մեծ վախի մը պատճառաւ  
մարդուս մազերը ճերմկին : Սեղանի մը  
քով նստած էր բարձրահասակ մարդ  
մը , որ թէ եւ ճերմակ մազեր եւ ալե-  
ւոր մօրուք մ'ունէր , բայց հազիւ ՅՅ  
տարեկան կրնար ըլլալ . սա վիճաբա-  
նողներուն մօտենալով , խոնարհութիւն  
մ'ըրաւ եւ ըստու , « ներեցէք որ ճեր  
խօսակցութեանց մասնակցիմ . ես կեն-  
դանի ապացոյց մ'եմ թէ վախոք մար-  
դուս մազերը կը ճերմկցնէ » : Բոլորը

հետաքրքրեալ հրաւիրեցին զինքը իրենց քով նստիլ եւ պատմել թէ ի՞նչպէս ինքը իր առոյգ այրական հասակին մէջ սպիտակամազ ծերունիի մը փոխուեր է։  
Օտարականը այսպէս սկսաւ պատմել.

« Բնիկ Համազուրկցի եմ, սակայն Ամերիկա գաղթեցի : Քիչ ատեն Նիւ Եօրք կենալէ ետեւ Օլըրնի ոճրագործներու յատկացեալ բանահին բժիշկ նշանակուեցայ : Ամենածանր ոճրագործներն իմ հսկողութեանս եւ խնամքիս յանձնուեցան : Երկու ցկեանս բանտարկութեան դատապարտեալ ոճրագործներ քանիցս փախուստ փորձած ըլլալով՝ մասնաւոր հսկողութեան էին ենթարկեալ : Ասոնք ինձ դէմ յետին աստիճան ատելութինն ցայց կուտային, քանզի օր մը դիտելով որ ասոնց քով երկաթէ գործիքներ կային յաջորդ փախստեան մը համար, բանտապետին իմաց տուի որ ասոնք մէկզմէկէ զատելով՝ աւելի խիստ հսկողութեան ենթարկեց : Այսու ամենայնիւ առաւօտ մը ասոնց մին, եւ քանի մ'օր յետոյ միւսն ալ փախած էին,

առանց հետք մը թողած ըլլալու : Փախուստէն իրը 15 օր յետոյ ձիով քաղաքը գացի, ուր հասայ կէս օրին, գործս տեսնելէ յետոյ երեկոյին ձամբայ ելայ բանտը վերադառնալու . ճամբան անտառէ մը կանցնէր տեսնելով հին հայրենեացս վրայ եւ ձիուն սանձը թոյլ ձգած, կամաց կամաց յառաջ կերթայի : Յանկարծ քովէս շղթայի շառաչման ձայն լսեցի, իսկոյն ատրճանակս քաշեցի, սակայն նոյն վայրկեանին գլխուս իջաւ մի ահոելի հարուածածին գլխուս իորսնցնելով գետինը ինկայ :

\* \* \*

Կէս գիշերուան մօտ պէտք էր ըլլալ երբ փոքր ինչ խելքս զլուխս եկաւ . լուսինը երկնից կամարը պայծառ կը լուսաւորէր . սաստիկ ցաւ մը գլուխս չէր թողէր վեր վերցնել, բնազդմամբ ձեռքս գլխուս պիտի տանէի, սակայն չէր հընար, ձեռքերս ոտքերս կապուած էին : Կամաց կամաց խորհուրդներս հաւաքը ուեցան եւ ես յիշեցի թէ յարձակում մը

կրած էի : Ահուելի կասկած մը զկիսէս  
անցաւ , զգացի որ երկու երկաթ ցողե-  
րու վրայ էի , որք մարմինս կը ցաւցը-  
նէին . պառկած տեղէս ջրոյ հոսելուն  
ձայնն ականջիս կուգար , տարակոյս չը  
կար որ կապուած նետուած էի երկա-  
թուղին կամուրջին վրայ , երկաթ կո-  
ղերուն վրայ . անտարակոյս էի որ յա-  
ջորդ կառախումք մը զիս ջախջախէր  
պիտի . յուսահատեցայ , արինս պաղե-  
ցաւ , բայր ձայնով պօռացի , բայց ի  
զուր , չկար օգնութիւն ո եւ է կողմէ :

\* \* \*

Հեռուէն , խիստ հեռուէն , կառա-  
խումքի մը ոլանալուն ձայնը ականջիս  
կուգար . ահ ու դող անդամալոյծ ըրին  
զիս , սակայն եւ այնպէս խորհեցայ թէ  
միայն յայնժամ ազատութիւն հնար էր,  
եթէ երկու երկաթ զիծերուն մէջ տեղ  
երկննայի : Սողացի , ծռեցայ , գլուրե-  
ցայ , արմուկներովս եւ պրոնքներովս  
աշխատեցայ , յուսահատական ջանքե-  
րով եւ դառն չարչարանքներով կարու-

զացայ երկու ցողերուն մէջտեղ երկըն-  
նալ : Սպատա'ծ էի . ատոր վրայ խոր-  
հելու ժամանակ չունէի , բաւ էր որ զոր  
ինչ հնար էր ըրի :

Կառախումքին շառաչիւնը զգալի  
կերալով մօտեցաւ , անիւներուն ազմկա-  
լից շրչանը . շղթաներուն հնչիւնը կըր-  
նայի որոշել . կառախումքը 100 քայլ  
հեռի էր ինձմէ , շոգեշարժ վիթխարի  
ծիուն երկու ահուելի աչքերն — լապ-  
տերներն — մահ կ'սպառնային ինձ :  
Հրեղէն բոց մը ոլացաւ զէմքիս վրայէն,  
հրատապ շունչ մը զարկաւ երեսիս , ա-  
պա իւաւար , մարմնոյս վրայէն գոռա-  
լով անցնող կառքերուն շարքէն պատ-  
ճառեալ . վերջին կառքն մարմնոյս վրա-  
յէն ոլացաւ , անցաւ , բայց ահուելի կառ-  
տակ մը ըրաւ : Ետին կախուած շղթա-  
յին ճանկը հանդերձիս անցաւ , եւ քիչ  
մը տեղ զիս քաշեց տարաւ . բարեբաղ-  
դաբար ամրան բարակ հանդերձս ճան-  
կէն պատռելով ազատեցայ ջախջախէ-

ուելէ : Նորէն երկու երկաթ ցողերուն  
մէջտեղ նետուած էի զգայազուրկ եւ  
խելակորոյս :

\* \* \*

Երբ դարձեալ խելքս զլուիս եկաւ,  
զիս անկողնոյս մէջ գտայ, շրջապատ-  
եալ ծանօթ դէմքերէ : Երկաթուղիին  
զիծին հսկող պաշտօնեան առաւտուուն  
իր սովորական շրջանը կատարած պա-  
հուն զիս գտնելով եւ ճանչնալով՝ բնա-  
կարանս փոխադրած էր : Սաստիկ ջերմ  
մը զիս տապալեց երկու շաբաթ . ի վեր-  
ջոյ ասպաքինեցայ, երբ առաջին անգամ  
հայելիին դիմաց կտնգնեցայ, սարսա-  
փահար ետ փախտայ, քանզի դէմու կանգ-  
նած էր ճերմակ մազերով եւ սպիտակ  
մօրուքով երիտասարդ մը » :

Օտարականը լոեց, սակայն այս  
պատմութիւնը ըրած ատեն ճակտէն  
հոսող քրտինքը եւ դիմաց արտայայ-  
տութիւնը ցոյց կուտար թէ այն ահոելի  
դիշերին լոկ յիշատակն ի՞նչ տպտորու-  
թիւն կընէր իր վրայ :

Ի ՀՕՅՍ ՊԻՏԻ ԳԱՅ

Աննա որբուհի մ'էր 18 տարեկան  
եւ վաճառականի մը տան ծոռայու-  
թիւն կընէր : Տէրն եւ տիրուհին շատ  
գոհ էին Աննայի վարուց, բարուց մաք-  
րութեան, ժրութեան, հաւատարմու-  
թեան եւ հնազանդութեան :

Աննա տան մէկ ծայրը տուանձին  
խուց մը ունէր, ուր նաեւ գիշերը կը  
քնանար : Սուաւու մը տովորական ժա-  
մուն Աննա վար չեր իջած . տիրուհին  
քանիցս կոչեց, բայց ձայն տուող չկար:  
Խորհելով թէ գիշերը հիւանդացած է,  
տիրուհին Աննայի խուցը գնաց . ինչ  
ահոելի տեսարան ներկայացաւ սակայն  
իր աչաց, երբ դուռը բանալով խուցը  
մուաւ : Աղջիկը անկողնոյ մէջէ արիւ-  
նաթաթախ, Աննա մեռած էր : Տիրու-  
հին սարսափիած աղաղակեց, բոլոր տնե-  
ցիք գէսի խուցը վազեցին . աղջիկը  
սպաննուած էր, անոր տարակոյս չկար:  
Բոլոր քաղաք տարած ուեցաւ Աննայի  
սպաննան լուրը, իւրաքանչիւր ցաւ

զգաց գեղանի եւ անարատ աղջկան  
մահուան վրայ :

Վաճառականը անմիջապէս ոստիկա-  
նութեան իմաց տուաւ, մեռեալին մար-  
մինը ըստ օրինի քննուեցաւ եւ հաս-  
տատառեցաւ թէ բութ գործիքով մը  
գլխուն տրուած հարուածէ մը սպան-  
նուած է աղջիկը :

Ոստիկանութեան ամէն ջանք ի գե-  
րեւ ելաւ յանցաւորը գանելու համար .  
կողոպտելու նպատակաւ այս ոճիր չէր  
գործուած, քանզի սենեալին մէջ եղոծ  
ո եւ է բանի բնաւ ձեռք չէր դպած :  
Ոստիկանապեսն լրագրաց միջոցաւ  
դէպքը պարագաներով ծանոյց եւ  
վարձ խոստացաւ ոճագործին նկատ-  
մամբ լյու տուող անձին . Այս ալ ա-  
նօգուտ եղաւ :

\* \* \*

Վաճառականին տունէն քիչ մը հե-  
ռուն հացագործ մը կը բնակէր, նու 9  
տարեկան տղայ մ'ունէր . ստ դեղձա-  
նիկ մ'ունէր այնքան ընտանի որ նշան  
մը ընելուն կուգար եւ ուսին կամ ձեռ-

քին վրայ կը կանգնէր եւ կառցով  
տղուն բերնէն կերակուր կասնէր :

Օր մը յանկարծ հիւր մը սենեակէն  
ներս մանելով՝ թոշունը վախցաւ եւ  
տաւնէն դուրս փախաւ : Տղան անոր ե-  
տեւէն վազեց բանելու համար, սակայն  
թոշունը խրտչելով թռաւ եւ փողոցը  
ելաւ : Տղան միշտ կը հալածէր թոշունը  
եւ սա ճարր հատնելով պատի մը վրայի  
ծակին մէջ մտաւ : Տղան ձեռքը ծակը  
խօժելով բոնեց թոշունը, միեւնոյն ժա-  
մանակ ձեռքին բան մը դպաւ, դուրս  
քաշեց զայն եւ գտաւ որ որմնագիրի  
մուրճ մ'էր : Մէկ քարով երկու թոշուն  
բոնած ըլլալուն վրայ ուրախանալով  
տուն եկաւ պատմեց ծնողաց թէ ի՞նչ-  
պէս թոշունը բանած եւ մուրճ մ'ալ  
գտած էր, եւ յաղթանակաւ մուրճը  
հօրը ձեռքը դրաւ : Հայրը քննեց գոր-  
ծիքը եւ տեսաւ որ արեան նշաններ  
կան վրան . լրագրին ծանուցումը հօրը  
միտքը եկաւ . աղջիկ մը սպաննուած էր  
բութ գործիքով մը :

Նոյն պահուն քաղաքին զօրանոցէն զինուոր մը ներս մտաւ աէմին մը գնելու։ Հացագործը մուրճը ցոյց տալով ըստ թէ իր որդին զայն պատին ծակին մէջ գտած էր։ Զինուորը ուշադրութեամբ քննեց գործիքն եւ ըստ թէ նա իր մէկ ընկերինը ըլլալու է, որ լաւ որմնադործ էր։ Իրա՞ւ, գոչեց հացագործը, շտո ուրախ եմ որ մուրճին տէրը գտնուեցաւ, ոլէտք է զայն անոր վերադարձնենք։ Զինուորն, իրաց վիճակին անտեղեակ, հեռացաւ եւ խսկոյն հացագործը ոստիկանութեան դիմելով մանրամասնօրէն պատմեց մուրճին պատմութիւնը։ Ոստիկանապետը զարմացաւ եւ տեղեկագիր մը պատրաստելով զընդդապետին դրկեց զայն։ Մուրճին տէրը ձերբակալուեցաւ եւ եղոնադատ առեանին առջին բերուեցաւ։ Հազիւ թէ մուրճը իրեն ցոյց էր տրուած, թշուառ մարդառպանը սկսաւ դողալ բոլոր մարմանով, իրը թէ ջերմոնվ բռնուած ըլլար, Մուրճին իրեն ըլլալը խոսառվանելէ եւ տեւ պատմեց թէ երկար ատեն ամէն ջանք ի գործ դրած էր աղջկան սիրառ

չանելու, նա սակայն, միշտ պաղութեամբ մերժած էր զինքը եւ սպաննացած էր գնդապետին գանգատ բառնալ եթէ շարունակէ ետևէն իյնաւ։ Այս սպառնալիքն քիչ յետոյ ինքը ծանր պատճոյ ենթարկուեցաւ զօրանոցին մէջ գործած յանցանաց համար, խորհերավթէ աղջիկը իրեն դէմ իրօք զանգատած ըլլալուն հետեւանքն էր այդ պատիմ, որոշեր էր վրէժ լուծել։ Պատերազմական ատեանը դատավարուեց զինուորը մահուան, յաջորդ օրը նա կախուեցաւ, Զիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի։

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՎՃԻՌ ՄԸ

Ուուս վաճառական մը Բեթսպուրիէն ցամբայ եշաւ Եւրոպա պտըւտելու։ Վարշավիայի մէջ քաղաքին առաջնակարգ բնակիչներէն մէկուն դիմեց եւ պատուով ընդունուեցաւ։ Շարաթ մը քաղաքը կեցաւ եւ իր հիւրընկալը ամէն ջանք ի գործ դրաւ իր հիւրը մեծարե-

լունեւ քաղաքին տեսնուելու արժան  
տեղերը անոր ցոյց տալու : Բաժանման  
օրն եկտ եւ նախաճաշէն ետեւ հիւրը  
փափաք յայտնեց քաղաքին ո՛յն մա-  
սերն ալ տեսնել ուր աղքատ եւ նուաստ  
դասակարգի անձինք կը բնակին , որոց  
նկատմամբ տարօրինակ պատմութիւններ  
լսած էր : Խնդրեց պակայն իր հիւրըն-  
կալէն որ թանկագին նիւթեր պարու-  
նակող տուփ մը , որ միշտ քովը կը  
կրէր , տանը մէջ պահէ , որ մի գուցէ  
այն չարագործներուն րոյնը մտած ա-  
տենին ո եւ է փորձանք մը հանդիսի  
տուփին : Ամենայն յօժարութեամբ հիւ-  
րընկալը տուփը տանը մէջ պահեց , եւ  
հանդիսատ սրտով օտարականը իր բարի  
հիւրընկալին հետ ճամբայ ելաւ :

Հետեւեալ առաւօտ նախաճաշէն եւ-  
աեւ օտարականը իր վայելած հոգա-  
ծութեանց եւ հիւրընկալութեան համար  
շնորհակալութիւն յայտնելով՝ ծանոյց  
որ ճամբայ ալխոփ ելէ խնդրեց որ

բարեհամի տուփը վերագարձնել իրեն :  
Հիւրընկալն եւ իր կինը զարմանօք ի-  
րարու երես նայեցան : Ի՞նչ տուփ , պա-  
տավաննեց այրը , միտքս չի գար որ  
այդպիսի բան մը մեզի պահ տուած ըլ-  
լաք . իսկ դո՞ւ , սիրելիս , գիտե՞ս , ի՞նչ  
տուփ է այս , հարցուց կնոջը տարա-  
կուական ձայնով մը : Ոչ , ըստ առ  
բնաւ չեմ յիշեր թէ մեզի այդպիսի բան  
մը տրուած ըլլայ : Ի՞նչպիսի տուփ էր  
այն , հարցուց այրը օտարականին .  
ոենեակը մասցած չըլլաս : Վաճառակա-  
նը չուարելով ջանաց կնոջ միտքը ձգել  
սակայն այր եւ կին սկսան երգնուլ թէ  
բնաւ տեղեկութիւն չունին , եւ բար-  
կութեամբ եւ սպառնալիքներով ցոյց  
տուփին թէ եթէ օտարականը իր պա-  
հանջը կրկնէ , ուրիշ կերպով կրնան  
վարուփլ իր հետ :

Օտարականը ահով եւ երկիւղով  
լեցուած , յափշտակեց գլխարկը եւ տու-  
նէն դուրս ելաւ : Առաջին ընելիքն հար-  
կաւ ոստիկանութեան դիմել էր , հոն  
պատմեց բոլոր եղելութիւնը մի առ մի :  
Դուք ձեր թանկագին դանձը , ըստ

ոստիկանապետը , կը յաճճնէք մէկու մը  
զոր շաբաթէ մ'ի վեր կը ճանչնաք , ա-  
ռանց վկայի կամ անդպրագիր սպա-  
նալու . . . ժտակը մեծ անխոռհեմու-  
թիւն . . . Բայց նա զիս յետին աստի-  
ճանի մեծարեց , բարձրաստիճանի մարդ-  
մը . . . : — Ամօթ , ընդմիջեց ոստիկա-  
նապետը , ձեզ նման գործի մարդ այդ-  
դէս չկրնար խօսիլ եւ գործել , բայց  
ունիք վկայութիւն որ տուփը ձերինն  
էր . . . — Այս բանալիին զատ բան մը  
չունիմ , ըստ վաճառականը , տուփը  
կղպուած էր եւ բանալին քովսէ . այս-  
պէս ըսելով ցոյց տուաւ բանալին :  
Ոստիկանապետը սրահ խորհելէ  
ետեւ ըստւ . մէկ բան մը կայ որ ձեզի  
համար կրնար ընել . մեծ իշխան Քօնու-  
թանթին , Վարչավիոյ կուսակալը , իիստ  
ուղիղ եւ արդարասէր անձ մ'է , եթէ  
նա հաւատայ ձեր պատմութեան , ինչ  
որ կարող է ի գործ ալիտի դնէ : Զեզ  
անմիջապէս անոր սիլտի ներկայացնեմ :

ո՞ւ ո՞ւ ո՞ւ զայտի այս որոշ բանակա-  
ռայ , զննար մէր բարձրանի ոճն ու ոճն

Քօնութանթին մեծ իշխանը կընդունի  
վաճառականը եւ մի առ մի պատմել  
կուտայ բոլոր եղելութիւնը : Պահ մը կը  
խորհի իշխանը , աղա զանգակը կը հըն-  
չեցունէ : Տղայ մը ներս մտաւ եւ հրա-  
ման ստացաւ օտարականին հիւրընկալը  
խկոյն իր առջին բերել . Հրամանն ի  
գործ գրուեցաւ , հիւրընկալն եկաւ , իշ-  
խանը առանց ո եւ է խօսքի կամ հարց-  
ման հրամայեց . — նստէ՛ք աս սեղա-  
նին առջեւ եւ գրեցէք ինչ որ ըստմ ձե-  
զի : Մարդը նստաւ , ասաւ գրիչը եւ  
Մեծ իշխանը այսպէս սկսաւ .

« Սիրեցեալ կինս .

« Ամէն բան երեւան ելաւ .

— Ո՛չ , գոչեց մարդը , աթոռէն վեր  
ցատկելով , այդպէս ընաւ չպիտի գրեմ :

— Ուրեմն յանցաւոր էք , ըստ իշ-  
խանը հաստատ եւ աղդու ձայնով մը :

Գունաթափ , յուզեալ եւ խորվեալ  
նորէն նստաւ մարդը եւ բառ առ բառ  
գրել սկսաւ ինչ որ իշխանը կըսէր .

« Սիրեցեալ կինս , ամէն բան երեւան  
ելաւ , տուփը գրկէ այս տալերը բերո-  
ղին հետ : »

Հոս ստորագրեց իշխանին հրամա-  
նաւ եւ սպան առաւ թուղթը եւ տուն  
տարաւ : Կինը երբ կարդաց այս տողե-  
րը , գունաժամիցաւ եւ սկսաւ գողալ ,  
Դդրոցէ մը հանեց տուփը եւ յանձնեց  
սպային , սա ալ զանի իշխանին ձեռքը  
դրաւ : Իշխանը զանի վաճառականին  
յանձնելով հրամայեց որ բանայ եւ տես-  
նէ թէ մէջէն բան պակսած է : Տուփէն  
բան պակսած չըլլալս ստուգուելուն պէս ,  
իշխանը նորէն հնչեցուց զանգակը :

Սպան ներս մտաւ :

— Այս մարդը Սիպէրիա տարէք ,  
հրամայեց իշխանը , առանց նորէն իր  
տանը սեմէն ներս մտնելու , Սիպէ-  
րիա տարէք այս մարդը :

—

Ի՞՞Չ ՀԱՐԿ եկեղեցի երթալ հար-  
ցուց բրօֆէսօր մը ծերունիի մը , քանի  
որ կը դաւանիք թէ Աստուած ամէն  
տեղ է : Ինչ հարկ կայ աղրիւրը եր-  
թալ , կրկնեց ծերունին քանի որ կը սոր-  
վեցունէք թէ մեզ շրջապատող օդը լե-  
ցուն է ջրով :

ՀՆԴԻԿ մը երազին մէջ երկինք կը  
մտնէ եւ հոն կը տեսնէ շատ մը չորցած  
լեզուներ եւ ականջներ : Ի՞նչ են ասոնք  
կը հարցունէ առաջնորդ հրեշտակին :

Հա՛ , կեցիր որ ըսեմ , կ'ըսէ հրեշ-  
տակը , այս ականջներ անոնց են որ  
լսեցին քարոզներ բայց սրտերնին եւ  
վարքերնին չ'փոխեցին , ուստի ականջ-  
ներն հոս են իսկ մարմիններնին դժոխք  
են նետուած :

Ասոնք են լեզուներն անոնց որք բա-  
րի խօսքեր կը խօսէին բայց բարի վարք  
չունէին , ուստի լեզուներն հոս են պա-  
հուած , մինչ մարմիննին դժոխք են  
ձգուած :

—

ԿԱՏԱՂԻ շուն մը խածաւ իր տիրոջ  
կինը եւ դուսարը , սա խկոյն բռնեց  
շունը գլխէն եւ խեղդեց զայն , սակայն  
տկառան իր ձեռաց մէջ մտաւ : Ինձ հա-  
մար հոգ չէ ըսաւ մարդը եւ կինն ու  
աղջիկը Բասթէօսի հաստատութիւնը  
խրկեց որ կատարելապէս բժշկուեցան :  
Իսկ իրեն վրայ քիչ ատենէն կատաղու-

թեան նշաններն տեսնուելով՝ գլուխը պատին զարկաւ եւ մեռաւ չարաշար։ Կարդ մը կարճամիտներ կ'ըսեն թէ կրօնքը կանանց համար է, բաւ է սակայն որ մեղաց թոյն են իւրաքանչիւր մարդկային էակ վարակեալ է, ուստի առանց բացառութեան դիմել Յիսուսի, այն մեծ Բասթէօսին եթէ այս թշուառին նման չեն ուզեր ի վերջոյ չարաշար կորսուիլ։

07.իի եւ ոգելից ըմպելեաց երեկոյեան + էյֆ ընելէ ետեւ լաւ կընանք քնանալ կ'ըսեն շատ կարճամիտներ։ Հետեւեալ տողերը պէտք է սթափեցնէ զայնս եթէ չեն ուզեր կանուխ գերեզման մըտնել։ — Երիտասարդ մը նոյնը կը պընդեր, բժիշկի մը. ասոր անհիմ ստութիւն մը ըլլալն ցոյց տալու համար երկրնցուց բազուկը երիտասարդին եւ հրամայեց որ համրէ բազկերակին զարկը, քանի որ բժիշկը կանգնած էր։ Երիտասարդը վայրկեան մը համրեց եւ գտաւ 74 զարկ, բժիշկը աթոսին վրայ

նատաւ եւ նոյն հրամանն ըրաւ երիտասարդը 70 զարկ համրեց, բժիշկը բազմոցին վրայ պառկեցաւ եւ նորէն բազկերակին քննել աւ ուտաւ, որ 64 զարկի իջած էր։ Տես, ըստաւ բժիշկը, երեկոյին կը պառկինք քանզի սիրտը հանգըստեան է կարօտ, չէք հասկնար, սակայն այս անդադար գործող գործարանը հանգստեան է կարօտ։ Տեսաք որ պառկած ատենս սիրտը 10 զարկ պակաս կը գործէ մէկ վայրկենի մէջ։ Հաշիւը գիւրին է, ժամը 600 կ'ընէ, եթէ զայս քնոյ 8 ժամուան, հետ բազմա պատկենք իր 5,000 զարկ պակաս կ'ունենանք։ Սրդ սիրտը ամէն մի զարկի 6 ունի, արիւն կը միաէ մարմնոյ մէջ, ուստի մէկ գիշերուան համար 30,000 ունկի արիւն մզելու գործողութենէն կը հանդիչի, երբ առանց ոգելից ըմպելիքի պառկելու ըլլամ, սիրտը կը վայելէ իր այս հանգիստը, երբ սակայն գինի, օզի խմելով պառկինք, այս հանգիստը կաւերի, կը խանգարի, քանզի ոգելից ըմպելիք զարկն աւելցունելու կը նստաւեն կամ խարազան մ'են սրտին որ

փոխանակի հանգչելու շարտնակել կուտայ ցերեկուան գործողոթիւն եւ 15 հազար զարկի յաւելում կը պատճառէ : Այս է պատճառ որ յաջօրդ առտու յոգանած եւ գործելու անկարող կ'արթննաո, եւ կը ոտիպուիս առտուն եւս ոգելից ըմպելեաց խարազանին ենթարկել սիրտը :

—

ՔԱՐՈՉԻՉ մը զանձն անիծող մարդու մը պատահելվ ըստ, բարեկամ, ձեզի կ'ապասեմ. կը սխալիք, ըստ նա, զիս դեռ տեսած չէք : Այո՛, կրկնեց քարոզիչը, երէկ տեսայ ձեզ, երբ գործէ դաւենալով կաղօթէիք : Ի՞նչ, իմ ազօթք ընելս լսեցիք, ըստ մարդը, յիշրաւի սխալած էք, քանզի կենացս մէջ աղօթք րրած չեմ : Այո՛, լսեցի, ըստ քարոզիչը. եւ եթէ Աստուած ձեր ազօթք լսած ըլլար, այսօր հոս չպիտի դանուէիք, այլ գժոխք իջած պիտի ըլլայիք, քանզի լսեցի թէ ինչոքս կը պոսացիք որ Աստուած աչքերնիդ կուրցնէ եւ դժոխք նետէ : Այո՛, անէծք կար-

դացողներ թող փառք աան Աստուծոյ որ իրենց անէծքի աղօթքնեին չեն լսուիր եւ անպատամուանի կը մնան :

ՊԵՐԼԻՒԻ փողոցը քանի մը տղոյք կը խալային եւ մէջերնին կոիւ ծագելով հազիւ Յ տարեկան պզտիկ մը սոսկալի հայհոյոթիւններ ըրաւ միւսներուն . Անցորդ մը ըստաւ, Այ դու փոքրիկ մանկիկ, լսւ հայհոյել սորվեր ես : Այո՛, աղուոր կը հայհոյէ ըստ մայրը գոհունակութեանը, որ մօտը կանգներ էր : Աղօթք ընել ալ գիտէ հարցուց անցորդը : Աղօթել, գոչեց մայրը զարմանօք, դեռ շատ փոքր է, դեռ հազիւ կրնայ խօսիլ : — Ցաւալի չլո՞ր Հայ մանկիններ եւս դեռ խօսելու կարող չեղած ամեն տեսակ հայհոյանք կը սորվին ու ծնողք կ'ուրախանան : Հայհոյոթիւն սոմիկիլ կարող եղած մանուկին ինչո՞ւ ընտիր երգեր, աղօթքներ եւ ասացուած քներ չեն սորվեցուներ : Հայը բեր եւ մայրեր արթնութեամբ հսկեցէք

փաքրիկներուն լեզուին վրայ , հայհայող  
մանկիկը օր մը հայհոյիչ այր կամ կին  
պիտի ըլլայ անտարակոյս :

**ՏՂԱՆ** մացառին մէջ գնտակը փընտ-  
ռած ատեն իժը խսյթեց մատը , միւս  
ձեռօք տղան խեղդեց օձը եւ վազեց  
տուն եւ հորթին ծծել տուաւ թունա-  
ւորեալ մատը . տղան ազատեցաւ բայց  
հորթը մեռաւ : Տէր Յիսուսի փրկու-  
թեան գործին ոքանչելի օրինակ , անոր  
վէրքերով մենք բժշկուեցանք , մեզի  
համար նա մեռաւ :

**ՎՈԼԹԵՌ** այն մեծ անհաւատը , երբ  
մահուան անկողնոյ վրայ էր ըստ բժշ-  
կին , ունեցածիս կէսն քեզի պիտի տամ ,  
եթէ ինձ վեց ամիս կեանք չնորհես :  
Վեց շաբաթ իսկ հնար չէ որ ասրիս ,  
ըստ բժշկը : Վոլթէռ արտասուեց եւ  
հեծեծալով ըստ , աւազ , դժոխք պի-  
տի երթամ :

**ԶԵՄ ԿՐՆԱՐ ՏԵՄՆԵԼ** , կ'ըսէր ըն-  
չամէր մարդ մը , քարոզիչն , երբ սա  
հոգեւոր նիւթերու վրայ խօսէր իր հե-  
տը : Օր մը քարոզիչը թղթի մը վրայ  
Աստուած բառը գրելով հարցուց անոր  
թէ կը տեսնէ՞ զայս : Այս՝ ըստ ընչա-  
սէրը : Յեաոյ սակի մը գնելով բառին  
վրայ հարցուց . կը տեսնեա հիմա : Ոչ ,  
գոչեց մարդը : Մնաք բարով ըստ քա-  
րոզիչը եւ գնաց , թողելով որ նա խորհի  
թէ չտեսնելուն պատճառը միայն ազա-  
հութիւնն էր որ կ'ուրուցանէ զայս  
մարդկան :

**ԴԵՄԻՍԴՈԿԱԼԵՄ** կ'ուզեր թագաւորին  
ներկայանալ խնդիր մը մատուցանելու  
համար . արդ գրկեց արքայազուն իշ-  
խանը եւ այնպէս մօտենալով թագաւո-  
րին ընդունուեցաւ խնդիր : Այս է Սր.  
Գրոց յանուն Յիսուսի աղօթելն :

«ՓԱՌԻ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ, ԵԿԵՂԵՑԻ  
ԿԸ ՏԵՍՆԵՄ»

Խումբ մը նաւազներ որ, ինչպէս ըստն իրենք, «հաւատք չունէին մարդակերներու համար կատարուած միսինաւ բական ձեռնարկներու վրայ», իրենց միտքը փոխել սորվեցան : Խաղաղական Ռվիլիանոսի կղզեկումբերէն մէկուն մէշերը պատյա մը կ'ընէին, Եւ ահա իրենց նաւը խութի մը զարնուեցաւ եւ ջուր առաւ : Հարկադրուեցան մակոյկները մոնել եւ գէպի ցամաք դիմել, թէ եւ ըստ իրենց տեղեկութեան՝ այդուրիշ բան չէր, բայց միայն ընտրել փոխան շանաձուկերու որս ըլալու տեղացիներուն կեր ըլլալ : Պատահեցաւ որ ծովիկերքին այն մասը ուր ցամաք եւ լան՝ անբնակ էր : Խոռոշի մը մէջ պաշտուածեցան մինչեւ որ հարկ եղաւ ու տեղիք գտնել՝ տեղացիներէ ուտուելու վտանգով : Վերջապէս արկածեալ նաւազներուն ամենէն քաջասիրող համարձակեցաւ բլրի մը գագաթն ելլել, ուր-

կէ կը մար տեսնուիլ հերակաց բազմամարդ հովիտը : Յանկարծ իր ահարեկ ընկերները տեսան որ նա ցատկեց ու բախութենէն եւ իր գլխարկը չարժելով գոչեց . «Եկէք, տղաք, վախի պատճառ չկայ : Փառք քեզ, Սստուած, Եւ կեղեցի կը տեսնեմ» »

Ա.ՊԻՒԵՄՆ ԱԽ 026

Ժամանակաւ աղուէս մը եւ օձ մը միամանաբար ճամբորդած ատեն գետի մը կը հանդիսավին : Աղուէսը իւր լողալու վարժութեան ապաւինելով կը դառնայ իւր ընկերով, օծին, եւ կ'ըսէ, «Բարեկամ, ես հիմա լողալով կրնամ միւս կողմը անցնիլ . բայց դուն ի՞նչ պիտի ընես : » Օձն ի պատասխանի «Ուրեմն ես ալ քու պարանոյդ փաթթուիմ եւ զիս ալ անցուր» կ'ըսէ : Աղուէսը կը հաւանի ասոր եւ թոյլ կուտայ որ այնպէս ընէ : Հուսկ ուրեմն աղուէսը կը սկսի լողալ իւր ընկերը շալկած : Երբոր գե-

ման մէջաեղը կ'երթան , օձը կը մոտադրէ մեռցունելիւր բարեացակամ ընկ'երը եւ սասափ կը սկսի ուժգին սեղմել անոր պարանոցը : Բարեկամ , ի՞նչ կ'ընես» կը պառայ աղուէսը , որուն պատասխանելով կ'ըսէ օձը , «Ի՞նչ պիտի ընեմ , քեզ պիտի մեռցնեմ : » Ուրեմն վայրկեան մը թող զիս որ անգամ մը համբուրեմ աչերդ եւ ապա մեռցուր զիս» կ'ըսէ աղուէսը եւ փոխանակ համբուրելու լաւ մը կը ճզմէ անոր գլուխն իւր ակռաներով . ապա միւս եզերքին վրայ ուզդապէս երկնցունելով մեռած օձը՝ կ'անցնի գլուխը եւ կ'ըսէ , «Օձ բարեկամ , այսպէս ուզիզ ըլլալու է ինձ բարեկամացողը : »

Սոյն ասակ ցոյց կուտայ թէ չարամիտ անձինք անշուշտ պիտի կրեն իրենց պատիմք նման այս ապերախտ օձին : «Ճամբորդելէ առաջ հաշտուէ ընկերիդ հետ որ մի գուցէ բարկութեամբ վրէժ առնէ քեզմէ» :

ՍԱԴՈՄՈՆԻ ՎՐԱՅ ԱԽԱՆԴԱՎԵՊ ՄԸ

Երբայակտն ամենէն գեղեցիկ աւանդավէպներէն շատեր Սողոմոն իմաստունի շուրջ կը զառնան :

Այդպիսի աւանդավէպի մը համաձայն Սողոմոն իր աստուածապարգեւ իմաստութեամբ պատրաստեց կենսատու հեղուկ մը , այնչափ հզօր որ գողաւոր զմրուկտի մը սիրառ լեցնող պլափէ՛քանակութիւնն իսկ կարող էր կենդանացնել մահամերձը եւ անորոշ ժամանակ մը երկարել անոր կեանքը : Այս հեղուկին համբաւը ամէն կօղմ տարածուեցաւ : Ամբարիչա մարդ մը գնաց կեանքի երկարութիւն եւ բարեկարգութեան ժամանակ խնդրեց թագաւորէն : Բայց Սողոմոն մտիկ շըրաւ վախնալով որ մարդը ոճիրներ ալ կ'աւելցնէ իր մոլութիւններուն վրայ : Ապա կենսատու հեղուկը բարի մարդու մը համար խնդրուեցաւ : Բայց թագաւորն այդ ոլահուն խնձոյքի մէջ էր եւ երբ հացկերսցին աւարտեցաւ , մարդը մեռած էր : Ուրիշ անգամ

մը պիտի տար , բայց պետական գործերով զբաղված էր : Աւրիշ անգոտմ մը եւս լաւ տրամադրութեան մէջ չզըտնուեցաւ : Անգին կենսատու ոգին , որ առաջ ստէպ կը փնտուէր եւ չէր տըրտեր , յետոյ քիշ անգամ խնդրուեցաւ մինչեւ որ մարդիկ դրեթէ մուցան անոր գոյութիւնը :

Այդպէս տարիներ անցան : Վերջառ պէս Սոլոմոն թագաւորը մահուան դուռն հասնելով միտք բերաւ ըմպելին , որ կրնար զինք վերադարձնել կեանքի եւ զօրութեան եւ վայելել տալ հարստութիւն , փառք եւ իշխանութիւն : Փութով մէկը զրկուեցաւ բերել անգին պարունակութեամբ զմրուխտը , թագաւորն եռանդով ձեռքն առաւ զայն բայց , աւաշ , պարապ գտաւ : Թանկագին վերջին կաթիլ չողիացած էր : Ինչ որ Սոլոմոն զանց ըրած էր որիշներու համար գործածել չգտնուեցաւ երբ ինք պէտք ունեցաւ անոր : Քիշ ետքը մեռաւ Սոլոմոն , Մեզմէ իւրաքանչիւրն իր մէջ ունի կենսատու ոգի մը , հոգեռոր զօրութիւն մը , որ կը նորսդուի գոր-

ծածելով : Իսկ չգործածելով կը ցնդի , եւ վերջապէս անհոգութիւնը մահացու կ'ըլլայ ինչպէս ուրիշներու նոյնպէս եւ մոզի :

### ՀԱԲՍԱՆԵԿԱՆ ՎԱՐԴԵՆԻՆ

Երջանիկ հարս մը իր նշանառուքի մատնին կորսնցուց երբ շարաթ մը անցած էր Անգղիոյ մէկ գիւղին մէջ իր նոր տունը փոխադրուելն ետքը : Թանկագին ազամոնդեայ մատնի մըն էր այն . իր անուսինը ամէն ջանք ըրաւ զանիկա զտնելու համար : Տունը կրկին եւ կրկին աւելել տուաւ : Տան բակը եւ ծաղկանց պարտէզը տակնուվրայ եղան մանրակրկիտ հետազօտութեամբ , եւ վերջապէս ծառաներք թող տրուեցան կասկածելով թէ մատնին գոլցած էին : Կորսուած զանձը չգտնուեցաւ :

Հարուր նախասպաշարեալ էր , եւ համոզում գոյացաւ իր մէջ թէ իրենց աշխատանութիւնը դժբաղդ ամուսնութիւն մըն էր եղած , թէ ապագային մէջ չա-

րիքներ պիտի գային իրենց վրայ : Բայց  
երբ ժամանակ անցաւ, ավագայ չա-  
րիքներու վախը բաւական փարատեցաւ  
իր ներսիդիէն : Երջանիկ ամուսնութիւն  
մը կնքած էին ընդհակառակն : Ամուս-  
նին գործերը շատ յաջող գացին . զա-  
ւակներ սւնեցան, որոնք մեծցան մար-  
մական առողջութեամբ եւ մտային կո-  
րովավ : Այսպիսի տուն մըն էր իրենց  
տունը, ուր խաղաղութիւն կը տիրէր եւ  
դժբաղդութիւն երբեք մտաւ չգտաւ :

Երբ ամուսնութեան քսաներորդ տա-  
րեդարձը եկաւ, պարզ հանդէս մը կազ-  
մակերպուեցաւ : Հարսը, գիւղի նոր  
տունը մտած ժամանակը, պարտէ զին  
մէջ իր ձեռքով տնկած էր ձերմակ վար-  
դեր բացող վարդենի մը, որ մեծ ծառ  
մը եղած էր եւ տարսէ տարի շատ ծա-  
ղիկ կուտար : Բայց վերջապէս քանի մը  
տարիէ ի վեր սկսած էր ծաղիկ չտալ,  
եւ տանուտէրը որոշած էր հանել այդ  
ծառը եւ տեղը մատաղատունկ (ֆէտոն)  
վարդենի մը տնկել : Տանը տիկինը, իր  
ամուսնութեան տարիգլուխն, պարտէ զի  
բահը ձեռքն առաւ եւ խորունկցուց

վասը ուր մատաղատունկ վարդենին պի-  
տի տնկուէր : Յանկարծ գէպ յառաջ  
ծուեցաւ եւ հողին մէջէն դուրս հանեց  
տարօրինակ շողովոն բան մը :

«Կորսուած մատնի՛ս է ,» պառաց  
յուզմամբ իր ամուսնին դառնալով, «մա-  
տէս ձգած ըլլալու եմ երբ առջի վար-  
դենին տնկեցի քսան տարի առաջ :

Մատնին հոն կը մնար երբ ծառա-  
ները արձակուեցան գողութեան կաս-  
կածով, եւ երբ նորատի հարսը կը չար-  
չարսէր չարիքի եւ թշուասոթեան գու-  
շակութիւնով որ երբեք չկատարուեցաւ :

«Ատոր հետ ուրիշ բան մըն ալ թա-  
զուած էր ,» ըստ ամուսինը ժպտելով :

«Միտքդ կուգա՞յ թէ ի՞նչ նախապաշտ-  
րումներով կը չարչարուէիր մատնին  
կորսուելուն վրայ : Տարիներով չփոխե-  
ցիր համոզումկ թէ նշանատուքի մատնին  
մը կորուսուով սկսուած ամուսնութիւն  
մը ուրիշ բան չկրնար բկալ, բայց եթէ  
վիշտերու կոյտ մը : Տարուէ տարի կը  
սպասէիր ապերջանկութեան, որ երբեք  
չեկաւ, մինչեւ որ վերջապէս ա՛լ չնա-  
ւատացիր քու անտեղի վախերուդ : Նոյն

ատեն մատոնին հանդարս կը սպասէր  
առաջին վարդենիին մահուանը եւ տե-  
ղէն հանուելուն, եւ դուն նորէն գտար  
զանիկա : Բայց այդ գիւտով մեր եր-  
ջանկութիւնը մեր առաջուան երջանկու-  
թիւնէն աւելի պլափ ըըլլայ :

### ՈՒԵՍԼԻ ԻՆՉՊԻՍ ԱԿՐԵՑ ԽՐ ՔԱՐՈՉԸ

Մշակ մը գնաց Ուէսլիի մտիկ ընել :  
Ուէսլի ըստու թէ երեք նիւթի վրայ պի-  
տի խօսի : Առաջինն է դրամ : Այս բա-  
ժանման ամփոփումն էր, «Շահեցէք  
որչափ կրնաք : » Մշակն արմկով հրեց  
ընկերը եւ ըստու, «Ասանկ բան բնաւ  
լսած չէի . պատուական քարոզ : »

Սպա խօսուեցաւ աշխատասիրութեան,  
եւ գործունէութեան վրայ եւ երկրորդ  
բաժանումն ըրաւ . «Խնայեցէք որչափ  
կրնաք : » Մշակն հրճուեցաւ : « Ա-  
սանկ ազդուոր բան լսուած է երբեք : »  
Քարոզիչն հաստատեց չտնտեսելու եւ  
անհաշիւ եւ ումպէտ ծախքերու յիմար

լութիւնը : Մալլից, ծանակից ըսայ-  
լութեան կամսկոր ամբարչութիւնը :  
Մշակն ուրախութենէն չինց իր ձեռ-  
քերը, մտովի ըսելով թէ այդ ամէնն  
ինք աղայութենէ սորված է : Իրեն այն-  
պէս թուեցաւ թէ «փրկութիւն» հասած  
է իր տանը :

Ուէսլի եկաւ իր երրորդ բաժանու-  
մին, որ էր «Տուէք որչափ կրնաք : »  
«Վա՛չ, » ըստու մշակը, «աւրե՛ց բոլորը : »

Շատեր կը հաւանին կրօնի մինչեւ  
այն կէտը ուր կը սկսի քաշել իրենց  
քսակին կապերը : Խոկ հոդ կը թթուե-  
ցնեն իրենց դէմքերը :

### ՄԵԶ ԱԶԱՏԷ»

«Աս քաքարէն նորէն կ'ուզեմ, մայ-  
րիկ, շա՛տ մը, շա՛տ մը, » ըստու Պերճ  
սիրուն շարժումներով : «Ոչ, ոչ, տղաս, »  
պատասխանեց մայրը խնդալով . «այս  
քաքարը շատ ծանր է քեզի համար :  
կը հիւանդացնէ քեզ, եթէ աւելի ու-

տես :» Պերճ մտածեց պահ մը իմնդրոյն վրայ եւ ապա ըստաւ որպէս թէ հանձարեղ գիւտ մը ըրած ըլլալով , «Մայրիկ , դուն ինձի տուր , ես Աստուծոյ աղօթք կ'ընեմ որ իս հիւանդ չընէ :» Զկա՞ն տարիքով աւելի մեծ շատ մը մարդիկ որ Պերճի այս սկզբունքով կը շարժին : Անոնք իրենց հաճոյքին ետեւ էն կ'երթան : Պարապ տեղը վասնգի կը զիմեն եւ ապա կ'աղօթեն . «Զարէն մեզ աղատէ :»


## ՕՐԵՆՍԴԻՏ ԵՂԱԿ

Երիտասարդ մը , օրէնսգէտ ըլլալու բաղձանքով , փաստաբանի մը գիւեց եւ պաշտօն մը խնդրեց անոր գրասենեակին մէջ : Այդ առթիւ տեղի ունեցաւ հետագայ ոչ-պայմանագրական տրամասոսութիւնը .

«Ե՛ , պարոն , կ'ուզէք փաստաբան ըլլալ , այնպէս է :» «Այս , տէր , կը փախագիմ :» «Ո՞ւր է ձեր հրացանը : կ'ուզեմ տեսնել զայն , սիրելի պարոնս ,

որ որարդութեան սիրահար էք :» «Ես հրացան չունիմ , եւ հրացան գործածել ալ չեմ ուզեր :» «Հրացան չունիք : Ուս րեմն նաւակ ունիք , այնպէս է : Կը սիրէք թիավարել :» «Ոչ , նաւակ ալ չունիմ եւ չեմ գիտեր թիավարել :» «Ժամացոյց ունիք կամ շուն կը պահէք :» «Ժամացոյց զնելու կարողութիւն չունիմ : Շուն ալ չունիմ :» «Դուք կը յաջողիք , տղաս , եթէ յարատեւէք այդ ընթացքին մէջ : Օրէնսգիտութիւնը նախանձուտ տիրուհի է : Հնար չէ սիրաշահիլ զայն ասանց անբաժան ուշադրութեամբ անոր հետամտելու : Յիշեցէք այս խրատու , եւ ես կ'երաշխառորեմ ձեր յաջողութիւնը : Կրնաք ապաւինիլ բոլոր այն օգնութեան զոր ձեզի տալու կարող եմ :»

Երիտասարդը մտաւ անոր գրասենեակը եւ ժամանակին եղաւ անուանի օրէնսգէտ մը :



## ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ

ԵՒ

## ԱՄՈՒՍՆԱՑՈՂՔ

Հարսուն հրահանգ երջանիկ ամուսնութիւն մը  
կնքելու և ցկեանս պահելու համար։

Հին ազգաց մէջ միայն Հառվամյեցիք կանանց իրաւունքն կը ճանչնային, անոնք կանայք մարդկութեան մէկ աղնիւ մատն կը համարէին, արժան սիրոյ, ինամոյ պաշտպանութեան եւ ակնածութեան. քրիստոնէութիւն սակայն ճանչցուց աշխարհիս անոր արժանիք իր մեր հաւասարն եւ վիճակակից, ընկեր եւ օգնական։

Կանայք կ'ազդեն նաեւ մեր վրայ

ամուսնական կենաց մէջ, քիչ շատ կը կադանլարէին մեղ, մեր ընկերներն, մեր սրտակիցներն եւ սփոփիչ բարեկամներն եւ օգնականներն ըլլալով։ Ուստի այս պարտք կը դնէ մեր վրայ անոնց վիճակ։ Բարւոքելու եւ զարգացնելու անոնց իմացական եւ բարոյական ձիրքերն, Կանայք ո՞րքսն աւելի լուսաւորուին այնքան աւելի զմեղ կը լուսաւորեն։

Օրիորդներն որ լոկ գաշնակի եւ պարելու տուած են ինքզինքնին թող զգոյշ ըլլան որ իրենց համար չըսուի թէ այնքան խելք կայ ձեռքերնուն եւ ոռքերնուն մէջ որ հազիւ թէ քիչ մը մնացերէ զլուխը։ Մտքի մշակութիւնը գերազանց է քան դաշնակահարութիւնն եւ պարել։ Մտքի մշակութիւնն ընտիր գրեանց ընթերդանութեամբ միայն կ'ըլլայ, ուստի թող ընթերցասիրութեան տան խելքերնին։ Ասով նաեւ խօսակցութիւնն մտքուր եւ փափուկ կ'ըլլայ։

Ազիկներ եւս ձեռագործի պէտք է վարժուին, ոչ թէ միայն ասեղնագոր-

ծութեան այլ առտևին անտեսութեան ամէն ճիշդերուն մանւաւանդ խոհարարութեան :

Ծնողաց պարտաւորութեանց մէկն ալ այս է որ իրենց զաւակաց ամուսին ընտրելու ժամանակ անոնց լաւ առաջնորդութիւն ընեն, առաջքինութեան եւ սրտի ձիրքեր չեն վնասուիր սովորաբար, այլ հարստութիւն, չեն հարցներ թէ արդեօք բնութիւններն կը յարմարին միմեանց, կը պնդեն որ աղջիկը չը սիրածին հետ լծակից ըլլայ :

Դուստրը երկու անձինք կնութեան խնդրեցին, մին հարուստ էր, իսկ միւսն աղքատ, արժանաւոր համարեցնա աղքատն եւ ըստ, լաւ կը համարիմ որ աղջկանս այլը ըլլայ մարդ առանց դրամի, քան թէ դրամ առանց մարդոյ Ռուկեղէն տառերով գրուելու արժան է այս :

Եթէ ամուսինք կուզեն իրենց երջանկութիւն պահել, պարտին միմեանց դէմ նոյն ակնածութիւնն եւ ուշադրու-

թիւն ունենալ որ ունէին ամուսնանալէ առաջ :

Կանայք որ կ'ուզեն իրենց արանց սէրն միշտ ապահովել թող չհետեւին այնպիսեաց որ հազիւ թէ կ'ամուսնանան թուլնալ կ'սկսին եւ չեն ջանար հաճոյ երեւիլ իրենց կողակիցներուն : Դեռ չամուսնացած ինչպէս որ կ'ուզէին եւ կը ջանային անոնց երեւիլ նոյնը ընելու են նաեւ յետ ամուսնութեան, իրենց արանցը եւ ոչ այլոց հաճոյ երեւնալու համար :

Եթէ կին մը այլոց երեւցած ատեն անձը կը զարդարէ մինչ ուրիշ ատեն անս հոգ է, իրաւամբ ինքինք կասկածելի կ'ընէ թէ նա կ'ուզէ օտարաց ուշադրութիւնը եւ ակնածութիւնը գրաւել եւ ոչ իր կողակիցին, որով անոր սրտին մէջ ատելութիւն կ'սկսի եւ աչք եւ սիրտ ուրիշ տեղեր կը պարտին :

Ամուսնութեան մէջ եւս ուրիշ թերութիւններ կ'երեւին մէկուն կամ միւս

սին վրայ , սակայն այրը ամէն օր սիրոյ մնուդ տալու է , քանզի իր աւելի լաւ կարծած կիներ գուցէ անանկ թերութիւններ ունենան որ հետերնին կենակցած ատեն երեւան պիտի ելլէին եւ աւելի ղժգոն ընէին զինքը :

Աւելի պէտք է որ այրը իր թերութիւններն տեսնէ քան կնոջը և ջանալու է զանոնք մոռցնել տալ կնոջը աւելի հաճելի կերպով հետաք վարուելով : Մէկուն բարեմասնութիւններն ահենելով պէտք է ներողամիտ ըլլալ պակասութեանց :

Եթէ անանկ կին մը ունիս որ իր ժանտ բնաւորութեամբ միշտ կը վշտացունէ քեզ հրապարակաւ մի խօսիր անոր վրայ : Սար ամօթալի ախտ մ'է որ հաղիւ թէ բժշկաց յայտնել կը վայելէ :

Կնոջ անպատութիւնը ամօթ եւ նախատինք է այրին , ուսափ կ'անիրաւես զինքդ եթէ անոր վրայ խօսիս եւ ամբաստանես , պէտք է գաղտնի պահել եւ ապաքինել այս ախտ : Բայց իրոհեւ

մութիւն պէտք է , հիւանդին դեղ տալու է , առանց հիւանդին ձայն հանել տալու :

Բարկութեան ատեն բանականութեան ձայնը չսուիր , ուստի խրատական խօսքեր միայն ա'յն ատեն խօսէ երբ կնոջ կամակորութիւնը թուլցած եւ խոհականութեան զուռն բացուած է :

Եթէ կինդ կիրթ եւ առաքինի է պատուէ այս յարգութիւններն եւ զինքը երկնից պարզեւն համարէ , իսկ եթէ այսպիսի մէկին կը վշտացնես զիացիր որ երկար ժամանակ չի պիտի վայելես զինքը , մահը չուտով պիտի յափշտակէ զնածեռքէդ :

Կնոջդ վրայ ունեցած իշխանութիւնդ լիովին մի գործածեր , եթէ հարկ չկայ , բռնաւորութիւնը միշտ ատելի է : Յորդորէ զնա քաղցրութեամբ , քանզի նաընկերդ է եւ չէ թէ գերիդ :

Ընտանեաց մէջ պէտք է յայտնի ըլ-

լայ թէ այրն է գլուխ, բայց առն եւ կնոջ մէջ տէրն ով ըլլալն որոշուելու չէ, կին մը, սակայն, որ ընտանեաց մէջ գլուխ եղած է միշտ ամուսնոյն դէմ կը կենայ:

Կիրթ եւ խոհեմ կինը երբեք չզայրացներ ամուսինը, այլ քաղցրութեամբ եւ ազնիւ կերպերով ամէն բան կ'ստանայ իրմէ, եւ ինքզինք անոր սիրոյն արժանի կ'ընէ:

Մօնիկէ, Ա. Օգոստինոսի մայրը իր հեթանոս այրն այնպէս կը կառավարէր որ զարմացում կը պատճառէր այլ կանանց: Ասոնք երբ իրենց ընտանեկան թշուառ կենաց վրայ կը գանգատէին, Մօնիկէ կ'ըսէր ծիծազելով, լեզունիդ սանձեցէք, քանզի կանայք իրենց արանց ընզիմութիւն ընելու չեն, քաղցրութեամբ եւ հեզութեամբ վարուեցէք անոնց հետ, իրեւ ձեր տէրերուն հետ եւ ան ասեն պիտի ապրիք խաղաղութեամբ:

Ամուսնութեան մէջ կատարեալ գոհունակութիւն մի ակնկալէր, կ'ըսէ տի-

կին Մէնտոն իր դսաեր, թող այրդ քու ամենալաւ բարեկամդ եւ խրաստուգ ըլլայ, դու ալ անոր խրաստուր որպէսզի մի սիրտ, մի հոգի ըլլաք:

Ամենալաւ ամուսնութիւնն այն է որուն մէջ այր եւ կին քաղցրութեամբ միմեանց պակասութեան կը համբերեն:

Կինը հնազանդելով իր այրին սրտին կ'իշխէ:

Մի խնզրեր որ այրդ քեզ այնքան սիրէ որքան զու զինք սիրես, քանզի արք կանանց նման չեն զգայուն:

Խնդրէ Աստուծմէ որ նախանձոտ չըլլաս, այս է ամուսնական կենաց աւերիչ միքրոպը:

Երբ կամքդ այրիդ կամաց զո՞ն կ'ընես մի պահանջեր իրմէ, քանզի մարդիկ կիներէն աւելի ազատ կը մեծնան, եւ բոնաւոր են կանանց դէմ, կ'ուզեն որ իրենք ազատօրէն զուարձանան եւ

կիներն անկէ զրկութին, մի քններ թէ  
այս իրաւացի՞ է, համակերպէ.

Զուարճութիւնը չափազանց մի սի-  
րեր մանաւանդ այդ հպատակութեան  
վիճակիդ մէջ, երբ ուրիշէ կախում ու-  
նիս, զսպէ զիեքդ եւ համբերէ, ասոնք  
պէտք են:

Պօմօն տիկինն ալ հետեւեալ խրատ-  
ներն կուտայ իր դստեր: —

Մարդոց ընթացք կը փոխուին, սէրը  
չէ յարատեւ, ուստի ամէն բանի պատ-  
րաստ եղիր:

Երբ այրդ քեզմէ անանկ բաներ պա-  
հանջէ որ առաքինութեան եւ բանակա-  
նութեան չեն հակառակիր, պարտիս զի-  
ջանիլ եւ պահել խաղաղութիւն որոյ  
համար ծներ ես:

Աղջկանց դաստիարակութեան մէջ  
մեծ սխալ է գաղափար տալ անոնց թէ  
երբ ամուսնանան անձիշտոն պիտի ըլ-  
լան, ասովլ վիճակնին անտանելի կ'ըլ-

լայ: Պէտք է սորվեցունել թէ ամուս-  
նացողին պարտաւորութիւնն է հրութիւն  
եւ հնազանդութիւն:

Ամուսնութիւնն անձկութեան եւ  
անձնուրացութեան վիճակ մ'է, եւ ա-  
ռանց վեհանձն սիրոյ, դժուարին է ա'յն  
կենաց պարտաւորութիւններն կատարել:

Ոյժ եւ կորով այրին յատկութիւններն  
են, հրութիւն եւ քաղցրութիւնն ալ  
կնոջ, ուրեմն հնազանդինք իշխելու  
համար, եւ հրութեամբ տանինք անհան-  
գըստութեանց որ մեծամեծ զուարճու-  
թիւններն վայելենք:

Քու ամուսնացած օրէդ սկսելով,  
սիրական գուատը իմ, կը գաղրի իմ հե-  
ղինակութիւնս: Ալ մայրդ միայն բարե-  
կամդ է, քու պարտքդ է ամուսնոյդ եւ  
ոչ ինձ հնազանդիլ, քանի որ առաքի-  
նութեան եւ պատւոյ գէմ չեն անոր  
հրամաններն:

Երանի թէ ամուսնացող անձինք ա-

ռաջ զիրար լաւ ճանչցած ըլլային , զիրար տեսնել կամ երբեմն միմեանց հետ խօսիլ բոլորովին վստահելի չկրնար ըլլալ , քանզի երկու կողմն ալ կրնան խարբել , որով յետ ամուսնութեան փոխանակ սէրն աւելնալու , զօրանալու տկարանալ կ'սկսի , եւ այն երջանիկ վիճակ թշուառութեան աղբիւր մը կ'ըլլայ :

Ուստի ով որ լաւ ընտրութիւն կուզէ ընել թող ուշ դնէ ծնողաց խրատներուն եւ խոհեմ անձանց խորհուրդն յարգէ , մանաւանդ Աստուծոյ առաջնորդութիւնը ընտրէ նման Եղիաղարի որ իր տիրոջ որդւոյն իսահակի համար կին վնասուելու կ'երթար : Ընտիր եւ առաքինի աղջիկներ հազուազիւտ չեն , բանը գտնեն եւ որոշման գալու վրայ է , քանզի այսպիսիք սովորաբար հարուստ չեն :

Սէրը կը կուրցունէ , ուստի երբ ամուսնալու ժամանակ եկած է , քու խոհեմութեանդ եւ դատողութեանդ մի վստահիր : Առաքինի կին գտնողը բա-

րիք — գանձ — կը գանէ , եւ Տէրոջմէն չնորհք — պարգեւ — մը կ'ստանայ :

Իմաստուն կինը իր տունը կը չինէ բայց յիմարը զանի իր ձեռքովը կը քակէ :

Աղէկ է տանիքի մը անկիւն բնակիլ , քան թէ կռուասէր կնոջ հետ մեծ տան մէջ : Եոյնը կրնան եւ կանայք ըսել կռուասէր այրերու համար :

Աղէկ է անապատ տեղ մը բնակիլ , քան կռուասէր եւ բարկացող կնոջ հետ :

Առաքինի կինը ո՞վ կրնայ գտնել , անոր գինը չատ զոհարներէն աւելի է : Անոր էրկանը սիրու անոր վրայ վստահ է , Անիկայ իր կենաց բոլոր օրերուն մէջ անոր բարիք կը բերէ , եւ ոչ թէ չարիք : Իր բերանը իմաստութեամբ կը բանայ , եւ իր լեզուին վրայ քաղցրութեան օբէնք կայ :

Վայելչութիւնը սուտ եւ գեղեցկութիւնը ունայն է , սակայն Տէրոջմէն

վախցող կինն է որ գովութիւն պիտի  
ստանայ :

Ամուսնութիւնը շատերուն համար  
հրամայական պարտաւորութիւն մ'է ,  
լաւ կողակից մ'ալ նախախնամութեան  
ամենամեծ պարգեւն է . քանզի կրնայ  
ըլլալ որ ամէն խոնեմութիւն գործածելէ  
ետեւ իսկ լաւ ընտրութիւն մը չընենք .  
Ուստի Աստուծոյ չնորհաց պէտք է ա-  
պաստանիլ ամենայն խոնարհութեամբ :

Ընտրութեան պահուն իրականը թող-  
լով երեւայականինը չփնտռենք , զիմաց  
կայտառութիւն , փայլուն աչքեր , հնչիւն  
ձայն , վսեմ շարժում սրտին կը տիրա-  
պետէն յիրաւի , անոնք պէտք չէ անար-  
դել թէեւ , սակայն այս ազդեցութեանց  
տակ ընկճուելու չէ : Քանզի ծմբարիտ  
կնոջ բովանդակ կատարելութիւնը եւ  
հանդամանքը չեն կազմեր :

Սիրտ շահելու համար ստել , կեղծել  
խղճին վէրք կը պատճառէ ի վերջոյ , սի-  
րոյ օրինաց դէմ մեղանչելուն համար :

Միտք բեր որ զաւակներ պիտի ու-  
նենաս , ուստի ըստ այնմ ընտրէ , չըլ-  
լայ որ տղաքը քեզ անիծեն տկար եւ  
ախտաւոր կազմուածքներուն համար :  
Քաջառողջ թող ըլլայ ընտրած կողա-  
կիցդ :

Գիտուն ամուսին լաւ է ունենալ  
եթէ պարկեշտ եւ համեստ ըլլայ եւ ոչ  
թէ միայն ուսեալ : Այրը սակայն կնոջ-  
մէ աւելի խելացի ըլլալու է միշտ , քան-  
զի կինը հպատակութիւն պարտի իր ա-  
մուսնոյն , խելք չունեցած մէկու մը  
սակայն հպատակութիւն պարտի իր ա-  
մուսնոյն , խելք չունեցած մէկու մը  
սակայն հպատակութիւն անհնարին է  
տածել :

Ամուսնութեամբ նոր կողակցութիւն-  
ներ եւ յարաբերութիւններ պիտի սկսին  
քեզ համար , ուստի նայէ որ յետոյ նա-  
խատինք եւ ամօթ չզգաս :

Նախ գործի տէր ըլլալ , բարեկեցիկ  
փիճակ ունենալ եւ ապա ամուսնանալ :

Անխռնեմ ամուսնութիւնը առողջութիւն  
եւ անմեղութիւն կը կործանէ :

Կանուխ ամուսնութիւն պատճառ  
կ'ըլլայ կանոնաւոր եւ օգտակար կեանք  
վարելու, եւ ազատ կ'ըլլան կազմուած-  
քին եւ պատւոյն վաս հասցնող յարա-  
բերութիւններէ : Ուշ ամուսնացողին  
տղայքը, կ'ըսեն սպանիացիք, չուտով  
որբ կը մնան : Ֆրանքին ալ կ'ըսէ թէ  
թէեւ կանուխ ամուսնացողաց տնտե-  
սական իմաստութիւնը թերի կրնայ ըլ-  
լալ, սակայն ծնողաց եւ ազգականաց  
խրատներն այս պակասութիւնը կը լեցնէ :

Կնոջդ համար համբաւ հանել մի աշ-  
խատիր, համեստ առաքինութիւն աշ-  
խարհածանօթ ըլլալէ լաւ է, մանուշակ  
ծածկեալ տեղեր կը բուսնի :

Մաքուր պահէ սիրադ, որ վիճակիդ  
անպատուութիւն չբերես, Եթէ կ'ուզես  
սիրուիլ կնոջմէդ, կատարեալ վստահու-  
թիւն ունեցիր անոր վրայ :

Թէ արամութիւն եւ թէ ուրախու-  
թիւն հազորգեցէք միմեանց . բաց սիրտ  
եղիք միմեանց եւ թափանցիկ :

Ով կին, ծանրագլուխ եզիր, հա-  
մեստութիւն քու զարգգ է, կինը այ-  
լոց գէմ ոչ կը կարմրի, ոչ ալ յանդուգն  
համարձակ է :

Ամուսնոյդ ազգականաց եւ բարեկա-  
մաց բարեսիրտ եզիր, կութեամբ տար  
անոր տկարութեանցը քանզի գու ալ  
անոր համբելութեանը կը կարօտիս :

Միշտ միմեանց քով մի կենաք, լաւ  
է երեխն առանձնանալ, նոյնութիւնը  
ձանձրոյթ կը բերէ :

Երբ փոխադարձ սէրն պակսելու  
վրայ է իսկոյն պատճառն արմատէն խլել  
ջանացէք, միմեանց հետ շուտ հաշտուե-  
ցէք, քանզի ամուսնութեան կեանքն է  
սէր :

Ով կին, քու ամուսինէդ զատ մէկուն  
մի հաւատար : Ով այր, քու կնոջմէդ ա-

ւելի սրտակից բարեկամ մի ունենար :

Աստուծոյ կամաց զիջանելը կը քաղցրացունէ դառն գաւաթը , իսկ անհամբերութիւնը այլ եւս դառն եւ անտանելի կ'ընէ զայն :

Ի մի բան եթէ կ'ուզես ամուսնութեան մէջ երջանիկ ըլլալ . վստահութիւն ունեցիր , սիրէ , համբերէ , հաւատարիմ , հաստատամիտ եւ մաքուր եղիր :

Կիրքերը բանականութեան ձայնին միշտ հնազանդ ըլլալու են , եթէ որոշեր ես ամուսնանալ , մտածէ , կշռէ ոյժգ . լաւ քննէ ապրուստի միջոցներդ . քննէ թէ պիտի կարենա՞ս . ամուսնութեան պարտաւորութիւններն կատարել , զառակներդ հոգալ , խնամել , դաստիարակել եւ լաւ վիճակի տէր ընել : Ինչ ուժիրներ չեն գործուիր Եւրոպայի մեծ քաղաքաց մէջ , քանի օրիորդներ որք աղջի մը պարծանք կրնային ըլլալ , ծնողաց անխոնեմութեան եւ աղքատու-

թեան զո՞ն են գացած , պատիւ եւ համեստութիւնն անարդ գնով վաճառելով . եւ նոյնն ըրած են շատ մայրեր իրենց զաւակաց մննդեան համար . որքան տղայք ի Զինաստան կ'սպանուին ծնողաց պատճառաւ : Եթէ անստոյգ բախովին պիտի ապաւինիս ամուսնանալէ ետեւ այս անխոնեմութենէն ծագելիք բոլոր չարեաց համար պատասխանատու ես Աստուծոյ , լաւ խորհէ ասոր վրայ :



## ՄԵՐ ՍԻՐԱԾՈՒՆ ԶԱՒԱԿՈՒՆՔ

Երեսուն հրահանգ մեր զաւակներ փոխան ծնողաց փշեայ պսակ՝ անոնց փառաց բագն ըլլալու:

Առոյգ եւ բարեկազ ՞ մարմինը թող թնութեան ձգուի, որ աճի եւ զարգանայ բնական կերպով եւ վարժուի ամէն բանի ի սկզբանէ :

Լայն եւ արձակ հագուստ տւելի յարմար է տղայք բարեկազմ եւ յողթամ ընելու, որով անոնք քաջառողջ եւ ուժեղ կ'ըլլան :

Վարժէ՛ զաւակդ խստակեցութեան, հեռի ամէն փափկակեցութենէ թէ անկողնոյ եւ հագուստի եւ թէ կերակրոյ եւ ըմպելեաց կողմանէ :

Օդին փոփոխութիւններուն ալ պէտք է վարժեցնել տղայք . Դիոզինէս ձեան մէջ մերկ կը շրջէր :

Տղայոց անդադար շարժումը կը զօրացնէ մարմինը, ինչպէս նաեւ վազելը եւ ցատկելը :

Զափաւոր կերակուր ուսող տղայք գուարթ եւ դիւրաշարժ կ'ըլլան, իսկ երբ ստամոքս ծանրաթեռնած է, տկար, դժգոհ եւ անհանգիստ :

Կանոնաւոր ժամերուն մէջ միայն ճաշելու հոգ պէտք է տարուի :

Սկսէ կրթել զաւակդ երբ կարող է ուշադրութիւն ընծայել քեզ, քանզի կրթութիւնը որրանէն կը սկսի :

Զաւակն ապերջանիկ եւ թշուառ ընելու միջոցն է անոր կամքը կատարելն :

Տիկին մը իր մէկ հատիկ զաւկին

կամքը միշտ կը կատարէր։ Օր մը տղուն ձայնը լսելով պատուհանէն նայեցաւ որ տղան կատաղութենէն երեսները կը ճանկռտէր, քանզի ծառան իր խնդիրը չէր կատարէր։ Գա՞ռշելի, ինչո՞ւ աղուն ուզածը չես կատարեր, գոչեց աիկինը։ Ուզածը չիրնար ըլլալ, եթէ մինչեւ վաղն կանչուրոտէ, ըսաւ ծառան։ Այրն ալ զայրացաւ եւ գոչեց ծառային։ Անզգամ ի՞նչ համարձակութեամբ տիկինին չես հնազանդիր եւ տղուն կամքը չես կատարեր։ Տէր, ըսաւ ծառան, տիկինն ալ կարող չէ տղուն ուզածն ընել։ Քիչ մը առաջ դոյլին մէջ լուսնի պատկերը աեսաւ եւ կ'ուզէ որ զանի դոյլէն հանելով իրեն տամ։ Այս ազգու դաս մը եղաւ ափկինին եւ իսկոյն փոխեց ընթացքը։

Հիմա կուլա՞ս, կ'ըսէր Եղուարդ Դ. իր թագուհւոյն, որովհետեւ քիչ մը խստութեամբ պատճեցի որդիդ, բայց օր պիտի գայ որ պիտի ողբաս թէ իրեն եւ թէ քեզ զէմ ցոյց տուած ընթացքին համար։ Եւ այնպէս ալ եղաւ, գան

ելլելուն պէս մայրը բանտարկեց պալատին մէջ, որ սահպուեցաւ յետոյ հեռանալ պալատէն եւ հեղեղի նման արցունք թափելով ուրիշ քազաք մը երթալ, ի վերջոյ խելազարեցաւ եւ սրտին ցաւէն մեռաւ։

Դիոնէսիոս իր թշնամիէն, Դիոնէն, վրէժ առնելու համար իր ձեռն գերի ինկած անոր որդին, փոխանակ սպաննելու, անոր բարի յատկութիւններն արմատէն խլելու համար, թողուց որ ամէն ուզածը ընէ, տղան ամէն անկարգութեանց մէջ ընկզմիլ սկսաւ։ ոչ ոք կար վրան հսկող, ուստի սոսկալի սրիկայ մը եղաւ։ Յայնժամ տղան հօրն խրկեց։ Դիոն իմաստուն դաստիարակց զիմեց, բայց ի զուր, տղան չուզեց ուզգուիլ, այլ պատուհանէն վարնետուելով մեռաւ։

Տղու մը առաջին արտասուզ աեսակ մը աղաչանք են, որք հրամաններու կը փոխուին, իրմէ զգոյշ չըլլաս։

Տղուն շուրջը գանուղներուն վրայ խիստ հսկողութիւն պէտք է, մի թողուր զայն չը փորձուած ընկերութեանց մէջ :

Տղայոց կամակորութիւնը ջնջելու համար ամէն ջանք ի գործ դրուելու է :

Գեղեցիկ խրառներէն եւ բնափր յորդորներէն աւելի կարեւոր են ծնողաց օրինակ տղայոց բնաւորութեան կազմութեան համար :

Տղայոց առջին աչալուրջ զգուշաւորութիւնն խիստ կարեւոր է, քանզի անոնք կարծածէդ աւելի ամէն բան լաւ կը դիտեն, տեսնեն եւ նշմարեն :

Ումանք կ'ըսեն թէ պէտք է տղայոց ամէն բան ըսել եւ չարն ճանչցնել, որպէս զի անկէ հեռի կենան, սակայն տղայոց բանականութիւնն այնքան զօրութիւն չունի, մոլութեան հրապոյրներուն դէմ կենալու . Սուրբ Գրոց ընթերցման իսկ ծնողք խոհեմութեամբ եւ

ընարողութեամբ առաջնորդելու են իրենց զաւկներն, Հրէայք Սողոմոնի Երգ Երգոցն 30 տարեկան չեղած չէին կրնար կարդալ :

Տղայք փափուկ բոյսեր են, երբ զայնս տնկես պարարտ հողի մէջ, պատուական հիւթ կը ծծեն եւ եթէ թունաւոր օդէ եւ վնասակար միջատներէ ազատ պահես կը ծաղկին եւ պտուղ կը բերեն :

Տղայոց սորվեցուցէք ակնածիլ ձեղմէ, ուկափ հսկեցէք ձեր վարուց վրայ որ անոնք թերութիւն գտնելով ակնածութիւննին չկորանցունեն :

Մեծն թէստոսիս կայսրը իր որդին յանձնեց ուսուցիչի մը եւ ըսաւ, այսուհեաէ գու պիտի ըլլաս իր հայրը, զինք բոլորովին քեզ կը յանձնեմ : Օք մը յանկարծ սենեակն մտաւ եւ տեսաւ որ որդին նոտած եւ ուսուցիչն կանգնած գասախօսութիւնն կ'ընէր եւ յանդիմանեց ուսուցիչն : Սա ըսաւ, կայ-

սեր որդւոյ մը չվայլէր ոտքի վրայ կանգնիլ , իսկ թէ ողոսիոս նստեցուց ուսուցիչը եւ հրամայեց որ որդին կանգնի եւ գլուխը բաց ունկնդրութիւն ընէ դասատուին :

Բարկութեան ժամանակ տղան ծեծելը ու յանդիմանելը ոչ թէ զանիկայ ուղղել այլ անկէ վրէժ առնել է : Դիմաց տրամութիւնը կուզզէ յանցաւորը : Դատաւորի զիրք՝ բայց հօր մը սիրտն ունեցիր :

Տղան վախցնելու մ'աճապարէր , երկիւզը զօրաւոր մաքրողական դեղ մ'է , որ կազդէ բայց խառնուածքը կը քայքայէ եւ գործարաններն կը տկարացունէ , վախով կառավարուած հոգին օր քան զոր կը տկարանայ :

Տղայք պատուոյ զգացման սերմն ունին սրախն մէջ , պէտք է սա արծարծել եւ գէպի լաւագոյնն ուղղել : Սպարթացի տղայ մը աղուէս մը կը գողնայ եւ զայն հանդերձին տակ կը դնէ , որ

չտեսնուի , աղուէսը կը փորէ անոր որովայնը եւ աղիքներն դուրս կը թափէ . տղան իր պատոյն համար կը համբերէ եւ մեռած գետինը կիյնայ :

Սորվեցուր տղայոց թէ աւելի քաղցր է տալը քան առնելը , եւ թէ կարօնելոց օգնել պարտ է եւ թէ առաջինութեանց բարձրագոյնն է գթութիւն եւ ողորմութիւն : Դիոնէսիոս օր մը որդւոյն սենեակն մտաւ եւ հօն ոսկի եւ արծաթ շատ մը անօթներ տեսաւ , Դու — ըսաւ Դիոնէսիոս իր որդւոյն — դու արժանի չես թագաւորելու , քանզի քեզի տուած այնքան ընծաներովս չես կրցեր բարեկամ ստանալ :

Ծնողք պէտք է ըլլան իրենց զաւակաց զաստիարակ . այս է բնական օրէնք , երբ սակայն կարողութիւն եւ յարմարութիւն չունին պէտք է արժանաւոր գասափարակ մը ընտրել : Պլինիոս կ'ըսէ թէ ասկէ կարեւոր եւ գիւտար գործ չը կայ յաշխարհի : Փիլիպպոս Մակեդոնիոյ թագաւորն որդւոյն Աղեքսանդրի ծննդ-

եան օրն Արիստոսելի սապէս գրեց ,  
որդի մը ծնաւ ինձ , շնորհակալ եմ աս-  
տուածներուս որ իու ժամանակդ ծնաւ  
նա , քանզի քեզի նման մէկէ մը դաս-  
տիարակուելով , արժանի պիտի ըլլայ  
մեղ եւ իր ժառանգելիք թագաւորու-  
թեան :

Հայր մը կուզէր իր զաւակը Արիս-  
տիպպոս անուն իմաստասէրի մը յանձ-  
նել , սակայն պահանջած դրամ շատ չա-  
փազանց երեւնալով ըստ թէ այդ դրա-  
մով ծառայ մը կրնայ գնել : Շատ լաւ ,  
ըստ իմաստասէրը , գնա՛ , այնպէս ըրէ ,  
եւ այն ատեն երկու ծառայ կունենաս :

Պղատոնի հարցուցին թէ ո՞րը աւելի  
կը սիրէ , ծնողքը թէ ուսուցիչը : Պա-  
տասխանեց , ծնողքս կը սիրեմ կենացս  
պատճառ ըլլալնուն համար , իսկ դաս-  
տիարակս զիս բանական էակ ձեւացնե-  
լուն համար :

Զինացի մը , ճանապարհորդելու ըս-  
տիպեալ , իր որդւոց դաստիարակու-

թիւնը ուսուցիչի մը յանձնեց : Ճամբայ  
ելելէն ետեւ ուսուցիչը իր իշխանու-  
թիւնը չարաչար գործածելով իրեն յանձ-  
նեալ տղալք մոլի եղան , վատ եւ ա-  
պականեալ մարդիկներ : Հինգ տարիէն  
մարդը վերադարձաւ եւ իրաց վիճակ  
տեսնելով արձակեց ուսուցիչը , սա դատ  
բացաւ տէրոջը դէմ , իբր թէ խսոսաց-  
եալ վարձքն ընդունած չըլլայ : Ամե-  
նայն սիրով եւ կրկին վարձք պիտի  
վճարէի , ըստ հայրը դատաւորին , երբ  
լաւ դաստիարակեր զաւկներս . ահա  
երկուքն ալ , քննոցէք եւ վճռոցէք :  
Յետ քննութեան Մանտարինը (դատա-  
ւոր) սա վճիռն արձակեց : Ի մահ դա-  
տապարտուի դաստիարակը , իբր սպա-  
նիչ իր աշակերտաց , եւ հայրն ալ եր-  
կու լիպրա ոսկիի փոչի տուգանք վճա-  
րէ , որովհետեւ այնքան երկար ատեն  
տղայքը անոր յանձներ էր :

Տղայոց միաքը քարահանքէն ելած  
մարմարինի կը նմանի , նա յզկուելով  
իր գոյնը կը յայտնէ , երեսը կը փայլի ,  
բիծելն ու երակներն երեւան կուգան :

Գործող եւ գործիք պէտք է ասոր համար , վարպետ յղկիչը դիւրաւ եւ կատարեալ կերպով կը յզկէ մարմարիոնը , գործիքը որքան կատարեալ ըլլայ ա'յնքան աւելի լաւ կը յայտնուի մարմարիոնին գեղեցկութիւնը : Դաստիարակութիւնը ճիշդ ասոր է նման :



## ՃՇՄԱՐԻՑ ՄԱՐԴ

ԵՒ

## ՃՇՄԱՐԻՑ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Քառասուն հրահանգ ճշմարիտ մարդ եւ ճշմարիտ Քրիստոնեայ ըլլալու համար :

Ուսման սկզբնաւորութիւնը բնաւ ուշ եղած չկրնար ըլլալ , աշխատութիւնն ամէն բանի կը յաղթէ : Վաթուն տարեկան Հոռվմայեցին , Կատով , սկսաւ Յունարէն սորվիլ : Յակոր Լօկան իուլանտացին ներկարարի աշակերտ էր , սակայն ինքնօքնութեամբ Լատիներէն : Յունարէն , Եբրայեցերէն , Իտալերէն , Սպաներէն եւ ուսողութիւն սորվեցաւ :

Բենիամին Ֆրանքին աղքատ ծնողաց զաւակ ըլլալով գպուցական ընթացք չկարողացաւ վարել եւ հօրը հետ օճառաշինութեան եւ մոմաթափութեան կը պարապէր. քիչ յետոյ գրաշար եղաւ, պարապոյ ժամերն ընթերցանութեան տալով միտաքը մշակեց եւ ինայողութեամբ հարուստ եղաւ. Երբ մեռաւ, աշխարհիս մեծ մարդկանց ցանկին մէջ կարեւոր դիրք մը կը բռնէր :

Մարդուս հարկաւոր ծանօթութեանց ամենէն առաջինը եւ կարեւորը Աստուածգիտութիւնն է. քանզի ասոր վրայ են հիմնուած եւ հաստատուած բոլոր գեղեցիկ սովորութիւններն, օրէնքներն եւ ընկերական կապերն. Աստուծոյ գոյութեան համոզումը վերցուր մարդուն մտքէն եւ ահա աշխարհ մոլութեան դաշտ եւ անզգամութեան վայր մը կ'ըլլայ.

Կրօնական խօսակցութեանց մէջ մի յանդգնիր կատակել : Շատ կը սխալին այն կանայք որ անկրօն կը ձեւանան

յարգուելու համար, անհաւատք իսկ անկրօն կիներէն չեն ախորժիր, կանանց քաղցրաբարոյութիւնը եւ զզայուն սիրալ կրօնքի փափուկ զգացմանց հետ միացած պէտք է ըլլալ, նաեւ ամուսնութեան մէջ կրօնքն է զլիսաւոր ապահովութեանց մէկը. կանանց ողջախոնութեան նկատմամբ, կամ ուրիշ խօսքով անկրօն կին չկրնար ողջախոն ըլլալ :

Անկրօն երիտասարդ մը քարոզիչի մը կ'երթայ վիճելու, սակայն քարոզիչը կ'ըսէ թէ ինք հաւատոյ վերաբերեալ նիւթոց վրայ վիճելու սովորութիւն չունի. բայց ես անաստուած եմ, կ'ըսէ երիտասարդը. Քարոզիչը լոււթիւն պահելով ոտքէն մինչեւ զլուխը կը քննէ զանիկայ, ապշած եւ արհամարհական կերպով մը. Ի՞նչ բան քեզ այսքան կը հետաքրքրէ, կը հարցունէ երիտասարդը կը զիտեմ, կ'ըսէ քարոզիչը, անաստուած կոչուած հրէշը, զոր երբէք չէի աեսած, Երիտասարդը շփոթելով իսկոյն կը մեկնի :

Մարգս իր կամօք անաստուած կ'ըլլ-  
լայ եւ իր կրից պատճառաւ այսպէս  
ըլլալ կ'օրոշէ :

Պոնտոսի եւ Բիւթանիոյ Հռովմայեցի  
կուսակալն, Պլինիօս, (145 Յ. Տ.) կ'ըսէ.  
երբ մարդս մահուան անկողնոյն վրայ  
կ'երկնայ, ան ատեն կը յիշէ թէ Աստ-  
ուած կայ եւ թէ ինք մարդ է :

Կրօնասէրք ալ մարդ ըլլալով անոնք  
ալ թերութիւններ ունին, ուստի անոնց  
վրայ պակասութիւն տեսնելով կրօնքը  
պախարակել յիմարութիւն է, Քրիստո-  
նէութիւնը Քրիստոսէ եւ ոչ թէ Քրիս-  
տոնեաններէ պիտի սորվինք, Նա է մեր  
օրինակ: Հարիւր տարի ապրեցայ, կ'ըսէ  
ֆօնթնէլի, եւ հիմա կը մեռնիմ միսիթար-  
եալ, յիշելով թէ առաքինութեանց ա-  
մենափոքրին անգամ ամենափոքր ան-  
պատութիւն մը բնաւ չհասցուցի: Այս-  
պէս վկայողք կա՞ն արդեօք հիմա :

Տիկին Մէնթնօն իր զստեր Պուրկոյնի  
դքսուհւոյն հետեւեալ խրատները կու-

տայ, Նայէ որ Աստուածպաշտութիւնդ  
հաստատ, բանաւոր ու լուսաւոր ըլլայ:  
Հաստատ եւ ոչ շինծու ձեւեր, բանա-  
ւոր որ պարտաւորութիւնքդ նախապա-  
տիւ սեպես քան հաճոյքներդ, լուսաւոր  
որ փրկութեանդ համար անհոգ չըլլաս :

Եթէ կը սիրես ուրախութիւն, հան-  
գիստ եւ զուարճութիւն, գիացիր որ  
միայն Տէրոջը ծառայութեան մէջ կրնաս  
գտնել զայնս, մոլութիւն կը տանջէ եւ  
անհանգիստ կ'ընէ մարդ :

Դիւրին է մոլութեան զիրկն իյնալ,  
բայց զժուար զատուիլ անկէ :

Սիրէ Քրիստոսի եկեղեցին, յարդէ  
անոր պաշտօնեանները, պաշտպանէ ա-  
ռաքինի անձինք, խրախոյս տուր բա-  
րեգործութեան :

Յաձախ մօտեցիր Հաղորդութեան Ա.  
Խորհուրդին գոհ եւ վստահ սրտիւ, եւ  
զգօն եւ առաքինի եկեղեցական մ'ալ  
քեզ խորհրդատու ընտրէ :

Աստուածպաշտութեան վերաբերեալ  
ընտիր գրքեր կարդա՞ : Մանաւանդ կա-  
նանց համար շատ վտանգաւոր է կաս-  
կածելի պարունակութեամբ վէպեր կար-  
դալ :

Առաքինի եւ պատոյ զգացում ու-  
նեցող մարդ մը ոչ թէ սուտ չխօսիր ,  
այլ անկէ կը գարշի : Ստախօսին շահն  
ի՞նչ է , սա , որ այլ եւս անհաւատալի  
կ'ըլլայ : Ստախօս ճանչցուած մարդ մը  
երբ օր մը ընկերութեան մէջ բերանը  
կը բանայ պատմութիւն մընելու , բո-  
լորը մէկանց սուտ է , սուտ է կը գո-  
չեն :

Վեհանձն մարդիկ նախապատիւ կը  
համարին ճշմարտախօս թշնամիներն քան  
չողոքորթող բարեկամներն : Փիլիպպոս ,  
Մակեդոնիոյ թագաւորը , օր մը գերեաց  
վաճառատեղին անուշագրութեամբ ան-  
վայել զիրքով էր նստած : Զինք շրջա-  
պատով պալատականներէն եւ ոչ մին  
իրեն իմաց տալու համարձակեցաւ , սա-  
կայն գերիներէն մին իրեն անձոռնի

նստուածքն իմաց տուաւ իրեն : Փիլիպ-  
պոս իսկոյն հրամայեց ազատութիւն ատալ  
գերին եւ ըստ . Զէի զիտեր որ այս  
մարդը իմ բարեկամս է :

Ան որ իր պատիւը կը սիրէ՝ կը պահէ  
իր խոստումը , մինչեւ իսկ ամենափոքր  
բաներու մէջ , քսնզի քիչին մէջ հաւա-  
տարիմ եղողը շատին մէջ ալ նոյնպէս է :  
Պօմպէսու՝ Օգթավիոսի գէմ անյաջող  
պատերազմ մընելով զինադադար ըրին  
եւ միմեանց խնճոյք տուին : Օր մը եր-  
կու հակառակորդք Պօմպէսու նաւն էին  
նստած , վերջնոյն հազարապետը զինքը  
մէկ կողմ կանչելով ըստ . Ահա պա-  
տեհ ասիթ , եթէ զայն գործածես՝ քանի  
մը վայրկեանէ յետոյ այլ եւս թշնամի  
պիտի չունենաս : Պօմպէսու վեհանձնու-  
թեամի պատասխանեց . նա իմ խօսքիս  
վստահելով հոս եկաւ , եւ ես նախա-  
պատիւ կը հա հարիմ խոստամանս վրայ  
հաստատ կենալ , քան թէ տիեզերաց  
հրամայել :

Ուրիշին բարերարել , օգնել , ծա-

ոայել այս է կենաց վեհ նպատակ , կա-  
ֆօնթէն կ'ըսէ , երբ հնար կայ պէտք է  
օգնել ուրիշին , քանզի մեծն իսկ կա-  
րուու է իրմէ փոքրին եւ առանց անոր  
չէ կարող վարել ո եւ է դործ :

Մէթաստասիոս , լտալացի բանաս-  
տեղծր , կը զրէ մէկու մը համար :  
Զէր արժանի նա ծննդեան  
Զի ապրեցաւ իրեն միայն

Կրնանք ակնկալել որ Աստուած իրը  
հայր պիտի սիրէ մեզ , եթէ մենք իբր  
եղբայր չնկատենք մեր ընկեր եւ չսիրենք  
զնա : Բոլոր արարածներ մարդուս համար  
են եղած , եւ մարդիկ միմեանց համար  
որ օգնեն փոխազարձաբար միմեանց :

Շատերը մարդս ապերախտ է եւ բա-  
րիքի փոխարէն չարիք կը հատուցանէ  
ըսելով չեն ուղեր յարերարել , սակայն  
առանց զայս նկատողութեան առնելու  
դու օգնէ՝ լոկ Աստուծոյ հաճոյ ըլլալու  
եւ Անոր բարերարութեանը նմանելու  
համար :

Բարեգործութիւն ընել առանց փո-  
խարինութեան սպասելու մարդկային էն  
վեհ առաքինութիւնն է : Խտալիոյ Ատի-  
ճէ գեար յորդելով կամուրջը կործանե-  
ցաւ եւ պահապանին չէնքը . ուր ամ-  
բողջ ընտանիք մը կը բնակէր , ջուրե-  
րէն քշուելու վտանգին մէջ էր . կոմս  
ու 100 ոսկի խոստացաւ զայնս ազա-  
տողներուն , բայց ոչ ոք համարձակե-  
ցաւ . Գիւղացի մը , նոյն պահուն անկէ  
անցներով , իսկոյն նաւակ մը ցատկեց  
եւ չուանով բոլորը նաւակն իջեցնել  
տուաւ , կեանքն վտանգի զնելով . ճեղ-  
քեց ջուրերն եւ ապահով ցամաքն հա-  
նեց բոլորը . Երբ կոմսը խոստացեալ  
վարձքը կը մատուցանէր , գիւղացին վե-  
հանձնօրէն ըսաւ , ես իմ կեանքս դրա-  
մով չեմ ծախսեր , իմ աշխատութեամբս  
զիս եւ ընտանիքս կապրեցունիմ , այս  
դրամը խեղճ ընտանիքի մը տուէք , որ  
ինձմէ աւելի կարօտութիւն ունի :

Բարեգործելու ատեն ազնիւ վար-  
մունք պէտք է ունենալ , քանզի կա-  
րօտեալ անձինք ալ մարդ ըլլալով զգա-

յուն սիրտ ունին, եւ մեր քիրտ եւ ան-  
քաղաքակար եղանակին կը վիրաւոր-  
ուին : Մեր գթութեան դիմովներն ա-  
նարգել, կշատրել եւ յանդիմանել ան-  
գթութիւն է եւ անոնց ցաւը կաւելցնէ :

Եթէ ունիս տուր , եթէ չունիս մի  
ամաչեր , բարեգործութիւնն միայն դրա-  
մով չըլլար , հապա խորհուրդ տալով ,  
առաջնորդելով և մխիթարեկով . Երանի  
անոր որ ամէն երեկոյ կրնայ ըսել , այ-  
սօր անգործութեամբ չանցուցի օրս ,  
այլ Աստուծոյ պարզեւածէն այլոյ օ-  
գուտ ըրի :

Կիլիոս ատենաբանը զիշեր մը ուրիշ  
անձի մը հետ ընթրիք ըրած ժամանակը,  
դիտեց որ նա իր ամէն “ըսածին կը զի-  
ջանի , ուստի սապէս գոչեց . է՛կ , բա-  
րեկամ , գոնէ մեկ խօսքիս դէմ զրու-  
ցէ , որ երկու հոգի ըլլալնիս յայտնի  
ըլլայ : Շողոքորթներուն լաւ դաս մը  
որդեգրելու համար :

## ԳՐԱՆՑԻԱԿՈՍ ԵՎԼԻՄԼՈՎՈՍԸ ԿԱՏՈՂԻ

թշնամի մը ունէր որ անտանելի նաև  
խատինքներ կը տեղար վրան, բայց ինք  
լուռ կը կենար, ի՞նչպէս կրցար համբե-  
րել հարցուցին իրեն բարեկամները, Լե-  
զուս եւ ես, ըստ եպիսկոպոսը, իրա-  
րու հետ դաշինք ենք ըրած, երբ սիրոս  
խռովի, լեզուս լուսթիւն պէտք է պա-  
հել. եւ ի՞նչպէս կրնայի անձը զսպել  
սորվեցնել անոր, առանց լուռ կենալու:  
Ամէն, մէկը կրնայ աշխատութեամք այս  
քաղցրաբարոյւթիւնը ստանալ, երանի  
հեզերուն կ'ըսէ Յիսոս, քանզի անոնք  
պիտի ժառանգեն երկիրը:

Բարկութիւնն սանձել մեծ առաքելութիւն է . Գրեցիօն զօրապետը Հէն-րիկոս Դ.ին հետ կը խօսէր իր վրայ եղած զրպարտութեան մը համար , բայց փոխանակ հանդարատօրէն զինք արդարացնելու , սկսաւ վիճել եւ բարկանալ Հենրիկոս բարկացաւ եւ զուրս ելլաւ հրամայեց , բայց զօրապետը ամէն անգամ նորէն ներս գալով նոյն կերպով կը շարունակէր , Հենրիկոսին դէմքը փախուեցաւ եւ ներկայք վախցան որ

իրենց հրամայէ զարնել զօրապետը Սակայն Հենրիկոս մտաց անդորրութիւնը պահեց մինչեւ որ Քրեցլոն հեռացաւ : Ապա դարձաւ ներկայից եւ ըսաւ, բնութեամբ բարկասիրտ եմ, բայց ամէն ջանք ի գործ կը դնեմ մարել այս կիրք. եւ ուրախ եմ որ այսօր սորա ապացոյց տուի ձեզ :

Մի փիլիսոփայ օր մը պատահեցաւ Սպարդացիի մը որ վերջին աստիճան բարկացած չարաշար կը ծեծէր իր ծառան . Վերջ տուր, բարեկամ ըսաւ նա կատաղի անձին, վերջ տուր զինքու ծառայիդ նմանցնելուդ :

Վալէնդիանոս Ա. կայորը թէեւ աղնիւ անձ մէր, բայց բարկասրտութեան զոհ զնաց : Քանզի օր մը երբ դեսպանաց առաջարկութեանը կունկնդրէր, այն աստիճան զայրացաւ որ արեան շրջանը դադրեցաւ եւ իսկոյն յանկարծաման եղաւ :

Պարտինք սանձել բարկութիւնն. սա

գեղեցկագոյնը տգեղ կ'ընէ . վա՛յ ան մարդուն որ ստիպեալ է բարկասիրտ կնոջ հետ ապրիլ, այլեւս լաւ է առիւծի, վիշապի հետ կենակցիլ, քան ասանկ կնոջ մը հետ :

Կրակի կը նմանի բարկութիւն, եթէ դեռ լաւ չբռնկած չմարես, կը բորբոքի եւ ահուելի բոցեր արձակելով աւերում կը գործէ :

Ազնուասիրտ, մարդասէր եւ քաղաքավար . Երեք անդին մարդարիտք, Լուգովիկոս ԺԵ. գիւղաքաղաքէ մը անցած ատեն քաղաքապետը պաշտօն ունէր չնորհաւորել զնա . Վեհափառ Տէր, թոթովեց քաղաքապետը . Զեր Վեհափառութիւնը տեսնելու ուրախութիւննիս այն աստիճան մեծ է որ . . . շփոթեցաւ կեցաւ, նորէն սկսաւ, նորէն կեցաւ, շիկնեցաւ, դողալ սկսաւ : Լուգովիկոս անմիջապէս այս շփոթ վիճակէն ազատեց զայն քաղաքավար ազնուասրառութիւնով, Այո՛, ըսաւ նա, այնքան մեծ է ձեր ուրախութիւն, որ կարող

չէք զանի յայտնել :

Տրայանոս կայսրը շատ քաղցրաբարոյ էր, եւ ամէն մարդ տարօրինակ քաղցրօւթեամբ կ'ընդունէր : Իր պալատականներն ըսին թէ այս նորին վեհափառութեան նուաստութիւն կը բերէ . բայս ես կուզեմ որ, ըսաւ կայսրը, այնպէս կայսր ըլլամ ժողովրդեան ինչպէս պիտի ուզէի որ իմ տեղս գտնուողը ըլլար, երբ ես հասարակ մարդ մ'ըլլայի :

Ի՞նչ տարբերութիւն կայ իմ եւ ժամացոյցին մէջ, հարցուց դքսուհի մը կարդինալի մը : Տիկին, պատասխանեց կարդինալը մեծ քաղաքավարութեամբ, ժամացոյցը ժամերը կը յիշէ եւ կը ցուցընէ, բայց ձեր ներկայութեամբ գուք զայնս կը մոռցնէք :

Ճշմարիտ քաղաքավար մարդը ուրիշն թերութեանց աչք կը գոցէ :

Դ.ի որդին գաղղիացի զօրաց կը հրամայէր, ծեր զօրապետ մը, որ աւելի իր արհեստն քան արքունեաց սովորութիւն գիտէր, առանց հրաւէրի հրամա-

նատարին սեղանը բազմնցաւ, սակայն իր սիալը չուտ հասկնալով թողութիւն խնդրեց արքայորդիէն . սա ըսաւ . մէկտեղ ուտենք կերակուրը եւ ես քեզի սորվեցնեմ արքունեաց սովորութիւնը եւ գու ինձ սորվեցուր պատերազմին արհեստը :

Անդորր, խաղաղ սիրտ պահել ինչ որ ալ ըլլայ, մեծ օրհնութիւն մ'է :

Փիլիպպոս Բ. Սպանիոյ թագաւորը նամակները միշտ իր ձեռամբ կը գրէր . անտնկ որ գրագիրը միայն հասցէն կը գրէր ու կը գմոէր : Փիլիպպոս բոլոր գիշեր նամակ գրելով անցուցեր էր եւ գրագրին քունն եկած ըլլալով փոխանակ փոշւոյ ամանին՝ կաղամարը դարձուց նամակաց վրայ որով անոնք աւուրուեցան : Փիլիպպոս մտքի անդորրութիւնը չկորսնցնելով ըսաւ . այս է փոշւոյ ամանը եւ աս ալ կաղամարը, յետոյ նորէն գրեց նամակները :

Թէ որ քեզ պարտք ունեցող մը իրօք վճարելու կարող չէ եւ կաղաչէ որ

սպասես , անգթութիւն մի ցոյց տար  
անոր , Ազնուական ընտանիքէ աղ-  
քատ մը կոմսի մը պարտք ունէր ,  
օր մը գնաց որ պայմանաժամն երկարէ .  
պայմանաժամը երկարելու իրաւունքն  
իմս չէ ըսաւ կոմսը , ուրիշ բան մը ը-  
նել կամքէս կախեալ է , պարտքդ կը  
չնորհեմ քեզ :

Անիրաւութիւն է գործաւորին օրա-  
կանը յապաղել , պակսեցնել կամ ու-  
րանալ , լինիէռ կ'երգեր . Կը տեսնեմ  
գոռող պարոններ , որոնք ուրիշին ծախ-  
քովմ միշտ իրենց շուրջը ունին մէկ  
կամ երկու ծառաներ եւ բազմածախ  
սպասներ , իսկ ես որ ոտքով իմ ճամ-  
բաս կ'ընեմ , գէթ կօշիկներս կանխիկ  
գնած եմ :



## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Իշխանը փոքրիկ քաղաքի մը կայա-  
րանէն պիտի անձններ : Վարժարանին ու-  
սուցիչը աշակերտները կայարանը տա-  
րաւ իշխանը բարեւելու համար Տզա՛ք  
լաւ մտիկ ըրէք , ըսաւ նա , բոլորդ մէկ  
բերան գոչեցէք «Կեցցէ՛ իշխան» մին-  
չեւ որ կառախումբը անցնի , Կառա-  
խումբն հասաւ , աղյագք սկսան մէկ բե-  
րան գոչել . «Կեցցէ՛ իշխան մինչեւ անց-  
նի կառախումբ» :

\* \* \*

Կրնա՞մ ձեզի զովարար բան մը հրաժ-  
ցունել , հարցուց կծիր հիւանդ մը բժշ-  
կին , որ զինքը այցելել էր եկած : Շատ  
երախտապարա պիտի ըլլամ , պատաս-  
խաննեց բժիշկը , քրտինքը սրբելով ,  
քանզի շատ յոդնած եւ քրտնած եմ :  
Շատ լաւ ըսաւ կծիրին , ուրեմն պա-

տուհանը բանամ , մենք հոս սքանչելի ,  
զովարար օդ ունինք :

\* \* \*

**Փոքրիկ** Արամը մօրմէն միշտ կը  
խրատուէր գոհ ու քաղաքավար ըլլալ  
եւ իրեն տրուած պտուղներուն փոքրը  
զատել : Օր մը Արամ բարեկամի մը տու-  
նէն վերադարցած ըստ . Մայրիկ , ին-  
ծի պնակով խնձոր բերին , մէջտեզը մեծ  
խնձոր մը կար եւ ասոր բոլորտիքը 6  
հատ մանր : Անշուշտ պիտի խորհու թէ  
մեծը առի , ոչ , կը սխալիս . մեծը թու-  
զուցի եւ 6 հատ փոքրերն առի :

\* \* \*

**Ուսուցիչ .** — Տղա՛ս , փաթորիկի ժա-  
մանակ երբ կատուին կրնակը չփեռ , աչ-  
քիդ ի՞նչ կը ցատկէ : — Աշակերտը .  
— կատուն :

\* \* \*

**Զօրապետ .** — Երբ անշարժ կենալ

կը հրամայեմ , ինչո՞ւ համար ժամացոյց  
կը նայիս : — Զինւոր . — Որպէսզի նա-  
յիմ թէ արդեօք ժամացոյցս անշարժ կե-  
ցած է թէ ոչ :

\* \* \*

**Պառւղները** փտտելէ ապահովելու հա-  
մար պէտք է աղքատ կնոջ մը տանը  
մէջ պահել , ուր շատ տղայք կը գտնուին :

\* \* \*

**Ուսուցիչ .** — Եղբայրդ ի՞նչպէս է ,  
աղէ՞կցաւ : — Աշակերտ . — Այո՛ , այսօր  
նորէն ծիծ ուտել սկսաւ :

\* \* \*

**Բժիշկ .** — Բաէք ինձ , խաթուն ,  
ձեր աղան միշտ թօթօվախօս է : —  
Գեղջուկը . — Զէ , միայն խօսած ա-  
տենը :

\* \* \*

**Թէ կրօնագիտութեան մէջ տղայք**

ո՞ր աստիճանն համբակ կրնան ըլլալ. Անգլիական վարժարանի մը երկու աշակերտաց գրաւոր քննութեան տետրէն հետեւեալը կը քաղենք : — Մին Սքրահամի պատմութիւնը սապէս է գրած . — Սքրահամ Ղովտին հայրն էր, եւ երկու կին ունէր . մէկը Խսմայէլ եւ միւսը Հագար կը կոչուէր : Մին տունը պահեց, միւսը անսապատը վունտեց, ուր սա ցերեկը աղի սիւն եւ զիշերը կրակի սիւն կ'ըլլար : Միւս աշակերտը Մովսէսի վրայ սապէս էր գրած : — Մովսէսը եղիպատացի էր, կը բնակէր փայտեայ տապանի մը մէջ, ոսկիէ հորթ մը ունէր ու պղնձէ օձի մը երկրպագութիւն կ'ընէր, 40 օր լորամարզիէ եւ մանաւայէ զատ բան մը չկերաւ, ծառի մը տակէն ձիով անցած ատեն մազերէն ձիւզերէն կախուեցաւ եւ իւր որդին Սքիառզոմ հոն սպաննեց զանիկայ :

\* \* \*

Կրնա՞ք ինձ կերպ մը սորվեցունել, հարցուց սարկաւագ մը դրամափոխի մը.

թէ աւրուած դրամներն ի՞նչպէս գործածեմ : — Ատիկայ շատ դիւրին է, ըստ դրամափոխը, եկեղեցին գանձանակը ձգեցէք : — Ա՛խ, սիրելիդ իմ, զիխուս եկածն ալ ճիշդ այդ չէ՞ . իբր սարկաւագ գանձանակին դրամներն հաւաքելուս աւրուած դրամներէ զատ բան չեմ գաներ եւ ահա տոպրակ մը լեցուն հոս հետս եմ բերած :

\* \* \*

Քննութեան մը պահուն ուսուցիչը ուրախութեամբ ձեռքերն կը շվեր, Քըն-սիչը զայրանալով ըստաւ . կը զարմանամ թէ ինչո՞ւ այդքան կ'ուրախանաք, քանի որ ձեր աշակերտներն բան մ'ալ չեն սորված : — Գիտէք ինչո՞ւ կ'ուրախանամ, տէր իմ, ըստ ուսուցիչը, անոր համար որ գուշ իսկ չէք կարող այդ ապուշերէն պատասխան մ'առնել :

\* \* \*

Բժիշկը : — Այս դեղէն ժամը դկալ

մը տուէք ձեր այլին : — Քիւղացի կիւնը : — Կէս ժամը անգամ մ'ալ կրնամ դգալ մը տալ , փառք Աստուծոյ , այն վիճակին չենք հասած որ գեղին խնաշողութիւն ընկնք :

\* \* \*

Բժշկական քննութեան մը մէջ քըննիչը հարցուց ու սանողաց . Երբ պայթում մը տեղի ունենայ եւ մարդ մը օդը նեառի - ի՞նչ կ'ընէք : Ուսանողաց մին պատասխանեց . պիտի սպասենք մինչեւ որ նորէն վար իյնայ եւ իրեն հարցունենք թէ ո՞ր տեղը կը ցաւի :

\* \* \*

Բժիշկը . — Տիկին , ձեր հիւանդութիւնը բան մը չէ , կատարելապէս հանդարտ կեցէք եւ կանցնի : — Տիկինը . — Բայց կազաշեմ , տօքթօր , մէյ մ'ալ կեզուիս նայեցէք : — Բժիշկը : — Ան ալ կատարեալ հանդարտութեան պէտք ունի :

\* \* \*

Օտարականը . — Այս մարդուն ի՞նչու արձան են կանգնած : — Առաջնորդը . — Որովհետեւ գեռ չունէր :

\* \* \*

Հա՛ , փոքրիկ տղա՛յ , դո՞ւ ալ դըպրոց կ'երթաս . ըսէ նայիմ ի՞նչ կ'ընես հոն . — Տղան . — Կըսպասեմ մինչեւ որ արձակուինք :

\* \* \*

Ուօչիլտ , հրեայ միլիոնատէրն եւ Պապին նուլիրակն անգամ մը հարուստ անձէ մը ընթրիքի էին հրաւիրեալ : Երբ խոզի միսէ կերակուրի մը եկաւ կարգը . Ուօչիլտ հրաժարեցաւ ընդունելէ : Նուիրակն հեղնութեամբ հարցուց . Տէր . Ե՞րբ խոզի միս պիտի ուտէք : Ձեր հարսանեաց օրն , ըսաւ Ուօչիլտ անտարբերութեամբ :

\* \* \*

Գործարանատէր . — Կը ցաւիմ որ քեզի գործ չեմ կրնար տալ . այժմ շատ

Քիչ գործ ունինք : Գործ վնասողը . — Հոգ չէ , քիչ թող ըլլայ , արդէն ես շատ գործ չե՞ւ սիրեր :

\* \* \*

(Մասվաճառին խանութը) . Տիկինը . — Հաճեցէք այս կտորին ոսկորները կոտրտել : — Մասվաճառը ծառային . — Ծօ' , տիկինին ոսկորները կոտրտէ :

\* \* \*

Բայց տղա՛յ , ատ ի՞նչ է , ձեռքերդ եւ հանդերձներդ բոլորովին մելանով աղտոտցած են : — Չե՞ս զիտեր , մայրիկ , որ այսօր գեղագրութեան դաս տոինք :

\* \* \*

Զօրապետ առ զինւոր . — Եթէ վաղը նորէն այգպէս կարծ կարած մազերով առջևւս ելլէք , զիտցէք որ երեք օր բանտարկութիք պիտի :

\* \* \*

Բրօֆէսօր մը իր աղախինին կողմանէ , որ գրել չէր զիտեր , նամակ մը շարադրեց իւր մօրն ուղղեալ : Լմիցնելէն ետեւ կարդաց զայն աղախինին եւ հարցուց թէ ուրիշ ըսելիք մունի : — Այո՛ , տէր իմ , գոչեց աղախինը , հաճեցէք աւելցունել որ նամակիս տխմարութեան ներողամիտ ըլւան :

\* \* \*

Մայրը յանդիմանեց փոքրիկ երուանդը որ ինկած ատեն տափառը պատուեր էր , Բայց մայրիկ , բսաւ երուանդ լալով , տափառս հանելու ժամանակ չունեցայ :

\* \* \*

Նկարիչ . — Ի՞նչպէս է պատկերնիդ : Յաճախորդը . — Շատ լաւ , բայց քիթին չեմ հաւնիր : Նկարիչ . — Ես ալ , սակայն ձեր քիթն է :

\* \* \*

Գրագիր. — Տէր, կը խնդրեմ որ տ սաթոշակս բարձրացունէք : Վաճառական . — Եթէ միւս ընկերնուզ ամսաթոշակնիդ կը բաւէ , պէտք է քեզի պլ բաւէ : Գրագիր . — Անոնց ալ չբաւեր կոր : Վաճառական . — Ուրեմն ինչու անոնցմէ տարբերիլ կուզէք :

\* \* \*

Զուիցերիոյ մէջ մի քանի հագուած սգուած օրիորդներ տղայոց հանդիպեցան , որոնք անոնց վրայ խնձորներ կը նետէին : Օրիորդները գացին եւ տղայոց հօրը գանգատ ըրին : Վնաս չունի , ըստ հայրը , այս տարի պտուղնիս շատ առատ է :

\* \* \*

Ի՞նչ է գինե ողին եւ ուղտին տարբերութիւնը : — Վերջինը առանց խմելու ութ որ կրնայ աշխատիլ , քանի որ առաջինը կրնայ առանց աշխատելու ութ որ խմել :

\* \* \*

Գրագիր . — Ես այս նամակը իրաւոր չեմ կրնար կարդալ : Շատ գէշ է գրուած : — Ոչինչ խօսք , նամակը այն քան լաւ գրուած է որ էշ մը անզամ կրնայ կարդալ : Տուր որ կարդամ :

\* \* \*

Ա. — Ինդրեմ , ըսէք , ի՞նչ կ'ընէք որ այսքան կը գիրնաք : Բ. — Բան մալ չեմ ըներ :

\* \* \*

Տղաս , ըստ մայրը զաւկին , եթէ ուրիշն վերաբերեալ բանը առնես , տասը պատուիրան քնիրուն մէկ հատը կոտրած կ'ըլլաս , Աղէշ եա , ըստ ոըզան , ան ատեն միայն թ հատ կը մնայ :

\* \* \*

— Ո՞րն է գոհ մարզը . այն որ մէկ միլիոն հարսաւթիւն ունի , թէ այն որ տամներկու զաւակ ունի : — Բնականաբար երկրորդը , որով-

հետեւ մէկ միլիոն ունիցողը աւելին ունենալ կ'ուզէ . իսկ այն որ տասներկու զաւակ ունի , ձանձրացած է :

\* \* \*

Օրիորդը . Երջանիկ պիտի ըլլամ հոգերդ եւ վիշտերդ քեզ հետ կրել : — Երիտասարդը . Սակայն , սիրելիդ իմ , ես ոչ հոգ եւ ոչ վիշտ ունիմ : — Օրիորդը . Օ՛ , անոնք պիտի գան երբ ամուսնանալու ըլլանք :

\* \* \*

Ընկերական գումարման մը մէջ մէկը կը պատմէր թէ Հորանտացի նկարիչ մը այնքան ճարտար է որ մէկ վրձինով խնդացող տղայ մը լացող տղու մը կրնայ փոխել : Ատի վարպետութիւն է . ըստ ուրիշ մը , ես ալ կրնամ ընել աւելին կոթովը :



## ԲԵԿՈՐՆԵՐ

Դիոգինէսի հարցուցին թէ ինչո՞ւ իմաստասէրները հարուստներուն կը հետեւին եւ չէ թէ հարուստները անոնց : Պատասխանեց . քանզի իմաստասէրք կ'զգան իրենց կարօտութիւն , մինչ հարուստներն ոչ երբէք :

Սրիստիպպոս խնդրոյ մը համար ներկայացաւ Տիօնիսիոսին , եւ երբ տեսաւ թէ ականջ չդներ ոտքն իյնալով աղերսեց . զայս նուտաստութիւն համարելով ոմանք յանդիմանեցին զինքը . Սրիստիպպոս պատասխանեց , իմ չէ յսնցանք այլ Տիօնիսիոսի , որոյ ականջներն ոտքերուն վրայ են եղեր :

Հոլանտացիք կինամոնի տունկերն արմատէն կը խլեն որ չափազանց բազմանալով կինամանը արժէքը չկորսնցու-

նէ : Այսպէս պէտք է ընել նաև հաճուցից եւ զուարձութեան մասին , որպէսզի անոնք սովորական բաներ չըլլան :

Կարօտելոց ձեռքով մեր ստացուածք երկինք կը հաւաքենք :

Պարտինք աշխատիլ իր թէ յաւիտեան ապրինք պիտի , եւ ապրիլ իր թէ ամէն ժամ մեր վերջինն ըլլար :

Ոմանք աւելի իմաստուն պիտի ըլլային եթէ ինքզինքնին արդէն իմաստուն չհամարէին :

Զինացիք պարը անօգուտ աշխատանք մը կը համարէին , Զինացի մը Անզիացիէ մը պարի հրաւիրեալ ըլլալով պահ մը դիտելէ ետեւ ըսաւ . ինչո՞ւ այս աշխատութիւնը ծառայիս կատարել չէի տար :

Որովհետեւ ձախորդութիւնը չուտ կը մոռնանք , ուստի ձախորդութեանց կը յաջորդեն ձախորդութիւն :

Գրքեր կան որ մարդս ան ատեն կը լուսաւորեն երբ անոնց թուղթերովը պատուհանին ապակիներն մաքրենք :

Ժամանակը չարաչար կը գործածէ նա որ այլոց թերութիւններով կ'զբաղի :

Եթէ արմաւենի ևս պէտք է ակնկալես որ ամէն յիմար քարկոծէ զքեզ :

Գաղտ կայծէ մը աւելի պէտք է վախնալ քան յայտնի կրակէն :

Տղադ անուշ պատուղներէն զգուշացուր , տհաս պատուղներն արդէն տհածելի են իրեն :

Եթէ սովոր ես միշտ հայելին նայիլ ջանա գոնէ անկեղծ եւ համեստ դէմք մը ունենալ :

Զարին փոխարէն բարիք ըրէ , ինչպէս խեցին որ զինք ջախջախողին մարդարիտ կուտայ . ինչպէս լեռը որ զինք պայթեցնողին աղամանդ կուտայ , ինչ-

պէս ծառը որ զինքը քարկոծողին քաղցր  
պտուղ կուտայ . ինչպէս Սանտալի ծառն  
որ զինք յերկիր տապալողին անուշ հոտ  
կուտայ :

Քու վրադ կատարուած բազմաց դա-  
տողութիւնը թող առաջնորդէ քեզ անձ-  
նաքննութեան բայց ոչ թէ յուսահա-  
տութեան :

Մարդ մը որ թերութիւն չունենալ  
կը կարծէ , կամ յիմար է եւ կամ կեղ-  
ծաւոր որոյ վրայ պէտք չէ վստահու-  
թիւն չնորհել :

Մարդս հազիւ թշուառ կ'ըլլայ եթէ  
թշուառութեան վրայ չխորհի :

Մի վստահիր անոր որ ամէն բան  
լաւ գանէ , ոչ ալ անոր որ ամէն բան  
գէշ կը գտնէ , մանաւանդ անոր որ ա-  
մէն բանի համար անտարբեր է :

Մոյլերն այն ատեն օգտակար կ'ըլ-  
լան երբ մեռնելով ժիրերուն աեղ կը

բանան :

Նա որ յառաջ չերթար ետ կը մնայ :  
Լաւ է անօթի երթալ անկողին քան  
արթննալ պարտքով :

Նախ սողալ ապա գնալ :

Բաճկոնդ ունեցած չուխայիտ համե-  
մաա ձեւէ :

Լաւագոյն յանձնաժողովը , կ'ըսէ  
Սրբրձըն , երեք անդամէ կը բաղկանայ ,  
որոյ մին հիւանդ ըլլալով նիստէն բա-  
ցակայ է , երկրորդն ալ քաղաքէն բա-  
ցակայ գտնուելով չէ կարող ներկայա-  
նալ , արդ՝ գու մնաս առանձին , ուստի  
դու կատարէ գործդ :

Աղօթէ իրը թէ ամէն բան Աստուծմէ  
է կախեալ , աշխատէ իրը թէ ամէն բան  
քեզմէ է կախեալ :

Աշխատութիւնն առանց աղօթքի գե-

բութիւն է, աղօթք առանց աշխատանքի մուրացկանութիւն է :

Աղօթք երկինքէն բերէ օրհնութիւն, աշխատութիւն երկրէն հանէ օրհնութիւն : Աղօթք կառք է երկնային, աշխատութիւն կառք երկրային, երկուքով ի միասին կրնանք մեր տուն օրհնութիւն բերել :

Կե՛ր ու խմէ՛, յաւէտ քիչ քան շատ :

Ուուսական առած մը կ'ըսէ՛, երբ առնէդ դուրս կ'ելես մէկ անգամ աղօթէ՛, երբ ծօվն ելլես երկու անգամ, իսկ երբ խորանին առջին կանգնիս պըսակուելու համար՝ երեք անգամ աղօթէ՛ :

Կշիւդ ուղի՞ղ է, հարցուց թիշկը գեղագործին, քանզի ամենափոքր սխալ մը կրնայ առողջարար գեղը մահացությնի փոխել, Լարդ ուղի՞ղ է, հարցուց ճարտարապետը որմնադիրին, քանզի հիման փոքրիկ ծառութիւն կրնայ ամբողջ էնքը յերկիր տապալել :

Լօքմանի հարցուցին թէ ո՞ւր սորված է քալաքավարութիւնը : Պատասխանեց . իստ կոչտ եւ անքաղաքավար մարդոցմէ, անոնց ճիշտ հակառակ ընթացք բանելով :

Եկեղեցականք ամենէն երկար կ'ապրին, իսկ բժիշկներն ամենէն կարձկեանք կ'ունենան :

Յաջողութիւն՝ օրհնութիւն կ'ըլլայ բարի մարդոց, իսկ չարերուն անէծք :

Խօսքիդ զգոյշ եղիր, քանզի զայն բերնէդ արձակելէ ետեւ 12 ձի չեն կարող զայն նորէն ետ քաշել :

Որդան կարմիրի հետ խաղացողին ձեռքը կարմիր կ'ըլլայ, ածուխի հետ խաղացողինը սեւ, վատ ընկերներու հետ կենակցողը կ'ըլլայ վատ, չար ընկերակցութիւնք կ'ապականեն բարի վարք, ըսէ որոյ հետ ընկերանալդ եւ ըսեմ քեզի ինչպիսի մարդ ըլլալդ :

Աղքատն ծոմ պահէ , զի չունի կերակուր , հարուստը զի չունի ախորժակ , մի սուր կծծին . զի բաղձայ խնայել դրամին , ագան զի բաղձայ մեծկակ պատառին , կեղծաւորն որ այսպէս գուցէ սուրբ համարուի , իսկ բարին որպէսզի յանցանք ներուի :

Երիտասարդներն յիշելու են՝ թէ մարդ ըլլալու համար մկանական ոյժէ աւելի բան պէտք է :

Թէ խոշորութիւնը մեծութիւն չէ :  
Թէ կորով պէտք է համբերելու համար :

Թէ անձնասիրութիւնը մարդուս ամենէն անվայել բանն է աշխարհի վրայ :

Թէ մարդու մը ազնուականութիւնն աւելի կը յայտնուի յարգանքէն ու հոգածութենէն զոր կը ցուցնէ մօր եւ քրոջ՝ քան տեսակէն այն փողկապին զոր կը կրէ ինք :

Թէ բարեպաշտութիւնը ցուցամոլութիւն չէ :

Թէ միակ լման մարդը սուրբ մարդն է :  
Թէ բազմութեան հետեւիլը տկարու-

թեան խոստովանութիւն է :

Թէ փողոցի անկիւնները խեղճ վարժարաններ են :

Թէ մէկ իրական բարեկամը կ'արժէ քսան հասարակ ծանօթ :

Թէ բոլոր զօրութեամբ ազնիւ ըլլալէ եւ ազնուութիւն ցուցնելէ վախնալը ամենէն մեծ երկչոտութիւնն է :

Թէ մարդ , ինքինք մարդ ընելու որշափ կանուի ձեռնարկէ , երբեք կանուի ձեռնարկած ըլլար :

Թէ ինչ որ այսօր ուղեղին մէջ կը դրուի՝ տասը տարի ետքը զուրս պիտի հանուի :

Թէ միակ մարդկութիւնը զոր կ'արժէ ունենալ՝ Որդւոյ Մարդոյ կեանքով ցուցուածն է :

Աստուծոյ խոստ անց վստահելով մարդ մը . այս՝ տղայ մը իսկ ուրախ զուարթ կ'ըլլայ :

Նպատակդ լաւ միտք առ , պղպչակներով գոհ մի ըլլար , որ շուտ կը պայթին , ան բանին ետեւէն եղիր որ կըր-

նաս պահել , եւ որ արժան է պահուելու :

Կրից մէկ գործադրութիւնն ցկեանս հառաջանք կը պատճառէ :

Բարեգործ եղիր , մէկ բարիքի թող յաջորդէ միւսը մինչեւ կենաց վերջ . քիչ քիչ յարատեւութեամբ մեծ դեղ մը կըլլայ , եւ կրկնուած բարիքներ քարէ սրտերն իսկ կը կակզցունեն :

Ինչ որ կ'ընես յօժարութեամբ ըրէ , տղան որ ծեծ ուտելով կը սորվի դասը , բնաւ բան չպիտի սորվի :

Հանէ բաճկոնդ , սօթաէ թեւերդ , երդէ քանի որ գործես — ահա տիպար գործաւոր :

Մարդ մը որ ամուսնանալ կուզէ , ցուցամատին վրայ կը կրէ մատանին , խօսեցեալն միջնամատին , ամուսնացեալը մատնեմատին , եւ նա որ մատզիր չէ ամուսնանալ վերջին մատին վրայ :

Հպարտութիւնն անկեզծ է , պարծենկուառթիւնն է որ կը սաէ :

Պարծենկուառթիւնը զմարդ ինքինքէն գոհ կ'ընէ , հպարտութիւնը կը դժուարացնէ զայդ :

Խօսողը կը ցանէ . մաիկ ընողը կը քաղէ :

Մարդ որչափ քիչ խելք ունենայ , այնչափ աւելի պարծենկուա կ'ըլլայ :

Կրթութիւնը գանձ մ'է , անոր բանալին աշխատութիւնը :

Տգէտ երեւալու երկիւզը ամենէն մեծ արգելքն է տգէտ ըլլալէ դադարելու :

Բոլոր գեղեցիկ տաղանդները եթէ միացնէս , առաքինութիւնն մը չեն արժեր :

Կորսուած օրուան մը տեղը երբէք չպիտի լեցուի :

Առաքինութեան ճամբան տաժանելի  
է յաճախ , բայց միշտ երջանկութիւն  
կ'առաջնորդէ :

Աշխատութեան պատուղը ամենէն հա-  
մեզն է պատուղներուն մէջ :

Երբ քու տանիքդ ապակիէ շինուած  
է , պէտք չէ կոտրածես զրացւոյդ կըզ-  
մինարները :

Հանգարտ կեանքը եւ անգործ կեան-  
քը իրարմէ շատ տարբեր բաներ են :

Բան մը գիտնալը փառք մը , իսկ  
սորվիլ չուզելը ամօթ մ'է :

Էաւ է անգործ մեղու քան ժիր պի-  
ծակ :



### ԱՐԺԷՔ ՕՏԱՐ ԴՐԱՄԱՅ

Յայտնի է թէ զանազան ազգերու  
զրամներուն յարաբերական արժէքն ան-  
դադար փոփոխութիւն կը կըէ , սակայն  
ի ստորեւ զրուած ցուցակը կընայ ընդ-  
հանուր գաղափար մը տալ այդ դրամ-  
ներուն արժէքին նկատմամբ , որ ցուց-  
ուած է Օսմ. արծաթ դահեկանով :

Արժուն Դահ.

Ամերիկեան տոլար (100 սէնթ)	· · ·	24
Անգլիական ոսկի (20 շիլին)	· · ·	120
Աւստրիական ֆիորին (100 քրէոյցէր)	·	40
Գերմանական մարք (100 գէննիկ)	·	6
Եղիպտական ոսկի (100 դահեկան)	·	122
Հնդկական ոսուփի (16 աննա)	· · ·	11 <sup>1</sup> / <sub>4</sub>
Պարսկական դրան (20 շահի)	· · ·	3 <sup>1</sup> / <sub>2</sub>
Ռուսական ոսուպլ (100 քոփէր)	· · ·	19*
Ֆրանսական ֆրանք (100 սանթիմ)	·	4 <sup>3</sup> / <sub>4</sub>

\*Ոսուփի մէջ սովորաբար գործածուած դրամն  
10

Խտալական լիրէն, սպանիական փէսէսէթան, պեղմիական եւ զուլցերական ֆրանքը, ռումանական լէյը, հելլենական տրախոմին, սերպիական տինարը եւ պուլիարական լէվը ֆրանսական ֆրանքին ճիշդ հաւասար արժէք ունին:



Է Թղթաղբամ, որոյ արժէքը բաւական պակաս է այս նշանակեալ արժէքն: Թղթաղբամ ռուսպիի արժէքն է իրը 12 դահեկան:

## ԿԵԱՆՔ ՏԵՐ ՅԻՍՈՒՄԻ

ԸՍՏ ԶՈՐԻՑ ՌԻԵՏԱՐԱՆԱՑ

ՊՄ.ՏԻ.ԵՐԱ.ԶՍ.ՌԴ

Գ. Ի. Ե. Պ.

Գ. ՊԱ.ՂՏԱՍԱՐԵԱՆ

Հասկնալի, աշխարհաբարով մը տաղաչափուած այս մատենիկը, որ կը պարզէ Յիսուսի կեանքը Աւետարանի ոգիին համաձայն, իր բարոյալից յօրինուած ով ամենէն մաքուր հաճոյքը կը պատճառէ լնթերցողին եւ իրը այդ ջերմապէս կը յանձնարոի ամէն կարգի անհատի:

Գին զեղչեալ Յ դրւ.

Կեդրոնատեղին և Պակենց Գրատունը  
Կ. Պոլիս, Զագմագալշար, Թիւ 20

Կ Ե Ա Ն Ք

Ս Ր Բ Ո Ց Ա Ռ Ա Ք Ե Լ Ո Ց

Պ Ա Տ Կ Ե Բ Ծ Զ Ո Ր Դ

Գրեց, Պ. Պատբասարեան

Սոյն մատենիկն եւս հասկնալի աշխարհաբարով մը տաղաջափուած, Գործք առաքելոցի համաձայն կը պարզէ Սոաքելոց կեանքն եւ շարակարգութեամբ կը պատմէ անոնց հրաշքները, քարոզութիւնները, ձամբորդութիւնները ու նեղութիւնները :

Գին 5 դրու

Կեդրոնատեղին և Պաշենց Գրատունը

ՄԱՅՐԻԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ՏՈՒԹ. Ա. Է. ՍԵԼԼ

Ազատ բարզմանութիւն ի գաղղիերէն  
գ. ՊԱԼՏԱՍԱՐԵԱՆ

Նորածին մանկութեան նուիրուածովահիկ կանոններու խատացում մ'է գրքոյիս, որ իր սկիզբն ունի ձեռնհասքչկի մը փայլուն վկայութիւնը շահեկան պարունակութեանն համար, ուրի մէջ այլոց ըստուած է. «Անփորձ մայրիկի մը եւ անուս զայեակի մը համար անզուգական ընկեր մը, անհամեմատելի օգնական մը պիտի ըլլայ սա հատուրիկը, իսկ բժիշկ եւ կամ կարող դայեակ չի գտնուած տեղերուն համար՝ փրկող ձեռք մը պարզապէս :

Գին զեղչեալ 2 դր.

Կեդրոնատեղին և Պաշենց Գրատունը

## ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԵԼՈՅ

9 1 b 3

## Յակոբ Մատթեոսի

## Բ. Տալագրութիւն — էջ 400

Բարոյական եւ խմաստասիրական  
հաստատուն սկզբունքներ կարող գրչի  
մը հանդիպած են այս ընափր գործին  
մէջ, որ զնահատուած է բարձրաստի-  
ճան Հայ կղերէն եւ ազգային նշանա-  
ւոր գրագէտներէ :

Գիրքը ձօնուած է հեղինակին վա-  
ղամեռիկ գստեր, Օր. Պայծառի, ո-  
րուն կենդանագիրն եւ հակիրճ կեն-  
սագըռութիւնը դրուած են ԿԸ.Քին սկիզբը:

Գիր 12 դրուժ

Կեղրոնատեղին է Հեղինակին վաճառատունը, Թիւ 27, Ֆինձանձըլար Եօգուշու կ. Պոյլս : Կը գտնուի Պ. Պաշենց հետ բողոք Հայ գրավճառաց քով:

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՌԱԿԵԱՆ

U. S. 2 b n t

# ԲԱՐԱԳԻՐՔ

## ՀԱՅԱՍՏԱՆ - Պ.Ա.Պ.ԴԻՄԵՐԻՆ

ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ (Երկրագ)

ԱՐԴՅԱՆԻ ԵՎ ՑԱԽԱԼԵԱՆԻ

*Աւելի ժամ 50,000 բան, ոճ, եւայլն*

Բազմաշխատ հեղինակին սոյն օդաւա-  
կար գործը կը բովանդակէ հին եւ նոր  
հայերէն զրեթէ բոլոր բառերէն զատ :  
Դիտական եւ արուեստական բազմաթիւ-  
բառեր, ոճեր եւ աստցուածներ հան-  
դերձ իրենց Գաղղ. թարգմանութեամբն:  
Բարից զանազան առումները բացատ-  
րուած են բազմաթիւ օրինակօք : Սոյն  
խնամեալ եւ յոյժ կարեւոր գործը ճշմա-

ըիտ առաջնորդ կրնայ ըլլալ ուսանող-  
ներու ի Գաղղիերէն լեզուի ինչպէս  
նաեւ սոյն լեզուի ուսման պարապողնե-  
րու առ հասարակ :

Դործոյս վերջը աւելցուած է Գաղ-  
ղիերէն լեզուի անկանոն եւ պակասա-  
ւոր բայից պարզ ժամանակներու մէկ  
ցանկն հանդերձ սիմանի եւ կարեւոր  
ծանօթութեամբք, որք մեծ ապէս սիմանի  
օգնեն ուսանողին :

Էջ իրր 1000 . ընտիր թղթի վրայ  
մաքուր եւ յստակ տպագրութեամբ եւ  
զօրաւոր կազմով, որք բառարանի մը  
համար գրեթէ նոյնքան դնահատելի են  
որքան պարունակութիւնը :

Գինն է, զօրաւոր քառթօնէ կազմ  
25, լաթակազմ 27, կիսակազմի 32 դր :

Կեդրոնատեղին է Յ. Մատթեոսեան  
Վաճառատունը, թիւ 27, Ֆինճանձրլար  
Եօգուշու Կ. Պոլիս : Կը գտնուի Պ. Պա-  
շենցի եւ բոլոր հայ գրավաճառաց քով :

## ԱՐՏԻՒՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԻ

Թարգ. Յուսիկ Վ. Էսմիւեան

Եւրոպական ընտրելագոյն դասա-  
գրգերէն մին է սա՝ որ հասկնալի աշ-  
խարհաբարով մը թարգմանուած կ'ա-  
ւանդէ առանին տնտեսութեան տար-  
րական դասեր եւ իրր այս՝ կը յանձնուի  
աեւչութեանց եւ ուսանողաց ուշադրու-  
թեան :

Գին Յ<sup>1/2</sup>, դրուց

Կեդրոնատեղին է Յ. Մատթեոսեան  
վաճառատունը : Կը գտնուի Պ. Պաշենց  
եւ այլ գրավաճառաց քով :

## ՕՐԵՆՔՆԵՐՈՒ ՀԱԽԱԲՈՅՑ

Թարգմանիչ, Ա. Պէկեան

### ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

### 3. ՄԱՏԹԷՌՈՍԵԱՆ

Խւրաքանչիւր էջի մէկ կողմը Հայատառ թուրքերէն բնադիրը, եւ միւս կողմը Հայերէն թարգմանութեամբ տետր առ տետր հրատարակուած.

- Տետր Ա. — Տասանորդի նոր օրէնքը.
- » Բ. — Կանոնագիր Երկրագործական զրամատան.
- » Գ. — Դրոշմատուրքի օրէնքը.
- » Դ. — Կանոնագիր Ըէժիի :

Գին իւրաքանչիւր տեսրի 2<sup>1/2</sup> դր.

Կեդրոնատեղին է Յ. Մատրեռսեան վաճառատունը, կը գտնուի Պ. Պալենց եւ այլ գրավաճառաց քովլ :

## ՑԱՆԿ ՆԻՒԹՈՅ

Տօմարական գիտելիք	2
Խաւարմանը	7
Համաստագրութիւն	8
Ազիւսակ շարժական մասնց աւուրց	10
Օրացոյց	15

### ՅԱՒԵԼՈՒԱՄ

Օսմանեան Կայսրութիւն	87
Աւագանի Կայսերական Պալատան	90
Նախարարք Բ. Դրան	91
Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքին	92
Թղթատարական նոր կանոնագիր Օսմ. Պետութեան	94
Հեռագրական կանոնագիր	96

### Հոգեւոր իշխանութիւնն

Հայրապետութիւն Հայոց	79
Պատրիարքութիւն Երուսաղէմի	97
» Կոստանդնուպոլսոյ	98

Հոռվմէական	Հայ հասարակութիւն	100
Բողոքական	Ժողովուրդ Թուրբիոյ	102
<b>Առողջապահական</b>		
Ուկի խրաներ	.	107
Երկայնակեցութեան նշանները	.	110
Թոքերուն զիճակին սատեզել	.	114
Անքունութեան դարման	.	115
Կապուտ հազին տեւողութիւնը	.	116
Կուլ տրուած տղրուին հանել	.	117
Այրածի, խաշածի դարման	.	117
Գլուխը բարձր պառկելու վնասները	.	118
Փողացափ դարման	.	118
Երկար կեանք ունենալու օրէնքներ	.	118
Լողալու ատեն վտանգէ զերծ ըլլալ	.	118
Զափազանց ուտելուն վնասները	.	119
Հարբուխի ատեն տաք չուր	.	120
Զուր իմել	.	121
Հանճարեղ բաղդատութիւն մը	.	129
Արկածներու ատեն	.	132
Ստուզել թէ սենեակ մը խոնաւ է	.	137
Լոգանիք եւ իր յարաբերութիւնը խոչա-		
փողի ախտերուն հետ	.	138
Ակռաներուն պահպանութիւնը	.	144
Անձիդ հոգ տար	.	147

Տղայոց ակռաներուն խնամք	.	148
Դիմու ցաւ	.	151
Ականչները ժակել օղ ղնելու համար	.	154
<b>Ընտանեկան</b>		
Շիշերու խցանները հանել	.	157
Մորթէ ձեռնոցները մաքրել	.	157
Ցեցերը չնչել	.	157
Գեղեցկութիւնը պահպանել	.	158
Դաները բաց պահելու կերպ	.	158
Ճանճերը չնչել	.	158
Սպիտակ ձեռքեր	.	158
Մետաքսեղէները մաքրել	.	159
Կանդեղի պատրոցգ	.	159
Զուրի անթափանց կօշիկներ	.	159
Ապակիները մաքրել	.	159
<b>Մեր խոհանոցը</b>		
Տաներեք տեսակ կերակուր եւ ըմպելի		
շինելու կանան	.	160
<b>Հարցերու պատախաններ</b>		
Որոտման ատեն բնչ լնելու է	.	165
Հիւանդութենէ զերծ մնալ	.	165
Մազերուն թափիլլ արգիլել	.	166
Շունէ խածուածի դարման	.	166

Կատուի հանկածը դարմանել . . . . .	167
Մեղուէ խայթուողը բուժել . . . . .	167
Զկան փուշ կոկորդին մէջ . . . . .	167
Քիթին, ականչին մէջ մտած օտար նիւթը հանել . . . . .	168
Զելած մատնին հանելու դիւրին միջոց . . . . .	168
Ծաղկեփունչ մը մէկ ամիս թարմ պահել . . . . .	169
Մուկերէն ազատելու կերպը . . . . .	169
Անզլիական խմորեղէն մը . . . . .	170
Յօդացաւի դարման . . . . .	170
Վախի պատճառաւ մահ . . . . .	171
Քիթէն հոսած արիւնը դադրեցնել . . . . .	171
Կտրուածի եւ այլածի դարման . . . . .	172
Բռնկած հանդերձը մարել . . . . .	173
Հարուածէ յառաջ եկած անւնշանի դարման . . . . .	173
Գետնախնձորէ կարկանդակ . . . . .	173
Հազի դարման . . . . .	173
Վէրքի դեղ . . . . .	174
Առանին մարմնամարզ . . . . .	174
Քայլախալներուն տուած դասը . . . . .	175
Մոմի բիծերը հանել . . . . .	176
Վարդի իւղ շինել . . . . .	176
Թէյի պատրաստութիւն . . . . .	177
Ժամացոյցի զործածութիւն . . . . .	178
Ապակիէ եւ թղթէ զգեստ . . . . .	181

Հովանոցի պահպանութիւն . . . . .	182
Մելանի բազարութիւններ . . . . .	182
<b>Պատմական</b>	
Կառախումբին տակ . . . . .	185
Ի լոյս պիտի զայ . . . . .	191
Սողոմոննեան վիխո մը . . . . .	195
Ի՞նչ հարկ եկեղեցի երթալ . . . . .	200
Հանդիին երազը . . . . .	201
Կատաղի շուն մը . . . . .	201
Օդիի երեկոյեան զուարճութիւն . . . . .	202
Անձը անիծող . . . . .	204
Հայոցիչ երախան . . . . .	205
Իմին խայթը . . . . .	206
Վոթէոի մահը . . . . .	206
Չեմ կրնար տեսնել . . . . .	207
Դէմքատուկւ . . . . .	207
Փառք բեղ Ասուուած եկեղեցի կը տեսնեմ . . . . .	208
Ազ էէն ու օձը . . . . .	209
Սողոմոնի վրայ աւանդավէպ մը . . . . .	211
Հարսանեկան վարդենին . . . . .	213
Ուէոլի ինչպէս արքայի արքունութիւնը քարոզը . . . . .	216
Մեզ ազմունքները գրաւութիւն . . . . .	217
Օրէնոցէն եկամ ՏԱՐԱՆԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ	218

ՀԱՅՀ-ССРА

Ա. ՄԱԿԻՆ

Ա. ՄԱԿԻՆ

Ա. ՄԱԿԻՆ

**Սամուսնացեալիք եւ Ս.մուսնացողիք**

Վաթսուն հրահանգ երջանիկ ամուսնու-  
թիւն մը կնբելու եւ ցլեանս պահելու  
համար . . . . . 220

**Մ'եւ սիրասուն զաւակունիք**

Երեսուն հրահանգ մեր զաւակներ վախան  
ծնողաց փշեայ պատկ, անոնց փառաց  
թազն լնելու . . . . . 238

**Ճօմարիս մարդ**

Քառասուն հրահանգ ճշմարիտ մարդ եւ  
ճշմարիտ քրիստոնեայ ըլլալու համար 249


**Զուարենալիք**

Երեսուն՝ համառօտ պատմութիւններ . . . . . 265

**Բեկորներ**

Ութսուն իմաստալից առածք . . . . . 277

**Արժէք օտար դրամո.**



6442

2013

«Ազգային գրադարան



NL0031978

ՆՈՒՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՈՐԲԱՌՈՅԻ